



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.


About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

B

1,211,604






ԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆ Ա.



Կըկասիրութիւն
ԿԱՐԱՊԵՏ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏԻ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1908





Karapet Քոչկոյս
Hayots Քօշհետսոյ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մ Ա Ս Ն Ա.



ԵՐԿՐՈՒԹԻՒՆ
ԿԱՐԱՊԵՏ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏԻ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1908

Grad

EREN

975

BUHR

ՄԻ ՔՅՆԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒԿԱՍԽՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Տարիներ առաջ, երբ ես յանձն առայ Հայոց եկեղեցւոյ պատմութիւն դասաւանդել Մ. Աթոռի Ճեմարանում, իմ հասկացած պատմութեան համար ձեռնարկ չկար. պէտք էր նորը կազմել: Անցեալ դարում լոյս տեսած թէ ազգային ընդհանուր և թէ եկեղեցական պատմութեան բոլոր ձեռնարկների մայրը Չամչեանի եռահատոր պատմութիւնն է. նորանից են փոխ առնում բոլորեքեան իրենց հայեացքների մեծ մասը պատմական աղբիւրների, անցքերի, անձնաւուրութիւնների մասին, նորա ընդունած ժամանակագրութիւնն են գործ դնում, յաճախ նորա միտումաւոր բացատրութիւններին և արհեստական պատմառաբանութեանը ենթարկուում: Սակայն Չամչեանից յետոյ պատմագիտութիւնը հսկայական յառաջադիմութիւն է գործել և թէպէտ մեր պատմութեան համեմատաբար քիչ բաժին է ընկնում այդ յառաջադիմութիւնից, ներելի չէ այնուամենայնիւ անահեանի եղածը և շարունակել ուսուցանել այնպիսի բաներ, որոնք արդին ներքուած են նորագիւա աղբիւրների և նոր ուսումնասիրութիւնների չնորհիւ, տալ գաղափարներ, որոնք ժամանակակից ըմբռնումների հետ չեն հաշտուում: Պէտք էր ուրեմն պատմութեան բուն նախնական աղբիւրներին դառնալ, նոցա վերայ եղած ուսումնասիրութիւններն ի նկատի առնել, ամեն ինչ ի նորոյ քննել և ստուգել: Քանի որ այդ աշխատութիւնը կատարուում էր գասերի հետ զուգընթացաբար, իւր ազդեցութիւնը կթողնէր այն բնականօրէն դասաւանդութեան եղանակի վերայ. ես ինձ իրաւունք չէի համարում աւանդականի փոխարէն իմ եղրակացութիւնները դնել աշակերտների առաջ, առանց բացատրելու, թէ ինչի վերայ են հիմուած սոքա: Այդպիսով դասաւանդութիւնը ստանում էր քննադատական-վիճական բնաւորութիւն. պատմելիք ես կամայ ակամայ ունկնդիրների միտքը տանում ।

այն ճանապարհով, որով ինքս գնացել էի՝ որոշ արդիւ համակու համար. շարունակ աչքի առաջ ունէի սխալ : զեկութիւններ ու տեսութիւններ, որոնց դէմ վիճում, և քում և տեղը նորն էի դնում: Իմ պատմածներն ակերտները զրի առան, ևս հարեւանցի կերպով սրբազր նոցա գրածը, և այդպէս կազմուեցան տեսարակներ, որ յետարէցտարի արտագրուում էին, և մինչև վերջին տարին բիշներն ևս այդ տետրակների վերայ էին աւանդում Հսկեղեցւոյ Պատմութիւնը Ճեմարանում:

Անցեալ ուսումնական տարուայ սկզբին ձեմար վարչութիւնը՝ կամենալով ազատել աշակերտներին տեսորներն արտագրելու ծանր աշխատութիւնից, առաջարկեց տպագրութեան տալ: Սիրով յանձն առայ, բայց չունկատեցի, որ կարելի չէր եղած տետրակները նոյնութեամ փոքրիկ փոփոխութիւններով տպարան ուղարկել. պէտք մեծ մասը փոխել, կամ նորից գրել: Ինձ համար պէտք հարկաւ, որ իսկական մտքով դասագիրք կազմելիս ընոր կլինէր հանել բոլոր քննադատական մասերը, կողմն դատողութիւններն ու կարծիքները, և որոշ իրողութիւն ու թուեր ներկայացնել աշակերտին. սակայն այդ դէպէ ուսուցչի կամ ընթերցով հասարակութեան ձեռքում պէտք է գտնուէր նախօրօք մի ուրիշ զիրք, որի մէջ պարզանուած ու պատճառաբանուած լինէր հանգամանօրէն, ինչ հիմունքներով աւանդական պատմուածքի և տեսութեամ փոխարէն նորն է տրուում այժմ. ուրիշ խօսքով պէտք առաջ մի ընդարձակ բուն քննադատական պատմուխ գրել, մանրակրկիտ հետազօտութիւնների ու բացատրիւնների մէջ մտնել, նախկին հեղինակների վիճելի կ ծիքները կէտ առ կէտ հերքել, անթիւ ծանօթութիւն գնել են,—մի մեծ աշխատութիւն, որի պահանջած ժանակն ու յտրմարութիւնները չունէի: Ստիպուած եղայ րից միջին ճանապարհ ընտրել ու նիւթի հետ ատալ այն ցատրութիւնները, որոնք իւրաքանչիւր իրողութեան չափով հաւասարի և ստուգուած լինելը որոշում են: Դժբար իմ անակնկալ կերպով նոր պաշտօնի կոչուելն Աթոռից հեռանալը արգելք եղան՝ սկսած գործը չեղավ առաջ տանելու և մինչև վերջ հասցնելու:

ո շարունակ ես այլ ես նորանով զբաղուել չկարողացայ, կ յետոյ, յանձն առած պարտքից մասամբ թեթևանալու մար, հատուած առ հատուած տպագրութեան նիւթ ուրկելով հեռուից՝ այսպիսի աշխատութեան բոլորովին նպաստ պայմաններում, հաղիւ հնարաւորութիւն ունեցայ նշափը գլուխ հանելու, որ ահա վստահանում եմ հրապարկի վերայ դնել:

Եկեղեցական պատմութեան դասագրքի մեծ կարիք յ այժմ, թէ մեր դպրոցներում և թէ պետական միջնակարգ որժարաններում գործ դնելու համար։ Այդ կարիքին բարկանութիւն տալու յաւակնութիւն չունի ներկայ երկասիւթիւնը, որ բացի յիշեալ թերութիւններն ունենալուց և սակատար լինելուց՝ տպուած է սակաւաթիւ օրինակներ։ Դուցէ մեր կրօնուսոյցներից շատերը կկամւնային, որ սար բոլոր պակասութիւններով մէկտեղ ամբողջացած լինէր լրիւ դասընթացի համար նիւթ մատակարէր իրենց։ Սակայն դ պահանջի լրացումը կամայ ակամայ պէտք է թողնենք ելի յարմար ժամանակի, երբ իմ պաշտօնն ու միշավայրը յլ կտան թերես սորա շարունակութեան փոխարէն վերև ինարկած լուրջ և բազմակողմանի աշխատութեան ձեռնարկու և ամբողջ պատմութիւնը նորից աւելի կատարեալ ով գրի առնելու։ Այս հրատարակութիւնը թող համարուի քեւ մի տպագրեալ դասարանական տետրակ, իբրև մասւոր փորձ մեր պատմութեան մի հատուածը լուսաբանեւ, իբրև ժամանակաւոր օժանդակութիւն դպրոցական գործն։ Այդպիսով, յոյս ունիմ, նա աննպատակ չի անցնի և բ որոշ սահմանափակ դերը կկատարէ։

Կ. Ճ. Պ.

19 յուլիսի 1908 թ.

Քաւրիդ.





ՆԵՐԱԾՈՒՅԹԻ ԽՈՐԱԿԱՆ ՎԵՐԱԿՐՈՒՅԹ

Յիսուս Քրիստոս Հքէից ժողովրդեան առջև ելաւ սրեւ Աստուծոյ արքայութեան քարոզիչ: Դարեր շարուակ այդ ժողովուրդն ապրել էր այն համոզմունքով, որ ըկնքի ու երկրի Արարիչն աւանձին խնամք ունի իւր վեւայ: որ ինքը նախահայրելի և մարդարէների միջոցաւ ցուռմներ էր ընդունել նորանից, թէ ինչպէս պէտք է արանավայել պաշտօն մատուցանել նորան և ինչպէս կենաղավարել՝ նորան հաճոյ լինելու համար: ընդունել էր ոստումներ, թէ մի օր պէտք է յայտնուի նա կատանալ փառօք և զօրութեամբ, ամէն չարիք ու ամէն հաւառակութիւն աստուածային ոուրը կամքի դէմ պէտք է որատակէ, և այսպէս՝ անսահման իշխանութիւն տարածենի երկի վերայ, ըստ ամենայնի երանաւէտ կեանք յատրաստէ Աստուծոյ ժողովրդեան համար: Յիսուս քառում էր ահա, որ այդ օրը եկել է և իւր հրապարակ ընելովն արդէն Աստուծոյ թագաւորութիւնը հաստատուել է: բայց մի թագաւորութիւն, որ այս աշխարհի բագաւորութիւնների նման չէ՝ մարդոց նիւթական ու արմանաւոր կեանքի վերայ չի տարածում իւր իշխանութիւնը, այլ ներքին հոգեւոր կեանքի վերայ: ուստի նորանք մտնելու ու նորա բարեխները վայելելու համար Աստուծոյ անուանական երկրպագու լինելը բաւական չէ, յլ հսգւով և ծշմարտութեամբ պէտք է երկրպագել:

Այն անձինք, որոնց վերայ Յիսուսի քարոզութիւնը ապաւորութիւն գործեց և որոնք հետզհետէ նորա շուրջը ոմբուեցան՝ մինչև նորա մահը գեռ մի տեսակ սպասուական վիճակի մէջ էին: աւանդական տեսութիւններն ու արգային ցանկութիւնները այնքան խոր արմատ էին ոնել նոցա մէջ, որ իրենց Վարդապետի հակառակ աղաքարտութիւնները լսելով, նորա իւրաքանչիւր խօսք և քայլափոխի մէջ դէպի վերինն ու հոգեւորը, ունչիւր

բոյականն ու երկնայինը միայն ձգաելու յորդոր գտնելով
հանգերձ, աչք ունէին այնու ամենայնիւ, թէ Աստուծոց
թագաւորութիւնը արտաքին փառքով ու շուքով էլ Կո-
յայտնուի, և ինչպէս երկնաւոր Վարդապետը իշխող զեր-
կունենայ, այնպէս և նորա տմենամօտ աշակերտները ա-
մենաբարձր աւեղերը կստանան այդաեզ: Յիսուսի մահից
յետոյ իսկ այդ ակնկալութիւնը երկար ժամանակ կեն-
դանի մնաց նորա հետեւզների մէջ, որոնցից շատերի
անձկանօք սպասում էին, թէ ահա շուտով յարուցեալ
Քրիստո կդայ ու ամէն ինչ իւր յաւիտենական նպատակ
համեմատ կերպարանափոխէ: աւստի և կառեր չեն
զգում իրերի ներկայ դրութեանը յարմարուելու, իրենց
համար կենցաղավարութեան տեսկան պայմաններ տք-
շելու և յարաքերութեանց հաստատուն կարգեր ուսմա-
նելու:

Սակայն եղբայրական սիրոյ գաղափարը, որ Յիսուսի
հետեւզների փոխադարձ յարտքերութեանց համար առաջ-
նորդող ոկզբունք պիտի լինէր, ոկզբից և եթ զրդում չէ
նոցա՝ մօտենալ միմեանց, հոգս, ուրախութիւն, ներ-
թիւն միմեանց մէջ բաժանել, մի ընտանիք կազմնլ: Ա
աւետարանի ճշմարտութիւնը լիովին ըմբռնել էր՝ չե-
կարող բաւականանալ անհատական երանութեան ճգառու-
մով, այլ պէտք է փափագէր և աշխատէր, որ, եթէ հայր
է՝ լոլոր մարդիկ նոյն ճշմարտութիւնը ճանաչեն և դէմք
յուրիշենական կեանք առաջնորդուին: Իոկ երբ Յիսուսի
աշակերտները, ս. Հոգւով զօրացած՝ քարոզելու երան, թէ
Հրէից ժողովուրդը զարհուրելի կերպով մեղանչել էր Աս-
տուծոյ և Աստուծոյ կողմից իւր հոյցերին եղած յայտ-
նութեանց դէմ՝ խաչ հանելով Յիսուսին. թէ Յիսուս գե-
րեզմանի մէջ չէր մնացել, այլ յարութիւն առնելով ապա-
ցուցել էր, որ ինքն է Աստուծոյ Որդին, նախահայրերին
խոստացուած ճշմարիտ Մեսիան. թէ շարչարուելով ա-
խաչուելով նա ոչ միայն իւր փառքից ոչինչ չէր հար-
ցրել, այլ ընդհատկառակն ամենայն լրութեամբ կատարու-
էր Երկնաւոր Հօր կամքը, ամրող մարդկութեան համա-
փրկութեան ճանապարհ բաց արել և աւելի մէծ տիրա-
կան պատուի արժանացել. թէ այնուհետև Աստուծու

լովուրգ պիտի կադմէին և նորա խոստացած քարերը վայելէին հրէտնեցի փախարէն թիւուսի հետեօջնեցը որու յարութեան հաւատացազնեցը.—այդ քարոզումն աբդէն, կամ Յաքութեալի համար վկայելու, մաքալու և անձը պնեցու կարերը, պիտք է ստիպէր թիւուսի ռեպէնեցին՝ խմբութի, աւելի աերտ կապէրով կապուիլ Ռուսնց հետ և շրջապատից որոշ յատկանիշնեցով դաշնութագ մի համայնք կապմակերպիլ:

Մի համայնք էք զա, որ համոզուած էք, թէ Նրկնաւ Վարդապէտը կենդանի է և, ուր ժազովուում են մի նի հոգի նորա անունով՝ յայտնուում է նոցա մէջ, ուռնակում պնէրեւութապէս ապրել նոցա հետ, գեղաբել նոցս հոգեար կենակը և գեապի յառկանական ատակն առաջնարդել։ Նա աշխատում էր իւր ստիճն մի րժուածքը և իւր հետևողների իւրաքանչիւր քայլաւիք համաձայնեցնել Երկնաւոր Վարդապէտի տուած սոււերներին՝ նորա քարոզած աւետարանսկան ճշմարտիւննեցի համեմատ կարդաւորել կեանքն իւր ըովոր ևոյթնեցով։ Նա հետամուա էր սրբութեամբ պահպան նորու թոզած նույիրական և խորհրդաւոր յիշակները՝ քաբացութեամբ, գրով, այլ և այլ արարադուննեցով արծարծելու և տպաւորիչ գարձնեցու այդ շատակները. պարտաւորութիւն էր զշում ի սիիւան խարհնի աւարածելու աւետարանի քարոզը, ամբազ դրկաւթիւնն իւր մէջ առնելու և դարձնեցու Աստու ծայ դովուրդ։ Եւ անա այդ համայնքը կոչուաւում է Քայլաւուսի եղեցի։ Իսկ նկարսպարել, թէ նա ինչպէ՞ս առնեց և ինչպէ՞ս լընդացաւ նաւաճել հետացհետէ աշխարհը. ի՞նչ արդեւը քաղթեց, ի՞նչ փորեւութիւնների գիմացաւ և ի՞նչ միներ գործ գեեց. Ընապէս կազմակերպուեցաւ և իւր ովագութեան քրյութեան քննիչում ինչպիսի՛ հարաւաթիւններ ու նորանաք եթեւոյթներ հանգէս քերաւ. ի՞նչ գափառութիւն յառաջացը և ի՞նչ ազդեցութիւն աւտու անհամանեցի, առցելով և ամեղոց մողցիւթեան երոշական ու հաւաքական կետակը վերաց. նշանաւ մէ մեթեզեցու այսումութիւնն անել։

Եթերեցի (Խելիթերէն) յանաբէն ըառը գուշէ և յշա-

Նակում: Այդպէս կոչուում է առաջին գարերում թէ հաւացեալների իւրաքանչիւր համախմբումը կրօնակ նպատակով, թէ մի քաղաքում կամ որոշ շրջանում գը նուած և մի ընդհանուր եպիսկոպոսի տեսչութեան ներ միացած բոլոր քրիստոնեաների համայնքը, և թէ ի սփիւ արթարհի տարածուած ամբողջ քրիստոնէութեան միութիւնը: Այս վերջին իմաստով գոճածուած գէպըում եկ զեցի բառի վերայ աւելացուում է սովորաբար «կաթուզ կէ» կամ ընդհանրական մակդիբը: Ժամանակի ընթացքու կրօնական վէճերի և քաղաքական ու աշխարհագրակ պայմանների շնորհիւ՝ Ընդհանրական եկեղեցու մէջ զան զան բաժանմունքներ յառաջ եկան, որոնցից իւրաքան չիւրը ներբուստ և արտաքուստ իւր առանձնայտու կերպաւորութիւնն ստացաւ, առանձնացած կեանքով առ ըել սկսեց և ըստ այնմ ունեցաւ իւր առանձին պատ մութիւնը: Հայոց եկեղեցին այդ բաժանմունքներից մէ է, որ իւր ինքնուրոյն կեանքն ու ինքնուրոյն պատմութիւնն ունի, կարելի է ասել, իւր կազմակերպութեա առաջին օրերից սկսած՝ շնորհիւ այն հանգամանքի, ու հայերն ամբողջ ազգութեամբ քրիստոնէութիւն ընդուն ցին՝ այնպիսի մի ժամանակ, երբ նոքա քաղաքական ինքնուրոյն մարմին, մի առանձին պետութիւն էին կա մում. և այդ պետութեան սահմաններում, Հայաստան քաղաքական դրութեան և հայ ժողովրդեան ազգայ առանձնայտկութիւնների համեմատ՝ մի ինքնատիպ եկ զեցական կազմակերպութիւն յառաջ եկաւ:

Հայոց եկեղեցւոյ պատմութիւնը պէսք է ուսուցան ուրեմն, թէ ինչպէս մուտք գործեց և հաստատուեցա քրիստոնէութիւնը հայ ժողովրդի մէջ, ինչպիսի յատու կազմակերպութիւն ստացաւ այստեղ, և ինչ ընթացք ու նեցաւ այդ եկեղեցական կազմսկերպութիւնը մինչեւ մն օրեւը: Սակայն քրիստոնէութիւնը երկու և կէս դար անցեալ ունէր արդէն, երբ հաստատուն հիմք դրաւ Հայատանաւմ, և այն բոլոր դաւանական, վարչական, ծիստ կան, կենցաղավարական կերպաւորութիւնները, որ նևնդունել էր յոյն-հռովմէական աշխարհում՝ ընդունելու թիւն գտան հարկաւ ընդարձակ չափով նաև Հայոց եկե

դեցու մէջ: Այլ և դորանից յետոյ, դարերի ընթացքում,
Ըստհանրական եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած կարևոր շար-
ժումները իրենց որոշ ազգեցութիւնն են ունեցել Հայոց
եկեղեցու վերայ, շատ դաւանական և կանոնական որո-
շումներ նորա կողմից դրական կամ բացասական վերա-
բերման հանդիպել: Այնպէս որ, Հայոց եկեղեցու պատմու-
թիւնն անելու համար՝ անհրաժեշտ է քայլ առ քայլ հե-
տեւել Ըստհանրական եկեղեցւոյ գարգացմանը և կարևոր
ժանօթութիւնները փոխ առնել Ըստհանուր եկեղեցական
պատմութիւնից: Միւս կողմից, քանի որ հայ ազգի հեթա-
նոսական անցեալը մեզ առ այժմ քիչ է յայտնի, և միայն
քրիստոնէական շրջանում յառաջ եկած գրի և գրակա-
նութեան չնորհիւ սկսում ենք բազմակողմանի կեր-
պով ծանօթանալ նորա պատմական կեանքի հետ, իսկ
այսուհետեւ գրեթէ ո՛չ մի փոքր է շատէ կարևոր շարժում
չի եղել նորա կեանքում, որ բոլորովին առնչութիւն չու-
նենար եկեղեցու հետ, —ուստի Հայոց եկեղեցւոյ պատ-
մութեան մէջ մտնում է այն նիւթի մեծագոյն մասը, որ
առհասարակ Հայոց ազգի պատմութեան նիւթն է կազմում,
միայն թէ տարբեր տեսակէտի ներքոյ դառաւորուած:

Հստ այսմ Հայոց եկեղեցւոյ պատմութեան երեք դա-
րերը հարկաւոր կլինի որոշել հետեւեալ կերպով: Առաջին՝
Հին կամ Կազմակերպութեան դար, քրիստոնէութեան նախ-
նական օրերից մինչև հայկական թուականի սկիզբը (552թ.),
Կամ Դուինի Բ. ժողովը, երբ քրիստոնէութիւնը Ըստունե-
լլութիւն է գտնում և հետզհետէ հասաւառում հայերի
մէջ, յաղթող դուրս գալիս տեղական և պարսկական հե-
թանոսութեան դէմ վարած ծանր կոռուից և յառաջ բե-
րում հայ ազգային եկեղեցւոյ ինքնատիպ կազմակերպու-
թիւնը: Երկրորդ՝ Միջին կամ Մաքառման դար, Դուինի Բ.
ժողովից մինչև Հայրապետական աթուի փոխադրութիւնը
ս. եջմիածին (1441թ.), երբ Հայոց եկեղեցին գրեթէ մըշ-
տական հոգեւոր պատերազմի մէջ է՝ իւր ինքնուրսյնութիւնը
պաշտապանելու համար դաւանութեամբ և ոգւով օտար
ուրիշ հարեւան եկեղեցական կազմակերպութիւնների դէմ,
և քրիստոնէութիւնը պաշտպանելու՝ ամբողջ աշեալքը ան-
տանելի բռնութեան ճիրանների մէջ խեղող մահմեռ —

կանութեան գէմ։ Ելնում է այդ անհատսար կռուի թէպէտ հեծուոծ ու ճզակոտոր արտաքուստ, բայց տռան կորցնելու իւր անկախութիւնն ու ներքին կենսունուկութիւնը։ Երբեմ՝ Դուռը՝ Դու կամ Վերակենդանուրեան զար, Աթու ու ի միխաղղութիւնից մինչև մեր օրերը, երբ կրօնակավէնելին այլ և որ երկրորդական տեղ են բռնում, և Հայ եկեղեցին, երբև անկախ ազգային հաստատութիւն, հոժողովրդի պատմական կեանքի միակ ներկայացուցիչը համ դիսանալով՝ ջանք է գործ դնում ի սիմուռո աշխարտարածութիւնը հայերին մի ընդհանուր հոդ եար կեռնքով մի մեանց հետ կապուած պահելու և մի նոր պատմակագերի համար գաստիարակելու։

Հին դարի պատմութիւնը կարող ենք բաժանել կը կ շրջանների։ Առաջին՝ Քրիստոնէութեան աճոււթ Յոյն—Հռովմէական աշխարհում և նորա հետքերը Հայատանում՝ ս. Լուսաւորչից առաջ։ Երկրորդ՝ Քրիստոնէութեան հաստատուեն Հայատանում և հեթանոսակամացորդների ու հեթանոսական բարքերի դէմ կռուել մինչև գրերի գիւտը։ Երրրորդ՝ Հայոց եկեղեցու ներքուս կազմակերպութիւնը, նահատակութիւնը կրօնական պատրազմների մէջ և օտար ոտնձգութեանց դէմ պաշտպանուելու առաջին փորձերը՝ մինչև Դուինի Բ. Ժողովը։

Առաջին շրջանը վերջապէս կբաժանենք Յ գլուխներ։

Գլուխ Ա.

Քրիստոնէութեան տարածումն առաջին Յ դարերու եւ ընդհանրական եկեղեցւոյ հաստատութիւնը։

Ա. Երաւաղէմի մայր համայնքը։ Յիսուս իւր վերջի օրեղն Երուսաղէմում էր անցրել։ անջնջելի տպաւորութիւններով և խորհրդաւոր յիշատակներով կապուած էի նորա հետեւալները այդ՝ առանց այն իւրաքանչիւր հքէ համար նուիրուկան, սրբավայրի հետ։ Այստեղ խմբուեցան նոքու ս. Հոգին ընդունելու և, եթեկ յարուցեալ Քրիստոսի վկաներ՝ շրջապատող հրէաներին ապաշխարութիւն

քարտպելու ու հաւատի բերելու համար. այստեղ կազմուեց և հետզհետեւ զօրացաւ առաջին հաւատացեալների համայնքը:

Համայնքի կետրոնն էին Քրիստոսի 12 առաքեալները, որոնք բաւական երկար ժամանակ նսաած մնացին Երուսաղէմում, և նոյս մէջ ամէնից աչքի էր ընկնում իւր ոգերուած քարտպութեամբ Պետրոս առաքեալը: Սկզբում նորա գլխաւոր գովծակիցն էր Յովհաննէս՝ Զեբեդիայի որդին, քայլ շուտով տուանձին զիրք ստացաւ և նոցա հաւատար պատիւ վայելեց Յակովոս Տեառնեղբայրը: Թէ առաքեալներն և թէ միւս հաւատացեալները՝ իրու հրէայ մարդիկ, շարունակում էին պահել Կոլոր հրէական սովորիւնները: ուրիշ հրէանների նման միշտ տաճար էին գնում և ազօթում, կատարում էին տօներն ու զանազան արարողութիւնները: ոււտի այն հանգամանքը, որ նոքանակ իրենց առանձին համայնական կեանքն ունէին, լաշեցեալ Յիսուսի յարութեանը հաւատում էին, միասին խմբուած ժամանակ նորա թողած յիշատակով կորհրդաւոր ընթրկե կատարում, եղբայրական սիրով իրենց ունեցուածքը միւնքանց մէջ քաժանում՝ մած թշնամութիւն յառաջ չքերաւ նոցա դէմ հրէայ ժողովրդի մէջ, այլ ընդհակառակն աւելի յարգանք էր ազգում շատերին և հետաքրքրութիւն շարժում: Յարաբեսութիւնը փոխուեց այն ժամանակ, երբ հաւատացեալների համայնքի մէջ մտան ոչ պաղեստինացի եկուոր հրէաններ, որոնք հեթանոս աշխարհներում, հեթանոսական ազդեցութիւնների ներքոյ, ապօած լինելով՝ շատ սովորութիւններ փոխել էին և առհասարակ աւելի ազտա հայեացքով էին նայում հրէական օրէնքի և պաշտամունքի վերաց: Այսպիսի եկուորներից էր ս. Ստեփանոս, որ և իւր ազատ հայեացքների համար քաղկոծուեցաւ, ու այնուհետեւ հրէաններն սկսեցին աւելի խստութեամբ հետեւ հաւատացեալների ընթացքին ու հալածել նրանց:

Բ. Կարողութիւն Երուսաղէմից դուրս եւ հերանասների մէջ:—Սակայն հալաժանքի հետեանքն այն եղաւ, որ Երուսաղէմից փախուստ տուող հաւատացեալները ցրուեցան և Պաղեստինի գանապան մասերում, նոյն իսկ գրսի երեսներում, աւետարանի քարոզութեան հիմք ունին: Առգեն

այս ժամանակ հրէաների մեծամասնութիւնը Պաղեստինի գուրս էր ապրում՝ տարածուած մեծ քանակութեամ Միջազեաքում, Բաքելոնում, Մարաստանի կողմնը ու մանաւանդ Ասորիքում, Եգիպտոսում, Փոքր Ասիայում Հռովմում և Հռովմէական պետութեան ներբոյ՝ Միջերկրականի շուրջ գտնուած, բոլոր երկներում։ Այդ բոլոր տեղերում ապրող հրէաները կենդանի յարաքերութեան մէ էին մայր երկրի և Երուսաղէմի հետ։ ուրեմն առանց հալածանքի էլ՝ ուխտաւորների և առևտրականների միջոցաւ աւետարանի քարոզութիւնը կարող էր հեշտութեաս մուտք գտնել նոցա մէջ։ Ահա այդ դրուցի հրէաները գլխաւոր միջնորդներն եղան, որ շուտով աւետարանը սկզ սեց տրագ նուաճումներ անել հեթանոս աշխարհում նոքա ամենութեք, ուր փոքր իշտէ աչքի ընկնող թիւ էլ կազմում՝ ունէին իրենց ժողովարանը, և այստեղ կարե էր յաճախ տեսնել հեթանոսների, որոնք իրենց համը ապիկար աստուածներից ձանձրացած՝ միմիթարութիւ էին որոնում միաստուածութեան կրօնի վսեմ աշխարհայի ցողութեան և մոգուր բարոյականութեան մէջ։ Առաջի հաւատացեալները հեթանոսներից անշուշտ այդպիսի «Եկամուտ հրէաներ» եղան, որոնք արդէն ընդելացել էլ ճշմարիտ կրօնի մի շաքը գաղափարներին և խկական հրէաների նման ակնկալում էին գուցէ նախահայրերին առ ուած խոսանումների լրումը տեսնելու։ Բայց Քրիստո համբարձումից յետոյ հազիւ Երկու ատանեակ ատպին անցած՝ հաւատացեալների շաքքում ո՛չ միայն այդպիսի «Եկամուտներ», այլ նաև բուն հեթանոսութիւնից գալ ձողներ կային։ գոնէ նոցա ըստ Երևայթին ո՛չ շատ փոքր թիւ գտնում ենք Հռովմէական պետութեան երեք ամենամեծ շահաստաններից մէկում, Ասորիքի Անտիոք քաղաքուս ուր և հաւատացեալներին առաջին անդամ «քրիստոնեա անունը առուին։ Երեխ հեթանոսութիւնից գարձածներ համայնքի մէջ արդէն այնքան աչքի ընկնող տեղ էին ըըս նում, որ մըս հեթանոսները տեսան, թէ սոցա սովորակա հրէաների հետ շփոթել չեն կարելի, այլ պէտք է նկատ իրեւ Քրիստոսի հետեղների մի յատուկ խմբակցութիւն ըստ այնմ անուանել։

Գ. Աւետարանի ժառանգութիւնը հրեաներից անցնում է հերանոսներին: — Հեթանոսութիւնից դարձողների բազմանալով՝ հաւատացեալների համայնքի մէջ մի անխուսափելի լնդիր ևս ծագեց, նոյն Անտիռք քաղաքում։ արդեօք նախկին հեթանոսները Քրիստոսի ճշմարիտ հետեւող լինելու համար պարտաւո՞ր էին հրեական օրէնքը ճանաչել և և ծէսերը կատարել։ Քանի որ հաւատացեալ հրեաների մէջ հաստատ էր մնացել բոլոր հրեաներին յատուկ այն հայեացքը, թէ չի կարելի մօտիկ հազորդակցութիւն ունենալ հեթանոսի հետ, երբ սա հրեական օրէնքի մի քանի էական պահանջները գոնէ չի կատարում՝ նորաշպիտի կարողանային հեթանոսութիւնից դարձողների հետ մի համայնք կազմել, եթէ այդ խնդիրը չլուծուէր։ Անտիռքում այդ ժամանակ գործում էր Պողոս առաքեալը, որ թէպէտ Քրիստոսի անմիջական աշակերտների թուում չէր եղել և Ստեփանոսի նահատակութեան ժամանակ մինչեւ իսկ նորան քարկոծողներից և հաւատացեալներին հալածողներից մէկն էր, բայց յետոյ հրաշքով գարծի եկաւ և հանդիտացաւ աւետարանի ամենեռանդուն քարողիչը։ Եւր քարոզութեամբ այնպիսի մեծ արդիւնք ցոյց տուաւ, որ գլխաւոր առաքեալների շարքն անցաւ։ Նա ու իւր նշանաւոր գործակիցը՝ Բառնաբաս, որ աւելի հին հաւատացեալներից էր, պաշտպանում էին այն կարծիքը, թէ դէպի Քրիստոս ունեցած հաւատը միակ քրիութեան ճանապարհը լինելով նորա հետեւողների համար, օրէնքն այլ ևս պարտաւորեցուցիչ ոյժ ունենալ չի կարող։ Սորա ընտրուեցան Անտիռքի համայնքի կողմից, որ եթան երուսաղէմ և Քրիստոսի բուն առաքեալներին առաջարկեն իրենց զբաղեցնող խնդիրը պարզել։

Առաքեալները ժողովուեցան և Պողոսի ու Բառնաբասի բացատրութիւնները լուելուց յետոյ համաձայնութեան եկան, որ յիրաւի պէտք չէր հեթանոսութիւնից դարձողների վերայ օրէնքի լուծը գնել, այլ կարելի էր միայն այնպիսի գործնական միջոցներ ձեռք առնել, որ օրինապահ հրեաները հեշառութեամբ ընդելանսան նոցա հետ համայնտական կեանք վարելու։ Թէպէտ այս նկատմամբ եղած փորձերը յաջողութիւն չգտան և քրիստոնեաց հետ-

Ներից շատերը շարունակեցին խորթ աչքով նայել հե թանոսութիւնից գարձագների վերայ, մինչև իսկ հալածան հանեցին Պօղոս առաքեալի ու նորա համախոհների գէմ որոնք ամենայն եռանգով պաշապանում էին աւետարան ազատութեա : Ակզբունքը, բայց և այնպէս Առաքելա կան ժողովի որոշումն այն մեծ արդիւնքն ունեցաւ որ քրիստոնէական համայնքը գարձաւ բոլորովին անկալ հրէութիւնից, և հեթանոսներն անարգել կարող էին նոր մէջ մտնել : Նատ չանցած՝ վերջիններս այնչափ բազմացա և այնպիսի գերակշռող գիրք գրաւեցին համայնքի մէջ որ հրէայ տարրը կամ պէտք էր բոլորովին նոցտ համա կերպէր, կամ բաժանուէր և մի առանձին աղանդաւ երեսոյթ ստեղծէր : Մանաւանդ նրաւսաղեմի կործանումի յետոյ, երբ հրէութիւնը զբկուեց իւր կենարննական սըր բավայրեց, և քաղաքական անկման հետ նորա բարոյակա ուժեքն էլ սաստիկ ջլատուեցան, գրեթէ ո՛չ մի ագդեցու թիւն չէր կարող ունենալ այլ ևս քրիստոնէական հա մայնքի վերայ, որ այդպիսով աճեց ու զարգացաւ զու հեթանոսական միջավայրում : Քրիստոնեաներն սկսեցի հրէաների վերայ նայել իրեն Աստուծուց մերժուած «խա չահանուների» ժողովրդեան վերայ, իսկ իրենց համար ճշմարիտ Խրամիչէլ՝ մի նոր սերտնդ ընտրեալների, որ կո չուահ է հնի տեղ բանելու և նախահայրերին եղած առե աւաւոր խոստմանց իրականացումը տեմնելու : Ի. զար միջոցներում նոցա և հրէաների մէջ փոխադարձ թշնամու թիւնը կատարեալ էր . եկեղեցին գարձաւ ամբողջովի «հեթանոսաց եկեղեցի», և քրիստոնեաց հրէաների մի փոք ըիկ համայնք միայն՝ իրեն ազանդ հալածուած հաւ առա ըապէս թէ քրիստոնեաներից և թէ հրէաներից, մի երկս գար պահեց զեա իւր աննկատելի գոյութիւնը :

Դ. Առամեալների եւ նոցա առակերտների զործունեու քիւնը:— Մի հին աւանդութեան համաձայն՝ Առաքելակա ժողովից յետոյ Քրիստոսի առաքեալները, որոնցից արգէ Յակովսս, Զեքեդիայի որդին, նահատակուած էր, նրաւ աղեմի համայնքի գլուխ կարգելովլ Յակովսս Տեառնեզ քօրը, իրենք ցըուեցան աշխարհի զանազան կողմերը՝ քա ձագելու: Ուշ ժամանակի աւանդութիւնները նոցա տանու

Են հետաւոր երկիրներ և խրաքանչիւրին իբրև այս կամ այն ընդարձակ աշխարհի լուսաւորիչ ներկայացնում։ Սակայն նոցա մեծ մասի գործունէութեան վերաբերմամբ ոչ մի ստոյդ պատմական յիշատակ չի մնացել։ մասսամբ գուցէ այն պատճառաւաւ, որ նոքա գործել են այնպիսի տեղերում, ուր գրի գործածութիւնը շատ սակաւ էր և առհասարակ պատմութիւն չի պահուել։ մասսամբ էլ, որ իթք սահմանափակ է եղել այդ քարոզութեան շրջանը, և աւանգութիւնը ընդարձակել է՝ յաջորդ գարերում եկեղեցւոյ կատարած մեծ նուաճումների տպաւորութեան ներքոյ։ Ամէնից աւելի տեղեկութիւն ունենք Պօղոս առաքեալի մասին, որ, Փաքը Ասիոյ գրեթէ բոլոր կարևոր կենարոններում քարոզելուց և համայնքներ հաստատելուց յետոյ՝ դէպի Մակեղոնիա ու Յունաստան անցաւ, Բալկանեան թերակղզու զանազան մասերում աւետարանի սաղմեր ձգեց։ իսկ իբրև կապեալ նրուսաղէմից հառվմ տարուելով այնտեղ ևս մնասպէս նպաստեց քրիստոնէական համայնքի զօրանալուն։ Նորա գործակիցներն ու աշակերտները, ինչպէս վերև յիշուած Բառնաբաս, Սիզուանոս, Տիմոթէոս և այլն, անշուշտ իրենց գործունէութեամբ նոյնպէս մեծապէս նպաստեցին, որ Պօղոս առաքեալի քարոզութիւնը ամենաընդարձակ ազգեցութիւն ունեցաւ քրիստոնէաւթեան զարգացման վերայ և ամէնից կենդանի հետքեր թողեց։

Ինչպէս մի շաբաթ պատմական յիշատակներից երևում է, մի որոշ շքչանում առանձնապէս խոր և տեսական է եղել նաև Յովհաննէս Աւետարանչի ազգեցութիւնը, որ քստ հին աւանգութեան շատ երկար՝ մինչև Բ. գարիսկեղը, ապրել է Եփեսոսում, իւր հովուական խնամքը տարածել շրջակացըի վերայ, և թողել է մի շաբք նշանաւոր աշակերտներ, որոնք մի քանի սերունդ գ բերնէ բերան տւանդելով կենդանի էին պահում նորա քարոզած ոկրքը ունքունքները։ Իսկ Պետրոս առաքեալի համար այնչափակ գոնէ յայտնի է, որ Առաքելական ժողովից յետոյ եղել է Առաքելում, հաւանականաբար քարտգել Փաքը Ասիոյի մի քանի քաղաքներում և, շատ հին աւանդութեան համաձայն, 64 թ.-ին՝ Պօղոս առաքեալի հետ միաժամանակ, ևս

Հատակուել Հռովմում։ Իրքև նորա թարգման և գործակի է յիշուում Յովհաննէս Մարկոս աւետարանիչը, որ առժամանակ եղել է նաև Պողոս առաքեալի սպասաւոյու գործակիցը, և ըստ աւանդութեան դարձել է ապա Աղքամանդրից առաջին եպիսկոպոսը։ Առաքելական քառորդիներից մէկն է վերջապէս ս. Ստեփանոս Նախավիկա պաշտօնակից Փելիպպոս, որ Սամարիայում քարոզելու յետոյ, իւր մարդարէունի դուստրների հետ՝ երկատարիներ տալրել և գործել է Փոխւգիայի Հիերապոլի քաղաքում։ Յամենայն գէպս առաքելական շրջանի քառորդիների գործունէութիւնը, եթէ այնչափ ընդարձակութիւն չէ ունեցել, որչափ վերագրում է նրանց աւանդութիւնը՝ մինչև աշխարհի ծայրերը հասցնելով աւետարանի քարոզութիւնը, գոնէ Հռովմէական պետութեան սահմաններում այնքան մեծ տեղ էր գրաւել և այնպի հաստատուն արմատներ ձգել, որ արդէն Բ. դարի սկզբնէ ընտառ կայսրերն ու քաղաքական նշանաւոր գործիներ կարեռ են համարում լուրջ ու շաղբութիւն դարձն և խիստ միջոցներ ձեռք առնել նրա գէմ։

Ե. Աւետարանի տարածման նպաստող հանգամանները։ Ամենակարենը հանգամանքն այն է անշուշտ, որ քրիստոնէութեան առաջին դարերում՝ ինչպէս աւետարանի ուրան Պաղեստինը, այնպէս և ժամանակի գրեթէ ամբողքագրակիրթ աշխարհը գտնուում էր Հռովմայեցւոց ի, խանութեան, կամ քաղաքական ազգեցութեան ներքո Այս հոկայտական պետութեան ընդարձակածաւալ սահման ներում ի մի ճուրլուած բաղմապան ազգերի միջից որ չափով վերացել էին ցեղական ու կրօնական խտրութիւն ները։ Հռովմի հզօր կայսեր հովանաւորութիւնը ըսլոր հպատակներին ապահովութիւն էր պարգևում։ Հռովմէական պարգարակչիւ օրէնքը անիրաւ զրկանքների դէմ պաշտպանում, հարթում էր հետպհետէ իշխանի և ստրուկի մնեղած մեծ անջրակետը և ամէնքին Հռովմի հաւասար քաղաքացիներ դարձնում։ Յունարէնը ընդհանուր գործածական լեզու էր ամերող պետութեան մէջ։ յունական ուսում ու արտեսուր ամենուրեք մուտք էին գտնում, մտքել շուսաւորում և բարքերը կրթում։ Բոլոր գաւառներուն

մի սահմանից մինչև միւսը, ձգուում էին լայն, բանուեւ ապահով ճանապարհներ, որոնցով՝ ինչպէս մինչև այդ ժամանակ հոռվմայեցի զինուուրն ու պաշտօնեան, յոյն ուսուցիչն ու վաճառականն էին ազատ անարգել երթևեկեւ, այնպէս էլ երթևեկուում են այնուհետեւ աւետարանի քառօղիչները։ Հոռվմն ամենայն ներողամտութեամբ թոյլ էր տալիս, որ հպատակ ազգերից իւրաքանչիւրն իւր ուզած կրօնը պաշտէ, միայն թէ ճանաչուած լինի այն տիրող օրէնքի կողմից՝ չգիպաշելով նորա հիմնական կէտերին։ Յունաց փելիսոփայութիւնը՝ հեթանոսական աստուածութիւնների մասին եղած, պարզամիտ հաւատալիքներն ու նախապաշարումները ցըելով, իսկ արեելքից մուտաք գործող նորանոր կրօնները, իրենց խորհրդաւոր պաշտամունքով և ճոխ պատերացումներով՝ մարդոց երևակայութիւնն ու զգացումները գոգուելով, ընդարձակ շրջաններում յառաջ էին բերել բուռն տենչ՝ ամբողջ մարդկութեան, բարոյական և մտաւոր աշխարհայեցողութիւնը ղեկավարող մի համատարած կրօն ունենալու։

Քրիստոնէութիւնը հէնց այն կրօնն էր, որ այդ պահանջին բազմակողմանի կերպով բաւարարութիւն էր տալիս։ Կեանքի նպատակի բանական ըմբռնումն և նորան հասնելու բարոյական զօրութիւն պակասում էր թէ մարդկութեան այն մեծ զանգուածին ընդհանրապէս, որ Հոռվմէական պետութիւնն էր ներկայացնում, և թէ սորա իւրաքանչիւր քաղաքացուն առանձնապէս։ իսկ քրիստոնէութիւնը ձգտում էր, անհատներին կրթելով՝ ամբողջ մարդկութիւնն այդ ուղղութեամբ վերակենդանացնել։ Նորա հիմնական ճշմարտութիւններն այնչափ պարզ էին, որ ամէն մի հասարակ ու անուս մարդ գիւրութեամբ ըմբռնել կարող էր։ բայց միւնոյն ժամանակ աստուածային նախախնամութեան և մարդկային հոգու ամենախոր գաղտնիքները թափանցելով՝ անսպառ խորհրդածութեան նիւթ էր մամատակարարում նա իմաստունին և գիտունին։ Միաստուածութեան կրօնը՝ հրէութեան օրինակով և յոյն փելիսոփայութեան արդիւնքով նախապատրաստուած և մատչելի գարձած այն գաղափարը, թէ տիեզերքի մէջ մէ սկզբունք, մի հաստատուն օրէնք, մի նախախնամող ։

Շութիւն է իշխում, և ոչինչ են հեթանոս ազգերի շնորհուածութիւնները ու երկայած վաստիւամիտ, վատարաբոյ տառածութիւնները, ներկայանում էր այստեղ իւր բոլոր վաճառքամրդ՝ ուզատ հրէաների ազգային ուահմանափակումներից և վիլիսոփանների անորոշ վարկածներից։ Փրկարգործութեան գաղափարը՝ նիւթական ստոր բնութեան կապանքներից ազատուելու և դէպի մի հոգեղէն, լուսաւոր, երանական աշխարհ դիմելու փափուգը, որ այնչափ հրապուրիչ էր գարձնում արենելեան կրօնների խորհրդաւոր պաշտամունքը, արտայայտուում էր պանչելի պազութեամբ Աստուծոյ Որդու մարդեղութեան և խաչելութեան խորհուրդների մէջ։ Որչափ և արդար լինէր հւովմէակոյն գաղափառանը, որչափ խստապահանջ հրէտկան օրէնքը՝ նոցափայլը նսեմանում էր տւետարանի վեհ բարոյական սկզբունքների և յաւիտենական գաղափառանի այն փառանեղ պատկերի առաջ, որ Փրկիչն էր զ ծեր։ Ո՛չ մի կրօն, ո՛չ մի վարդապետութիւն, ո՛չ մի գեղարքուեստական ուսեղծագործութիւն չէր կարող ընծայել կեանքի այնպիսի առաջնորդ, որպիսին նա էր՝ նրկնաւոր վարդապետը, որի խօսքը գործ էր, իւրաքանչյուր քայլափոխը որբութեան և ճշմարտութեան օրինակ։ Քրիստոնէութիւնը ամէն ինչ ունէր՝ թէ զգացմունք ջերմացնելու, թէ կամք զօրուցնելու և թէ մաքի մնունդ տալու համար։ ուստի զարմանալի չէ, որ նա զօրեղ տպաւորութիւն պէաք է զ ործէր ամէն մի զգայուն սրտի և կենդանի հոգու տէր անձի վերայ, և բոլոր գէազի վերինը նկրաելու ընդունակ մուրդին գրուէին շուտով նորանետութիւնների շարքում։

Զ. Քրիստոնէութեան դեմ հանած հոգածանեները։ Փնայելով յիշած և ուրիշ նման նպաստաւոր պայմանների՝ քրիստոնէութիւնը մեծամեծ արգելքների պիտի յատթէր չ ծանր հալածաներների դիմանար, մինչև համաշխատթայրին կրօն դառնուլը։ Աերև ավարկեցինք, թէ ինչպէս մեծ թշնամութիւն յառաջացաւ նորա դէմ և հետզինաէ զարգացաւ հրէութեան մէջ, որ այնքան նորա տարածման առաջին օրերին բուն հրէանաւում հանած Կալաֆանքներով վտանգաւոր չեղաւ, ովքան դուրսը՝ հեթանոսների մէջ ցանած աթելութեամբ, ուստացազ լուրե-

ըով և առասպելտկան զբարարութիւններով։ Բայց առանց դորան էլ հեթանոս ժողովուրդը շատ պատճառներ ունէր քրիոտոնէութեան դէմ զինուելու։ Նա այնպէս վարժուել էր կրօնը ըստմաթիւ աստուածութիւնների շօշափելի պատկերների և նրանց մատուցած ճոխ պաշտամունքի ու զոհաբերութիւնների մէջ տեսնել, որ քրիոտոնէական միաստուածութիւնը՝ իւր բարձր գաղափարներով և հոգեար պաշտամունքով, հասարակ դասի աշքին իրեւ անկրօնութիւն ու անսաստուածութիւն էր երեսում։ Բարքերի այն սոսկալի ապականութիւնը, որի մէջ լողում էր այդ ժողովուրդը, անընդունակ էր դարձնում շատերին աւետուքանի ցոյց տուած մաքուր բարյականութիւնը՝ ըմբռնելու և տարրական չափերով անգամ գործադրելու։ Կեզծիք և ցնորք էին համարում նորու նոր կրօնի բարյասկան պահանջները և տրամադրի էին իրենց կողմից նորա հետևողներին ամէն տեսակ գալունի զազրագործութիւնների մէջ մեղագրելու։ Ուստի քրիստոնէանների հակոռակորդների համար գիւրին գործ էր ամերիխն գրգռել նոցա գէմ, և շատ ունգամ այդ գրգիռը այնպիսի ծայրայեղութիւնների էր հասնում, որ նոյն իոկ հեթանոս պետութիւնը ստիպուած էր պաշտպաններ հարածուածներին խոշանգումներից ու արիւնհեղութիւնից։

Կրթուած գասն սկզբում աւելի քիչ էր ուշադրութիւն գարձնում քրիստոնէանների վերայ և համարում էր նրանց ցնորամիտ մոլորեալներ, որովք իրենց տգիտութեամբ կամ տարօրինակ դատողութեամբ անհեթեթքանների հաւատում են։ բայց երբ եկեղեցին զօրացաւ և արտաքուստ իսկ մի պատկառելի հաստատութիւն դարձաւ՝ հետզհետէ հանգէու եկան մնջ ու փոքր հեղինակների և գիւլիստոփանների քննագաղտական, երգիծարանական ու վիճականատիան գրուածներ։ Ամենամշտնաւորը և ժամանակով վերջինը նոցա մէջ Պոլիգիւրոս գիւլիստոփան է, որ լու ուսումնառութել էր Սուլք Գիրքը և, աւելի տեղեակ, հիմնաւոր ու խոփաքնին քննագաղտ լինելով քան իւր նախորդները՝ շատ հոգա է պատճառել ժամանակակիցներին։ Մի քանի եկեղեցական հայրեր միմնանց եռեկց հեռազուհանաշարադրութիւններ են գրել նարա գէմ, և սեղունդ ու

բունգ յիշուել է նա իրեւ քրիստոնէութեան ամենա-
վտանգաւոր և ամենովերիմ թշնամի:

Սակայն այս բոլորից աւելի աղէտալի եղաւ քրիստո-
նէութեան համար և խիստ թանգ նստեց այն հանգաման-
քը, որ նա չէր կարող հաշտուել պետական օրէնսդրու-
թեան հետ և ուրիշ կրօնների նման ներողամիտ վերաբեր-
մունք գտնել: Նա ներկայանում էր ոչ իրեւ մի հաւասա-
ռը միւսների շարքում, այլ իրեւ բացարձակ ճշմարի-
կրօն, որի առաջ մնացածները ստուռում են և իրենց գո-
յութեան իրաւունքը կորցնում: Խսկ այդ ժամանակ ընդ-
հանուր ընդունելութիւն գտած և Հռովիմի բոլոր հպատակ-
ների համար պարտաւորեցուցիչ դարձած կրօնական արա-
րողութիւն էր այն պաշտամունքը, որ մատուցուում է
յանուն կայսեր: Այդ պաշտամունքի մէջ գաղափարական
մարմնացում էր գտնում պետութեան գաղափարը. ամէ
մի փոքր ի շատէ աչքի ընկնող կենարոններում նորան նորէ-
րած տաճարներ կային և պաշտօնեաներ, որոնք հսկում էին
նորան ճշտիւ կատարման վերայ խոնարհ երկրպագութիւն
պահանջում կենդանի կայսեր պատկերի և մեռած ու աս-
տուածների կարգն անցած կայսրների ոգիների առաջ: Քրի-
տոնեան ընականաբար հրաժարուելով պիտի հրաժարուե-
այդպիսի կոպիտ մարդապաշտութիւնից, և ահանա նկա-
տուում էր իրեւ արհամարհող կայսեր ու ապստամբ, որչադ
և այլապէս հաւատարիմ հպատակ լինէր ու արդարամտու-
թեամբ հետեւը «Կայսերը կայսեր տալու» սկզբունքին
— ներոն կայսեր քրիստոնեաների դէմ հանած հալածանակ
առաջին գարում պատահական բնաւորութիւն ունէր: Հ
հաւատականաբար հրէաների տարածած սուտ լուրերից է-
յառաջ եկել: Բայց Բ. և Գ. դարերի միւս բոլոր հալա-
ծանքների համար, կարելի է ասել, գլխաւոր շարժառիթի
եղել է յիշեալ տգեղ պաշտամունքի դէմ մեղանչելը: Բ
դարի զօրեղ կայսրները՝ Տրայանոս, Ադրիանոս, Մարկո-
Աւրելիոս անվայել էին համարում դեռ լրտեսների և մատ-
նիչների ցուցումներով օգտուելը և հրամայում էին պատժե-
քրիստոնեաներին այն դէպքում միայն, երբ նոքա յայտնի
կենալով մերժում էին օրէնքը և հրապարակաւ հրաժարուու-
այսեր պատկերին երկրպագելուց: Այդ պատճառաւ նոցա

օրերում եղած հալածանքները շատ սահմանափակ թուով գոհեր են տարել։ Ուրիշ էր Դեկոս կայսեր հալածանքը 249 թ. ին, որի հրովարտակի համաձայն ամէն քրիստոնեաց առանց բացառութեան պէտք է բռնադատուէր՝ կամ նոր կրօնն ուրանալ կամ մահուան պատժի ենթարկուել, և Վաղերիանոսի հալածանքը 258 թ. ին, որ, եկեղեցին անհովիւ ու անառաջնորդ թողնելու համար՝ կարդադրել էր ամէն տեղ՝ հոգեորականներին և համայնքի աչքի ընկնող անդամներին ձերբակալել ու մահուան գատապարտել։ Այդ հալածանքներն ես թէպէտ խիստ արիւնահեղ, բայց բարեբազդաբար կարճատև եղան։ Մինչդեռ վերջին հալածանքը, Դիոկետիանոս կայսեր օրով, որ 302 թ. ին սկսուեց և մինչև 311 թ. ը տեսեց՝ իբրև մի վերջին յուսահատ փորձ արագ քայլերով յառաջացող քրիստոնէութիւնը արեան մէջ խեղդելու, սարսափելի աւերումներ գործեց եկեղեցու մէջ և հազարաւոր նահատակներ խլեց նորանից։

Բայց այս հալածանքները սպասածի հակառակ արդիւնք ունեցան։ Նահատակների իրենց տանջանքները մէջ ցոյց տուած անյոդգողդ հաւատոն ու գերմարդկային համբերութիւնը, իբրև մի հրաշալի ներքին զօրութեան երաշխիք՝ ամենազօրեղ տպաւորութիւն էին գործում շըրջապատզների վերայ և հարիւրաւոր սրաեր գրաւում։ Նոցա թափած արիւնը, ինչպէս ասուում են ժամանակակիցները, սերմ էր գառնում՝ հաւատացեալների թիւը քազմապատկելու համար։ Ուշափ ծանր էր հալածանքը, եկեղեցին ելնում էր նորա միջից այնչափ աւելի ներքուստ ամրապնդուած, անյուսալի տարրերից զտուած և յառաջադիմութեան նոր քայլերի համար կենսունակ դարձած։ այնպէս որ խիստ պատկառելի մնջութիւն էր ներկայացնում այն ժամանակ, երբ վերջին հալածանքը գագարեց։

Է. Հնագոյն արանդների։ — «Հրէական աղանդի» մասին արդէն յիշեցինք։ — Աւետարանի ուսումն խսպառ աղաւառ պէտու և քրիստոնէութիւնը արևելեան կրօնների ու արևելաբան։ իմաստափերութիւնների մի տարօինակ խառնուրդ զարձնելու ծանր վանդը յառաջ բերին այն աղանդները, որոնք հեթանոսական հողի վերայ հանդէս եկան։ Բ. դաշտում և յայտնի են «Խոստիկեան» ընդհանուր անունով։

Այդ անունը նորա ստացել են յունաբէն գնողիս — գետո
թիւն բառից՝ այն պատճառով, որ յանձնին Քրիստո
աեզի ունեցած աստուածային յայտնութիւնը նկատու
էին իբրև միջաց՝ բարձրագոյն գիտութիւն ձեռք ըերեւ
տիեզերքի, սաեղծագործութեան, հոգու և մարմնի փ
խագարձ յարաբերութեան գաղտնիքներն ըմբռնելու
ըստ այնմ կեանքի նպատակն ու գորա համազատա
խան ընթացքը որոշելու։ Նոցա բոլորի սկիզբը գնազ հ
մարուսամ է «Գործ առաքելոց»ի մէջ յիշուած Սիմոն Սոդ
որ յերաւի պատմական կարեւոր դեր խաղացել է։ Հ
ւանականաբար սորա հայրենիք Սամարիայում ու հարեւ
Ասորիքս է տեղի ունեցել ամէնից առաջ այն շփու
արեւուտքի և արեւելքի մէջ, սրով յունական շաբժու
միաբը Բաբելոնի և Առաջաւոր Ասիայի կրօնական ն
առասպելաբանութիւններից խորհրդաւոր պատկերացու
ներ փոխ աւատ և, նոցա մէջ զանազան վերացական գ
զափաքներ ամիսփելով՝ սաեղծեց մի առանձնացատո
Կրօնի փիլիսոփայութիւն։ Խոկ քրիստոնէութիւնից Աստո
ծոյ Արքու մարմնացման գաղափարը վերցնելով՝ այդ փ
լիսոփայութիւնը հնարաւորութիւն էր սամանում բայց
արեւաւ, ի թիւս այլոց, իւր ամէնից կնճռուած ինչդեռ, և
ինչպէս պէտք է նկրթական աշխարհի մէջ գերաւած հազեզ
կամ լուսաւոր տարրերն աղատուին ու իրենց յաւիտնն
կան ազգեւրի մօտ վերադառնան։ Եւ այս ձեռվ ընթաց
նած քրկագործութեան գաղափարն էր գնուատիկեաննն
համար քրիստոնէութեան հիմնական կէտն ու նորան մի
ճշմարիտ կրօն դարձնողը։ Քրիստոսի պատմութիւնը նոյ
նկատամ էին իբրև մի կարեւոր օգակը տիեզերքի պատմա
թեան, որ սկսուսւմ է աստուածային էութիւնից մի կո
ընկնելով և նիւթի հետ խառնուելով։ իւր շրջման կէտ
է հասնում Փրկչի մարմնացմամբ, երբ նիւթի մէջ փի
կուած հոգիները իրենց ասաւուածային ծագ ու մը նանա
չում են և ճգնութեան ու սրբազնն խորհուրդների մէջ
ժամ փրկութեան դիմում։ իսկ վախճանը տեղի կունեն
այն ժամանակ, երբ բոլոր հագեցին տարրերը աղատառ
կցինեն։ Զանազան գնուատիկեան դպրացների առաջնորդն
շանագան կերպավ են պատկերացնում այս աժեւչերակ

գրամմայի ընթացքը. ոմանց մօտ գերակշռում է աեսութիւնը, ոմանց մօտ կրօնական առասպելը. իսկ նոցահետազները մեծ մասամբ միայն կրօնական ծէսերին և ճշնական վարդութիւններին էին մասնակցում՝ առանցքան հասկանալու փելիսովայական տեսութիւններից:

Հասարակ ժողովրդեան անմատչելի լինելուն հետ մէկաեղ այդ աեսութիւնները պարունակում էին նաև շատ այնպիսի կէտեր, որոնք երբէք չէին կարող հաշտուել քրիստոնէութեան հետ և խիստ խորթ պէտք է հնչէին աւետարանի քարոզութեան փոքր ի շատէ ընդելացած ականջներին: Յրինակ՝ ստեղծագործութեան մասին տուած բացարձութիւնը, որով ներկայանում էր այն ո՛չ թէ Բարձրեալ և անիմանալի Աստուծոյ կամքով եղած, այլ մի երկրորդական էակի ոտնձգութիւն, որ Բարձրեալի մասին գաղափար չաւնէր և նորա մօտից ընկած աստուածային կայծը նիւթի հետ խառնելով ու աշխարհն ստեղծելով՝ իրեն Աստուած երևակայեց և Հին Կտակարանի յայտնութիւնները տուած. մինչև որ Քրիստոսի գալստեամբ խարէութիւնը քացուեց: Հետեւաբար Հին Կտակարանը կորցնում է ամէն Նշանակութիւն և չի կարող աւետարանի հաւասար առառուածային յայտնութիւն համարուել:

Դնուութիւններն այսպիսով շատ քիչ հետեղներ աւնեցան և կարդ ժամանակի մէջ անցայտացան: Նոցանից մէկը միայն՝ Մարկոն, գործնական գոնուեց և, վերացական հարցերը մը կտղմ թողնելով՝ ձեռնարկեց ուղղակի մի նոր եկեղեցական համայնք կազմակերպեց: Սա համարում էր, թէ Քրիստոսի աշակերտները սխալ են հասկացել նորա աւետարանը և աղաւաղել են Հին Կտակարանի աղեցութեամբ. աւղիդ է ըմբռնել միայն Պարտ առաքեալը, որի քարոզութեան համեմատ գաել պէտք է քրիստոնէութիւնը. հաւասար և սէր պէտք է միայն ունենալ, խիստ ճշնական պէտքով աստուածալիքն շնորհը վատառէլ, և այդպէս փրկութիւն գտնել: Մատկերոնի կազմութ համացնքները գետ և գարում գոյութիւն ունեն և մասնոգութիւն էին պատճառուում եկեղեցական հայրերին. նոցատաշտառած էին Եփոտոփ միջին հայտում, ինչպէս եւելու է ացցեցութիւն են գործեց նաև հացելով վերաց և աց-

պատճառ եղել, որ նոցա աղանդի գէմ հերքում է գը մեր Եգնիկ Կողբացին:

Որոշ տեսակէտից գնոստիկականութեան բոլորով հակառակ ուղղութիւն ունէին և զուտ եկեղեցական հովերայ յառաջ եկան՝ Բ. գարի վերջերում, այդպէս կ չուած Միթշանական աղանդաւորները: Նոցա ընդհանու ձգտումն է՝ գնոստիկեանների քարոզած երկուութեա գէմ պաշտպանել մաքուր միաստուածութեան գաղափա ըլլ, բացատրելով միանգամայն Գրկչի աստուածային առ ընչութիւնը Հօր հետ: Նոցա մի մասը Յիսուսին համարու է սոսկ մարդ, որ վերուստ Աստուածոյ Բանը, կամ արա քոյ կարգի աստուածային ներշնչում, ընդունելով՝ կար զանում է աստուածանման կեանք վարել, հրաշքներ գո ծել և աստուածային փառքի համեմ: Միւս մասն ընդհա հառակը՝ նորա կատարեալ Աստուած լինելը շեշտեր համար, ընդունում է նորան իբրև նոյն Հօր Աստուած մարմնացումն, կամ մի առանձին ժամանակաւոր կերպո ցումն: Այս տեսութիւններից երկրորդն աւելի մօտ ժամանակակից քրիստոնեանների ըմբունման և աւելի ը դարձակ շրջաններում տարածուեցաւ. բայց առաջինը, կա Որդեգրական կոչուած աղանդը, աւելի ազգեցութիւն աւելի զգալի հետեւանքներ ունեցաւ արևելքում. մասն ւանդ երբ նորա ներկայացուցիչ հանդիսացաւ Գ. գար երկրորդ կիսում ապրող Անտիոքի եպիսկոպոս Պողոս Ս մոստացին: Յատկապէս այս Սամոստացու քարոզա որդեգրական ուսուումը երկար ժամանակ պահուեց Հայու տանի սահմաններում և, ինչպէս յետոյ կտեսնենք, կա րեսը գեր պէտք է խաղացած լինի մեր պատմութեա մէջ: Իսկ ուրիշ սոյն դարաշրջանում յառաջ եկած աղանդ ները շատ սակաւ առնչութիւն ունեն մեր եկեղեցւ պատմութեան հետ. եթէ չհաշուենք Մանիքեցութիւնը որ իսկապէս քրիստոնէութեան մըցակից մի նոր արեւելեան կրօն էր, և ոչ քրիստոնէական աղանդ:

Ը. Առաքելական հայրեր, ջատագովներ եւ Աղեքսանիքի յի դպրոց:—Եթէ եկեղեցին յիշած վտանգներին ու փող ծութիւններին յաջողութեամբ գիմագրեց՝ որոշ շափու արտական է իւր այն ականաւոր ներկայացուցիչներին

ըոնք աւետարանի ճշմարիտ վարդապետութիւնն ու աւագելական մաքուր աւանդութիւնը իրենց գրաւածների էջ կենդանի պահեցին և ժամանակի աշխարհայեցողութեան համեմստ այնպիսի ձևակերպութիւն տուին, որ իւաքանչիւր քըլտառնեայ հակառակորդի գէմ սորա զէնքով ուռել ու իւր հաւատը պաշտպանել կարող էր: Նոցանից վնապիսիները, որոնք Ա. գարի վերջերում և Բ. գարի կզբներում են ապրել, իրեն առաքեալների հետ անմիական հաղորդակցութիւն ունեցող՝ Առաքելական հայրեր ն կոչւում: Դոցա մի քանի գրուածները միայն մեզ յայտի են, որոնք այնչափ յարգի են եղել, մինչ Աստուածառչի ձեռագիրների մէջ են մտել և գրեթէ նոր կտականի գրքերի հաւասար գործածութիւն գտել: Աւելի անօթ է Խգնատիոս Աստուածազգեաց Անտիոքի Եպիսկոպոսը, որ երբ կապուած Հռովմ էր տարւում գազանների ուաջ ձգուելու, ճանապարհին եօթ խրախուսական թղթեր ըեց զանազան համայնքների: Ապա Զմիւռնիայի Պողիկարյոս եպիսկոպոսը, որ ինքն էլ մի թուղթ ստացել է Խգատիոսից և նորա թղթերի առթիւ մի թուղթ գրել պապէի համայնքին: Երկուսն էլ եղել են մօտիկ յարաբեութեան մէջ Յովհաննէո աւետարանչի հետ և նորա նման որ ըմբռնել ու արտայացտել աւետարանի ճշմարտութիւնները: Կայ նոցա թղթերի նաև հին հայերէն թարգանութիւնները:

Առաքելական հայրերի յաջորդներ և մասամբ աշարտներ կարող են համարուել այդպէս կոչուած Զատառվները, որոնց գործունէութիւնը ընկնում է աւելի Բ. արի երկրորդ կէոի մէջ: Սոքա լաւ հրահանդուած լինելով ժամանակակից յունական գիտութեամբ՝ ծառայեցրին յդ գիտութիւնը հեթանոսների կրթուած գասակարին աւետարանական գաղափարները մատչելի գարձելու, քըլտառնէութիւնը նորան հալածող հռովմէական այսրների ու մեծամեծների առաջ ջատագովելու և նոստիկեանների մոլորութիւնները հերքելու համար: Պցա մէջ աչքի է ընկնում՝ ծագմամբ Սամարացի, ուստինոս փիլիսոփան, որ վաթսունական թուականներին լովմում նահատակուեց և թողել է Երկու բազմակող-

մանի կարևորութիւն ունեցող ջառագ սվութիւններ հեթանոսների, և մի բանակիոսութիւն հրէաների դէմ։ Աւելի նշանաւոր է ս. Խրենէոս կամ Երանասու՝ Պողիկարպս Զմիւռնացու աշակերտը, որ և «Հետեւող առաքելոց» է առուռում մեդանում՝ իւր ուսուցածները Փրկչի ակոնատեսների ունմիջական մի աշակերտի վկայութեանց վերայ հրմնելուն համար։ Մննդեամբ նա հաւանականարար Փոքր Ասիացից էր կամ Ասորիցից։ բայց յետոյ եղաւ Գալլիայի Լիոն քաղաքի համայնքի եպիսկոպոսը և երեխ նոյնպէս նահատակութեամբ կնքեց իւր կեանքը։ Նորա բազմաթիւ գրաւածներից պահուած համարուամ էին միայն «Բնգգէմ հերձուածոց» հինգ ընդարձակ գրքերը, որտնք այդ կարգի գրուածքների մէջ առաջին տեղն են բռնուամ և առհասարակ ամեննամենծ արժէք ունին։ Բ. գարի քրիստոնէութեան ի մօտոյ ծանօթանալու համար։ Սակայն վերջերս գտնուեցաւ նաև նորա «Յոյցը առաքելական քարոզութեան» անունով գրուածքի ամբողջական հայերէն թարգմանութիւնը, որ գերմաններէն փոխադրութեան հետ հրատարակած է և, ինչպէս վերնագիրը ցայց է աալիս՝ ներկայացնուամ է ամփոփումն քրիստոնէական հաւատալիքների այն ձևով, ինչպէս ըմբռնուում էր Բ. գարի վերջերուամ։ Առաջին անգամ հայերէն թարգմանութեամբ գանուեցաւ նաև ամեննահին ջատագովներից մէկի՝ Արիստիդէս փելք սովիայի, Ագրիսնոս կայսեր ուղղած շարադրութեան պահը։

Յունական փիլիսոփայութեան մատակարարած աեստւթիւններով քրիստոնէական գիտութիւնն մշակելու գործը, որին ջատագովները կողմնասակի կերպով միայն նպաստեցին իրենց գրուածներով։ Բ. գարի վերջերէց ոկսած հաստատուն հիմքերի վերայ գրուեցաւ Ազէքսանդրիայում։ Այստեղ հիմնուած «Երեխայից գպրոցը», որի նպատակն էր սկզբուամ հեթանոսութիւնից գարձողներին քրիստոնէական դաւանութեան տարրական գիտելիքների հետ ծանօթացնել և այդպիսով մկրտութեան համար նախապատրաստել՝ շատ շուտով գարձաւ մի բարձրագոյն գիտական հաստատութիւն։ Նորա առաջին նշանաւոր ներկայացուցիչն է Կղեմէս Ազէքսանգրացին, որ մեր ձեւքը հասած երեք գլխա-

Հ ԵՐ գրուածներում կամեցել է ուսումնասիրութեան և նիւթ դարձնել քրիստոնէական կեանքի և գարդապետութեան վերաբերեալ բոլոր խնդիրները, և այսպէս առաջին անգամ առառւածտրանական գիտութեան մի ամբողջացած համակարգութիւն տալ: Սակայն այդ նպատակն իսկ կապէս իրագործել է միայն նորա աշակերտ և յաջորդ Որիգենէսը, որ իւր բազմակողմանի հմտութեամբ, հսկայական գրաւոր աշխատութիւններով, ներփուն ու ամենաընդարձակ գիտանական պաշարով նախնի եկեղեցւոյ բոլոր աշքի ընկնող հեղինակներին գերազանցում է: Բացի դաւանաբանական գրուածներից նա տուել է Ս. Գրքի մի շաբթ ուսումնառակրութիւններ և մեկնութիւններ, բաղմանաթիւ ճառեր, բարոյական ու պատմական խնդիրների բուսաբանութիւններ, և հաչակուած է մանաւանդ իւր «Վեցիջեան» առառուածաշնչով, ուր Ս. Գրքի երրայեցերէն ընագիրն ու յօւնաբէն թարգմանութիւնները կողք կողքի դնելով՝ աշխատում է ժամանակի ընթացքում սպրդած ազուազումներից մաքրել և ճշգրիտ օրինակը վերականգնել: — Որիգենէսի աշակերտ և գլուխի յաջորդ յայտն ներկայացուցիչը Դիոնիսիոս եպիսկոպոս Աղէքսանդրոցէն է, որի գրուածներից միայն հատուածներ են մնացել՝ մի քանիսը հայերէն ձեռագիրներում: Միւս աշակերտաներից նշանաւոր է Գրիգոր Սքանչելագործը, որ Հայաստանի հարեւան Պատուառում քրիստոնէութիւն սարածեց և իբրև Նեռակեռարիսայի եպիսկոպոս այդ երկրի լուսաւորիչը համագիտացաւ: Նա թողել է մի ներքաղեան իւր ուսուցչի համար, մեկնաբանական և այց գրուածներ, որոնց մի քանիսից գարձեալ միայն հատուածներ են մնացել:

ԳԼՈՒԽ Բ.

Եկեղեցւոյ բնդարձակութիւնը եւ վորչական, գլուխական, ծիստեան ու բարոյակրսիկան դրութիւնը Գ. Պարի վերջին:

Ա. Քինոտնեան թեան օնրանձման բնդիանուր երեւոյքը: — Եթէ առաջեալների ժամանակ գաղափարով մեայն ամբող

աշխարհը իբրև աւետարանի քարոզութեան ասպարէզ էր նկատւում և իրականութեոն վերայ չէր հիմնուած այն հաւատը, թէ այդ քարոզութեան լուրն ամէն տեղ արդէն հասել է,—Գ. գարի վերջերին գ աղափարն իսկապէս իրականացած էր և այն ժամանակուայ քաղաքակրթուած ազգերին յայտնի սահմաններում երկիր չէր մնացել, ուր քրիստոնէութիւնը գոնէ նուազ չափով մուտք գործած չինէր: Մի քանի երկներում բազմաթիւ քաղաքներ և գիւղեր կային, որոնց մէջ ազգաբնակութեան մեծագոյն մասը, երբեմն նոյն իսկ ամբողջը՝ քրիստոնեայ էր. կային գաւառներ, որ հեթանոսութիւնը մըայն առերևոյթ, տիրող իշխանութեան ճնշման ներքոյ՝ պահպանուած էր:

Նման երեսոյթ նկատուում է նաև մի ուրիշ կողմէց: Մինչ նախնական շրջանում աւետարանն աւելի աղքատների ու խեղճերի համար էր և իւր հետեղների գերակշող մեծամասնութիւնը հասարակութեան ոտոքին խաւերի մէջ էր գտնում՝ յաջորդ շրջաններում հետզհետէ վատչելի գարձաւ բոլոր գասակարգերին: Վերջին կայսրուները, ինչպէս աւած ակնարկուեցաւ, իրենց հալածանքն ուղղում էին աւելի բարձր գասակարգերին պատկանազ, գերք և ազգեցութիւն ունեցող քրիստոնեաների գէմ, որոնք պատկառելի թիւ էին ներկայացնում պետութեան կարեւը կենտրոններում: Ռւնեսոր գասից, ազնուակոն ընտանիքներից, նոյն իսկ կայսերական տնից ականաւոր հաւատացեալներ ու բաւական թուով նահատակներ յիշւում են նոյն իսկ առաջին երկու գարերում, և նոցա մէջ շատ պատաւաւոր տեղ են բռնում կանայք, որոնք սկզբից և եթ զգալի ծաւայութիւն են մատուցել աւետարանի քարոզութեան գործին: Զատագովները, և մանաւանդ Աղէքսանդրիայի զպոտոց՝ մածաւակէս նպասաեցին, որ կըրթուած և գիտուն մարգիկ սկսեցին յարգանքով վերաբերուել դէպի քրիստոնէութիւնը, նորա գաղափարական սկզբունքներով ոգեսպուել, հոգեոր միսիթարութեան հետ բարձր աետութիւններ ևս որոնել նորա մէջ: Առանձին կարեւորութիւն ունի այն հանգամանքը, որ իմուա ըազմաթիւ հաւատացեալներ կային, մանաւանդ վերջին ժամանակ՝ ամէն կարգի պետական պաշտօնների, մի քանի տե-

գերում նաև զօրքի մէջ. թէպէտ այստեղ նոր կրօնի խոստովանութիւնը աւելի ծանր վտանգների հետ էր կապուած, և սոցա շարքերում աւելի յաճախ են պատահում նահատակներ, քան սոսկ քաղաքացիների շրջանում։ Յամենայն գէպս քրիստոնէութիւնը, նաև քան հռովմէական պետութեան մէջ իբրև ազատ կրօն հռչակուելը և այդպիսով իշխանական դիրք ստանալը՝ իրօք արդէն հանրամարդկային կրօն էր դարձել և իշխում էր մարդկութեան մի աշքի ընկնող մասի հոգիների վերայ։

Ուրիշ բաների հետ քրիստոնեաները հրէաներից վերցրին նաև շաբաթուայ մէջ մի օր սուրբ պահելու և երկո օր պահեցողութեան նուիրելու սովորութիւնը։ Հրէա քրիստոնեաները իրենց աղքակիցների նման սուրբ էք պահում շաբաթ օրը. բայց միննոյն ժամանակ այն օրը եղը Փրկիչը յարութիւն էր աւել՝ նուիրեցին նորա յիշատակին և դարձրին Կիւրակե—տէրունական օր. այդ օրին ժողովութեան խորհուրդը կատարելու համար, և այդ օրը շուտով իւր վերայ վերցրեց նաև շաբաթի նշանակութիւնը ու նորա աեղը բռնեց։ Միայն արենելքում շաբաթը մնաց իրեւ կէս-տօնական օր՝ նորանով, որ այդ օրը շաբաթական պահը լուծում էին և աւելի նշանաւ որ սուրբերի յիշատակին էին կատարում։ Իսկ հրէից երկուշաբթու և հինգշաբթու փոխարէն քրիստոնէութեան համար պահեցողութեան կամ հսկման օրեր դարձան չորեքշաբթին ու ուրբաթը, երբ մինչև ժամի 9-ը ծոմ էին պահում և ապա եկեղեցական պաշտամունքի ներկայ լինում։ Այսպէս և հրէից պատէքի աղդեցութեամբ յառաջ եկաւ տարուայ ամենամեծ տօնք՝ զատիկը։ Բ. դարի կէսերին յայտնի եղաւ, որ Հաւմիում և ուրիշ տրեմաեան համայնքներում, 40 ժամ կամ աւելի պահեցողութիւնից յետոյ՝ զատիկ էին կատարում միշտ այն կիւրակէ օրը, որ լնկնում էր Հրէից պատէքից յետոյ։ Իսկ Փոքը Ասիայում նոյնպիսի պահեցողութեամբ զատիկը տօնում էին հրէաների հետ միասին՝ նոցան տմուի 14-ին։ Հաւանականարար սկզբում այդ տօնք աարքեր նշանակութիւն ունէր իւրաքանչիւրի համար. մի աեղ աւելի նշանակութիւն էին տալիս Քրիստոսի յարութեան յիշատակին, ու ստի ինչպէս ամէն կիւրակէ այդ յիշատակին էր նուիրած, այգպէս էլ տարուայ մէջ մի մեծ կիւրակէ՝ ժամանակով ամէնից մօտ այն գարնային

Թը Եղբ Փրկեցը խաչուեց և յարութիւն առաւ, նուիւթում էին յատուկ յարութեան յաղթական տօնը կատաքելու. իսկ միւս տեղում՝ նկատելով խաչեցեալ Փրկչին իբրև ճշմարիտ գառն Աստուծոյ, ինչպէս նա ինքը խորհրդաւար քնթրէքի միջոցաւ այդ ուսուցել էր՝ նոյն այն ժամին, Եղբ հրէաները պառէքի գառն էին ճաշակում, տօնում էին նորա խաչի մահով և յարութեամբ ձեռք բերած փրկագործութեան մեծ խորհուրդի յիշատակը: Արդ, խնդիր էր, թէ ո՞ր սովորութիւնն աւելի ուղիղ և ամբողջ քրիստոնէութեան համար պարտաւորեցուցիչ պէտք է համարու էր: Այս առթիւ ծագած վիճը երկար ժամանակ տևեց և միայն Նիկիոյ ժողովում լուծուեցաւ նորանով, որ հաստատուեցաւ Հռովմի սովորութիւնը՝ Նիսանի 14-ին յաջորդալ կիւրակէին տօնել զատիկն իբրև յարութեան յիշատակ: իսկ նորա նախընթաց չորեցարթի, հինգշարթի և ուրբաթօրերին կատարել մատնութեան, խորհրդաւոր ընթրեաց և խաչելութեան յիշատակները: Ըստ այսմ և պահեցողութեան ժամերն ընդարձակուեցան, և յառաջ եկաւ քառասնօրեալ պահք:

Զատկից յետոյ ամենահին քրիստոնէական տօնն է հոգեգալուստը, որ նոյնպէս բռնում է հրէից պենտեկոստէի տեղը: Իսկ յայտնութեան տօնը, որ Բ. գարում տօնել սկսեցին, նուիրած էր առաջ Փրկչի մկրտութեան միջոցին իբրև Մեսիա յայտնուելու յիշատակին: յետոյ դուրա վերայ աւելացաւ նաև մարդեղութեամբ յայտնուելու խորհուրդը, կամ ծննդեան յիշատակը, և հին եկեղեցին կատարում էր յայտնութեան տօնը իբրև ծննդեան և մկրտութեան տօն միանգամայն, մինչև Դ. գարում արեմտեան եկեղեցիները սկսեցին առանձին ծննդեան տօն կատարել, ապա այդ սովորութիւնը նաև արևելքում տարածուեց, ու միայն մեր եկեղեցին հաւասարիմ մնաց նախնի աւանդութեանը: Նատ վագ սկսեցին զանազան համայնքներում իրենց մէջ եղած նշանաւոր նահատակների վկայութեան տօներ կատարել, այդ տօներից մի քանիսն ընդհանրացան յետոյ, և այսպէս հետզհետէ կազմակերպուեց եկեղեցական տարին՝ իւր բազմազան տօներով: Սակայն նախ քան քրիստոնէութիւնը լւու եկեղեցն:

իսն կոսղմակերպութեամբ ու ողոշտամունքով միաւու
ոյժ ձեռք կրեէր իւր հետևզների համար և առջաւու
ազդեցութիւն կածէր զրոի աշխարհի վերայ, ուս արդի
հոգեսր մեծ զօրութիւն էր իւր քարոզած ու գործադրին
բարոյտկան սկզբունքներով: Փրկիչը ցանկացել էր, որ նոր
աշակերտանելը յացնենի լինէին իրենց բարի գործերով
յատկապէս միմեռանց սիրելով: և իրաք նոյն ըսկ այս հե
թանոտները, սրմաք քրիստոնէուկամուն հաւատը ծաղքունմ էր
և հաւատացեալներին ափեցփեղ զարդարաւութիւններն
մնարդում, չէին կարող ու բռնալ, որ սուրբ իրենց մամբու
վարդովն ու անձնուէր սիրոյ պատրաստկամութեամբ գ
արտաքոյ կարգի երեսով էին ներկայացնում շըջամպիտակ
եսուկան և ամենասանձարձակ կրքերի առարկէղ դարձան
աշխարհում: Որբերն ու այբները, հիւանդներն ու յշ
մանդամները, գերիներն ու ըանամրինելները, սարքաւ-
թեան և քաղաքական ժանր պայմտների մէջ տաժուապող-
ները, ընութեան գաժան պատահարներից թշուածուացած-
ներն ու այլ հանգամոնքների շնորհիւ աղքանաւութեան
ու քաղցի մատնուածները—ամէնքն օգնութիւն էին գմնում
իրենց հաւատակից եղբայրներից: Ոգնութիւնը լինում էր
թէ մատնուալի կերպով, թէ համայնական մշջացներով:
չեմեւանդ հաւատացեալը կիւրակէ օրերը, կամ ուրին
տօնախամբութիւնների ժամանակ, բերում էր իւրնուէը և
յանձնում եպիսկոպոսն: ուն էլ զնում էր սեղանի վերայ,
որիկ նուիրած էր լինում Աստուծուն, իսկ ժամանացու-
թիւնից յետոյ սարկաւագների միջոցաւ կամ տեղն ու ճեղք
բաժանում էր կարօտեալներին, կամ նոցա տներն էր ու-
զարկում: Մեծ համայնքներում երբեմն լինում էին նաև
շատ խոչը նուիրաբերութիւններ, և այդ նուէրներին,
բացի հեռու և մօտիկ կարօտեալներին օգնելուց, հակա-
ցուում էին նաև ուրիշ շատ անունի պէտքեր, ինչպէս օր-
եկեղեցւ ոյ պաշաճնետների անբուսաթը, աղքան ննջեցեալ-
ների թաղման ժակարը, ճանապարհորդող եղբայրներին ցոյց
տու ած հիւրասիրութիւնը ևը: Կամ վկայութիւններ, որ
շատ սինդամ հեթանոս քաւարդներին Առ ըտժին էր համա-
նում քրիստոնեաների գթասիրութիւննից: Բայց միայն դու
բանով չէին սուրբ հեթանոս աշխարհի համար իրեն ամա-

քեւ աղ հանդիսամնում, այլ նաև իրենց վարդի բարոյակրթական նշանակութեամբ։ Քրիստոնեանեցը կրթեւ էին հրատարակել տիրող անառակութեան, սուսութեան, զօշագութեան դէմ։ Հաստատելով միակնութիւնը և անլուծանելի գարձնելով ամուսնութիւնը՝ նոքա ամէն ջանք գործ էին զնում՝ պաշտպանել ընտանեկան կեանքի սրբութիւնը սովորական դարձած ծայրանյեղ զեղծումների դէմ։ Արգելելով վաշխառութիւնը, ընչասիրութիւնը, կեղծիքը առևտուրի մէջ՝ նոքա հովանաւորում էին ինդին և զրկեալին։ Խուսափելով գազանամարտինը և ժամմնակակից թատրոնի ընծայած անպատկառ տեսալմաներից՝ նոքա մեղմացնում էին բարեկելը, իսրձրացնում՝ ժոգովրագեան բարոյական գիշակցութիւնը։ Նատ նիրադարձնել խոստովանում են, որ քրիստոնէական համայնքի և քրիստոնեայ տնհատների մէջ նկատած բնրոյնուկան կեանքի վեհութիւնը ամենահամոզեցուցիչ վիասոն է եղել իրենց համար նոր կրօնն ընդգրկելու։

Գ և Ո Ւ Խ Գ.

**Աւանդութիւններ եւ հետեր նախ բան Ա. Կուսաւորիչ
Հայաստանում եղած քրիստոնէութեան:**

Ա. Արքայ քաջաւորի դարձն ըստ ասութական աւանդութեան աւանդութեան։ Հայկական աւանդութիւնը քրիստոնէութեան ծագումն Հայաստանում ներտ կերպով կմապսւմ է եղեսական աւանդութեան հետ, որի ասութերէն յիշատակաբանն այսպէս է պատմում։ Աքա ար Ռւքամս, այսինքն Սկ, Եղենիայի թագաւորը, որ Երկարատես թագաւորութիւնից յեմոյ վախճանել է Ծ. թ. յ. Ք., կեսովաննել էր սւզարկել Պազեստինի Ելեւթրոպոլիս քաղաքը՝ Հումիմայեցուց Տերերիոս կայսեր Սևքինոս կուստկալի մօտ։ Այդ գեսպանները ճանապարհուրդութեան մէջոցին մոնում են Երուսաղէմ և միանում այդուեղ հրէաց բազմութեանը, որ գնում էր Քրիստոնի եռենից. տառն օր մնում են, և իրենցից մէկը՝ Անտան, թագաւորի քարտուղարը, և

տեսածները գրի է առնում։ Երբ վերադառնում են նդէ
սիս՝ պատմում են և ցոյց տալիս թագաւորին Անակ
գրածը։ Աբգար շատ զարմանում է և կամննում է գնա
Պաղեստին, Քրիստոսին անձամբ աեռնել։ բայց չի կարո
ղանում, որովհետև Հռովմայեցւոց իշխանութեան առ
գանուած երկրում պիտի ճանապարհորդէր։ Ապա Անակ
ձեռքով մի նամակ է գրում, որի մէջ Յիսուսին գիմելու
իրեւ բժշկի և նորա կատարած հրաշքների հիման վերդ
հաւատացած, թէ նա Աստուած է և Աստուածոյ Որդի
Խնդրում է գալ բժշկել իրեն հիւանդութիւնից, աղա
տուել հրէաների հետամտութիւնից և ապրել իրեն հետ
իւր փոքրիկ խաղաղ մայրաքաղաքում։ Յիսուս ստանալու
նամակը՝ երանի է աալիս Աբգարին, որ առանց իրեն
տեսնելու հաւատացել էր, և յանձնարարում է ասել նո-
րան, թէ ինքը պիտի կատարէ իւր համար սահմանուած-
ները և վերանայ հօր մօտ։ բայց յետոյ կուղարկէ իւ
աշակերաներից մէկին, որ նորան բժշկէ, և բոլոր նոր
հետ եղողները յաւելանական կեանք ժառանգեն, նոր
քաղաքն օրհնուի և ընդ միշտ զերծ մնայ թշնամիներից։
Անան նաև նկարում է Յիսուսին ու պատկերը հետը բե-
րում, պատմում է Աբգարին իւր լսածները։ Պատկեր
պատուաւոր տեղ է գտնում Աբգարի ապարանքում։ Իսէ
Քրիստոսի համբարձումից յետոյ թովմաս առաքեալը
ու զարկում է նորա եօթանասուն և երկու աշակերտների
մէկին՝ Ագգէին, Աբգարի մօտ։ Ագգէն Եղեսիայում իշխա-
նում է Տուրբիտ անունով մի հրէի տանը։ Աբգարը լսում
և հրաւ իրում իւր մօտ։ բժշկութիւն է գտնում նախ ինքը
ապա և իւր շրջապատողներից շատերը։ բոլորերեան հա-
ւատում են։ Թագաւորի հրամանով քաղաքի բոլոր ընա-
կիչներն ի մի տեղ են ժողովուում։ Ագգէն երկար քարո-
զում է նոցա, և գրեթէ ամբողջ ժողովուրդը քրիստո-
նէութիւն է լնդունում ու միլտուում։ Նոցա հետ նաև
քաղաքում ապրող կատարագործ հրէաները։ Եկեղեցի և
շինում է Եղեսիայում, և մի քանի տարի նորադարձների
հովուելուց յետոյ՝ ձեռնադրում է Ագգէոս կերպասա-
գործին եպիսկոպոս, իւր յաջորդ թողնում, խաղաղու-
թեամբ վախճանում և մեծ պատուով թաղուում։ Իսէ

երբ Արգար թափաւոքը վախճանում է, նորա արդի չաւ բահողք Սանտևն Ագդիոսի արունքները ջարդել տալով և առհասակառ է, և որովհետեւ սա չէր կարողացել իւր առեղը եպիսկոպոս ձեռնադրել՝ Փղոտ երեցը գնում է Անահօսը ու ձեռնապրութիւնը ընդունում Սրուպիոն եպիսկոպոսից, որ թւր հարդին ձեռնապրութիւր էր Պետրոս առաքեալի փոխանորդ Հռովմին Ձեփրամսս եպիսկոպոսից:

Այս աւանդութիւնը յայտնի է եղել արդէն Եւսեբիոս Կետարացաւն, որ Գ. կարի ակադեմիոն, իւր նշանաւոր Եկեղեցական պատմութիւնը գրելիս՝ համարել է այն Եգեանից գիւտնում պահուած հին յիշառափականներից առնաւած և, առողերինից յունարին Թարգմանելով՝ համառոտակի իւր պատմութեան մէջ մտցրել Յիոնւսի բերանցի խօսքերը փոխարէն Եւսեբիոս յառաջ է բերում նորա Արքարին գրած մի նամակը՝ նոյն բովանդակութեամբ. Քահ Ագդէ Առաքեալից տնեւանում է Թագէոս։ Ամբողջ աւանդութեան ացմ դունծւած առողերէն յիշառափանը հեղինակին է, վերջաբանի համաձայն՝ «Լաբուբնա, որպէս Սենեկայ, որդի Արշակարայ, դայիր Թագաւորի»։ իսկ Շհանան քարտուղարը վերցրել պահել է այն արքունի պիտիանութեամբ։ Այսուհետ կարպացնէլ է երեք նաև Եւսեբիոս, որ այդ գրուածքը համարել է ժամանակակիցի գործ. բայց քննութանունը ցոյց են տալիս, որ աւտոնդութիւնը յառաջ պէտք է եկած լինի Գ. գրաւում և այժմնան խմբագրութեամք դը առնենած Գ. կալի վերջերին։ Այդ Խմբագրութեամք և մի քանի մասն փոփոխութիւններով նա ամբողջովին հայերէն է Թարգմանուել և յայտնի եղել մեզունում «Հերուբնոյցի պատմութիւն» անունով, որովհետեւ կարուքնա անուան տառերը հայերէնաւմ աջաւարդուել են (Սենակն էլ Անակ է դարձել)։ Ամէնիս կարենոր փոփոխութիւնը հայերէն Թարգմանութեան մէջ այն է, որ Ագդէ առողեալը Եղեսիացում չի մնանամ, ոչ միաւ Ադիսին (փախանակ Ագդիոսի) Եպիսկոպոսուն ձեռնապրելով՝ դնում է «ընդ որբելու քարոզել պաւետարանն Թիուստագի»։

Բ. Եղեսւական աւանդութեան հարկական ձեռնադիւնքները եւ Թայիսու աւանդութիւնը գուծունեարինը Հայուսունութեան Աստվածական աւանդութիւնը ճանաչել է Եղեւ մա-

պատմայը Մովսէս Խորենացուն թէ «Ղերուբնայի» : Թէ Եւսեբոսի Եկեղեցական պատմութեան հայերէն թարգ մանութիւններէց, որ նա միացնելով, ամփոփելով և յա մելումներ անելով՝ յառաջ է բերել իւր պատմութեան մէջ։ Սակայն այստեղ Աբդար Ուքաման, կամ Ուշաման որ արգէն Լաբուբնայի հայերէն թարգմանութեան մէ Աբքամայ էր կարգացուում, ներկայանում է իբրև Հայո թագաւոր՝ Պարթևաց թագաւորների ցեղակից Աբշակոն Աբշամ թագաւորի որդին, որ նախ հպատակութելով Հոռի մայեցիներէն և ապա ապստամբել կամնաւլով՝ շինել է Եգեսիա քաղաքը և իւր գահը Մծրինից այստեղ գոտիտ դրել։ Այդպիսով Թագէսսի առաքելութիւնն էլ սկզբն և եթ իբրև հայերի մէջ եղած է նկատուում, որ Եգեսիա յավ չի վերջանում։ այլ, ինչպէս հայերէն Լաբուբնա ակնարկել էր՝ հրովարտակ է առնում նա Աբդարից աւետարանի անարգել քարոզութեան համար և գնում թագաւորի քեռորդի Սանատրուկի մօտ, որ կարգուած է «ի վերայ աշխարհին և զօրացն»։ Յետոյ պատմուում է թէ ինչպէս Աբդարի մահից յետոյ թագաւորութիւնը եր կու մասի է բաժանուում։ Նորա՝ հայերէն Լաբուբնայի մէ անունը չյեշուած, Անանուն որդին թագաւորում է Եգեսիայում, իսկ Սանատրուկ «ի Հայո»։ Եւ որովհետեւ, ասու է, յաջորդող անցքերը՝ առաքեալի Հայաստան գալը, Ստ նատրուկի գարձը, կրկին հաւասն ուրանալը, առաքեալի ու իւր Սանդուխտ գտտեր նահատակելը, ինչպէս և Ագդ եպիսկոպոսի նահատակութիւնը Եղեսիայում՝ ուրբէներ արդէն պատմել են, ուստի ինքը Խորենացին բաւականանում է համառոտակի յիշելով։

Ուրբէները—նշանակում է երկի ամէնից առաջ «Թագէսս առաքելոյ վկայաբանութիւնը», որն ըստ վերջաբան հայերէն է թարգմանել (չի ասած՝ ի՞նչ լեզուից) ոմն Սամուէլ Եպիսկոպոս և որի Երկու համառոտութիւններ նոյնպէս կան։ Խորենացուն ծանօթ է ըստ իւր վկայութեան նաև Թագէսս առաքեալի ու Սանդուխտ կոյսի նշխարագիտութիւնը, որ տեղի է ունեցել մեր ձեռք հասած յիշատակաբարանի համաձայն Վահան Մամիկոնեան ոզպանութեան օրով, այսինքն ն. դարի վերջում։ Այս

Հաբանութիւնը պատմում է, որ եղբ Փրկիչը համբառնա-
լիս ձեռքը առաքեալների վերայ դրաւ, ու հոգի ներշնչեց
և զանազան վիճակներ քարոզելու ուղարկեց՝ թագէոս ա-
ռաքեալին վիճակուեց «Հայաստան ազգս», և նա ելաւ
Նկաւ նախ «Ասորւոց Միջագետք», քարոզեց ու հրաշքներ
գործեց, Ուռհա քաղաքում Աբգար թագաւորին բժշկեց,
ամբողջ քաղաքը լուսաւորեց և, աշակերտներ թողնելով
այնտեղ՝ շտապեց հասնել Հայոց աշխարհը, Սանսարուկ
թագաւորի մօտ։ Քարոզեց և հրաշալի բժշկութիւններ
արաւ Արտազ գաւառի Շաւարշան գիւղաքաղաքում, որ
Հայոց թագաւորների ամարանոցն էր, և արքունիքից ու
գրսից շատերը հաւատացին՝ ի միջի այլոց թագաւորի
գուստով, մատաղ և հրաշագեղ Սանդուխտ կոյսը։ Թագաւ-
որը հրամայում է հաւատացեալներին սրամահ անել.
Ճայց նորանոր հրաշագործութիւններ են տեղի ունենում,
արոնց պատճառով նոցա թիւը կրկին աւելանում է. հա-
ւատառում ու միջտուում է նաև առաջնակարգ լշխան-
ներից մէկը, որ Սամուել անունն է ստանում, և մի
մեծազդի տիկին Զարմանդուխտ անունով՝ իւր ամբողջ
ընտանիքի հետ։ Թագաւորն այդ երկուսին էլ և ուրիշ
շատ հաւատացեալների սպանել է տալիս և աւելի գայ-
ցանալով իւր դստեր վերայ, որ նոցա շատերի դարձի պատ-
ճառն եղաւ, հրամայում է նորան ևս նահատակել։ Վերջը
Նահատակուում է առաքեալ՝ հաւատացեալների առաջ-
նորդ թողնելով իւր «Լծակից» Զաքարիային։ Սորա հետ
մէկտեղ նորագարձների մի խմբի առաջնորդ մնում է
Չեմենտոս, որ առաքեալի նահատակութեան միջոցին տե-
ղի ունեցած հրաշըով ուրիշ շատերի հետ հաւատացեալ-
ների շարքն էր անցել։ Սանդուխտ կոյսի նահատակութեան
տեղը Առաքեալը ծածկել էր. իսկ երբ ինքը նահատակու-
ռում է՝ մօտի վէմը պատճառուում ու նորա մարմինը մէջն է
առնում։ Դարեր անցնելուց յետոյ կիրակոս անունով մի
միայնակեաց՝ Շաւարշանի մօտ Սանսարուկ լերան ստորո-
ռում մի այրի մէջ ճգնելիս, տեսիլ է ունենում, որով գըտ-
նուում են թագէոս առաքեալի, ու Սանդուխտի, նոցա
հետ նահատակուած, կամ առաքեալին աշակերտած, հինգ
ուրիշ սուրբերի, նաև Զաքարիայի ու մի անյայտ Խորան

յեւ նշխացնեցք։ Այդ որ բառում են, Վահան Մատելիսնեւ և Յովհաննեկան կաթուզիկոսը (Մանգաւկունի) մենք ըստու թեամբ քաղիս, տոն են հաստարաւմ և քանուած նշխաների մի մասն առնեաւմ են իրենց հետ, Խորենացու ամեարքին համապայն՝ փոխազգութ են «առաջարշը», և նշանակութ է հաւանականաբոր՝ Դուքնի ու Գրիգոր եկացին։

Գ. Աւանդուրիմնեւր Բարդուզիքնես առանձնայի եւ նոյն նախան ըրդամի այդ հարացիչների ու վկաների մասին։ — Խոր նացին յիշում է համառաօտ, որ բայց ու Թագեառից չայսատանի առաքելութիւնը վեճակուել է նաև ու նոյն դուզիմնես առաքեատին, և սա նահատակուել է Հայ մէջ՝ Արեգանսու քաղաքում։ Նոյնը ընդարձակ իրենց պատմում է առաքեացի հայերին վկայարանութիւնը։ Սոյ համաձայն՝ Հնդկաց, Պարթևաց, Մարաց, Եղիմացւաց կոմերը քարոզելուց յետոյ նա գալիս է Հայաստանի։ Գոյն գաւառար, քարոզում, շատերին ի քիստոնէկութիւն գոյնում և մկրտում, ապա թողննելով նացա մօտ քայլ աշա կեդաներից մի քանիսին՝ Սանատորուկի թագաւորութիւն 29-րդ տարին մանում է Հայուստանի կենտրոնակուն մազուր հարկաւոր էը Թաղէտափ առաքելութեան պահան քացնել։ «Արտաշու» բցրի մօտ հանգիպում է 12 առաքեան ներից մէկին՝ Յուգա Յակովիքեանին, հանգիպման ակզու մի խաչ են կանգնեցնում, և բաժանուելով նորանից՝ գայլ է Հեր և Զորեւանդ գաւառուները, կանդ առնում Բարքիան քաղաքում։ Այստեղ ուրիշ հաւատացեալների թաւո նորան աշակերտում է Սանատորուկ թագաւորի քոյց նոյն։ Թաղաւորին իմանալով դայրանում է և ուղարքու Տեղենտիսս հազարապետին նորան ձերբակալելու։ ըստ նա ըստութիւնից բժշկում է հազարապետին և մկրտու Ապա գալիս է մէկ ուրիշը և առաքեալին Ոդոհի կոյսի միւս աշակերտաների հետ ատեան առնում, ուր նորասատիկ տանջում են և Ոդոհու, հազարապետի ու պ հաւատացեալների հետ նահատակում։ — Բարգուղիմէտ առաքեալի մասին կայ նաև այն առանցութիւնը, թ Հայաստան է բերել ու Աստուածածնի պատկերը և, Ան եաց գաւառում Անահակ մեհեամսը կունծանեցը

առելը եկեղեցի շինուած կրծք պահածոյ, ուր և պահածում է
պահած պահմած ու ուր պահմած պահածում ու պահածութիւն:

Խաչքան տեսանքը, և Բարդութեանք վկացարանուն
մենած մէջ քրք զայտառան եկամ շիշուռն է Յանդա
մասկովան առաջեալը, որին ուրիշ յէշտառակարգութեար են
Հայաստանի առաքեալ են համարում և ներմի քարարում
Եպահառափառան ցոյց տալիս: Բայց այդ օսութան 19 առա-
պեսարքի ցանի մէջ նոց առնեն է, Այլ որ Բարդեալը իսկ
Շնորհաւոր և եթէ ի նկատք առնենք, որ Բարդու առա-
քեալը բան վկացարանութեան մէջ ոչ մի ամենուք չիոց
այցն առախ, թէ նա 78 աշակերտներից է, այդ նու ներ-
պայանում է առելի քրք Առ առաքեալքերից մէջ, Կարեց
պահպատգրել, որ հայտախոն առանց ութիւնը արդյուն
ապագիտ էլ ընդունում էր երիտասարդ առաջարարներից
ովհեմ: Յառաւ Բարդեալ Ներքնալին, քրք Հայաստանի
Հայական առաքեալը, ինչ յետոյ, առորդան ուտանակու-
թեան յազմաբուհուն և Արքար թագաւորի պատմութիւնը
Տայացներու համար: Հայէ նորա նորու պահէ 78 աշա-
կերտների թառութ Հայաստանի քարոզութեան դուժին
Պատրիարքի կերպով մասնակցուն: Համարքուում թէ մըս
առաքեալներից Բովնակ՝ Բարդեալը ու դպրոցը, և Սիրոն
Վասնածացի սահմանակից պարսիական նահանգների առա-
քեալը: Ինչ առաքեալների աշակերտներից յիշաւում են՝
Կումսի, որի գերեզմանը ցոյց են տալիս: Ազուլիուում,
Խշչէն, որ Ազուլինից առաքեալն է, Այս: Բարդեան առա-
քեալը մասին երած առանձիւթիւնը յետոյ առելի ըն-
դարձակուել է; և պատմուել, թէ նա նահատակութիւնից
առուշ ճանապարհորդութիւններ է կատարել դէպի հրուժ
և դէպի Կապաէդովիւս, Նորանոր համայնքներ հատքմուլ և
Եղիսկոպոս կամ աթոռներ հատառանել: Խակ Արտազի
Քարտէոպոս տիրան աթոռու հատաք մի հին ցանկ կաց, որի
համաձայն Բարդեան առաքեալը մեռնադրած Բարձարիւցին
կարգաւ յաջորդել են Զեմանուս և Միքանի ուղիւց եղիս-
կոպոտեր: Առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ

Առելի ճիռ: Ա արքէնաւոր է առ Սակեանց և առ Ար-
քանանց մասին եղանք առանցութիւնը ուժեանը ուղ-
ակեն կոչուած են իրենց գլուխութիւնութիւնից, որ յանուա-

թէն բառով՝ Խորհրդանօրէն Ոսկի էր, և համարւո
է Թաղէոս առաքեալիք աշակերտաներից։ Սա իւր ընկերնե
հետ գնում, քարոզում է Հայոց Արտաշէս թագաւորի ո
քունիքում, և Սաթենիկ թագուհու մի խումբ ազգակիցն
որոնք տօրա հետ եկել էին Ալանաց երկրից, հաւասառամ
և մկրտուում։ Արտաշէսի որդիքը հալածում են Ոսկեա
և նահատակում, իսկ նորադարձ ալան իշխանազուննե
կասկածելով նոցանից՝ խոյս են տալիս Զբարաշի լեռնե
և 46 տարի ճգնում այնտեղ։ Ժամանակ անցնելուց յ
տոյ Ալանաց թագաւորը մարդիկ և զօրք է ուղարկեա
նոցա որոնելու, և երբ նոքա չեն համաձայնում թողն
իրենց ճգնարանները և ուրանալ քրիստոնէութիւնը, «
զարկուած մարդիկ նոցա կոտորում են սրով։ Այդպիս
նահատակուում են 15 հոգի, որոնք իրենց գլխաւորի ։
Նունով Սուքիասեանք են կոչուում, այլ և, խոտանար
և երկար մազերով ծածկուած լինելուն համար՝ Քօչ
(վայրի այծեր)։ Բայց զարմանալին այն է, որ նոցա ն
հատակութիւնը տեղի է ունենում արդէն Պարսից ։
պուն թագաւորի օրով, երբ Խորհրդ Մեծ Հայոց թագաւ
որը սպանուել էր և Հայաստան ոտնակոխ էր լինու
օտարներից։ Նոցա մարմինները մնում են անթաղ, մին
ս. Լուսաւորիչ ս. Հոգւոյ ազդեցութեամբ իմանում
նոցա տեղը, գալիս թաղում է և գերեզմանի վերայ վե
յարան կանգնեցնում։

Դ. Աւանդուրեանց պատմական արժեքը եւ բուն պի
մական յիշանակուրիւններ։ — Առաջին եղբակացութիւն
որին պէտք է յանգէր յիշած աւանդութիւնների քնն
դատական ուսումնասիրութիւնը, այն է, որ Եղեսակ
աւանդութիւնը Արգարի դարձի մասին պատահական կի
պով է հայացքած և պատկանում է ոչ թէ Հայոց,
Ասորական եկեղեցուն։ Եգեսիան յունարէն անունն
Ուռհա քաղաքի, որտեղ Քրիստոսից շատ առաջ կէս-
րաբական, կէս-ասորական ծագումն ունեցող թագաւա
ներ էին նստում, և Ուռհա անուան աղաւաղումից յ
ուաշացել է նոցա թագաւորութեան Ուրոյենէ անու։
Քրիստոսի ժամանակ այդ թագաւորութիւնը գըեթէ ս
կախ էր, գեռ բոլորովին չենթարկուած Հռովմէական ։

և խանութեան և միայն Պարթևների հովանաւորութեան գները, մինչ Հայաստանում Արտաշէսի ու Մեծ Տիգ-ը բանի բնիկ թագաւորական ցեղը սպառել էր, և Հռովման յեցիք ըստ համոյից կարգում էին արագ կերպով իրաք յաջորդող թագաւորներ՝ հարևան երկրների իշխանական տներից։ Առաջին դարու Հայաստանում տեղի ունեցած անցքերի պատմութիւնը յամենայն դէպս այնքան ծանօթ է ժամանակակից օտար պատմիչներից, որ Խորենացու պատմածները Արշամի և Արդարի մասին նորա մէջ տեղ գտնել չեն կարող։ Ուրեմն Հայաստանի քրիստոնէութեան նկատմամբ պատմական ճշմարտութիւն որոնել կարող ենք միայն այն աւանդութիւնների մէջ, որոնք Սանտարուկի թագաւորութեան համար են պատմուում։ Իսկ այդ աւանդով թագաւոր Հայերն իրօք ունեցել են, թէպէտ ոչ Քրիստոսի և առաքեալների ժամանակակից, այլ մեզ յայտնի Եղեսիոյ առաջին քրիստոնեաց թագաւորի՝ Արդար Թ. Բար-Մանուկի։

Այս զուգագիպութիւնը արժանի է առանձին ուշագրութեան։ Արդարի պատմութեան մէջ հանգամանքներ կան, որոնք յարմարուում են միայն Բ. դարու վերջերին։ Ելեւթրոպաշլիս քաղաքը, ուր Արդարը գեսպաններ է ուղարկում, այդ անունը ստացել է 200 թ. ին. Փղոս եպիսկոպոսը, ինչպէս յիշեցինք, ձեռնադրուած է Անտիոքի այն եպիսկոպոսից, որ ինքը նստել է աթոռ 190 թ. ին, մինչ գեռ ըստ աւանդութեան նա երէց է եղել արդէն Եղեսիոյ առաջին առաքեալի ժամանակ։ Արդարի յարաքերութիւնը Հռովմայեցւոց հետ այնպէս է, ինչպիսին կարող էր ունենալ միայն Բ. դարի վերջում ապրող Եղեսի թագաւորը։ — Նման հանգամանքներ նկատում ենք այն աւանդութիւնների մէջ, որոնք կապուած են Սանատրուկի անոււան հետ։ Դժբաղդաքար օտար պատմիչներն այս թագաւորի մասին ոչինչ չեն պատմում։ Նա յիշուում է միայն իրքեւ հայր Վաղարշ թագաւորի, որ խարդախութեամբ գերի բռնությաւ Կարակալլա կայսրից, ինչպէս Արդար Թ. ը, և թագաւորած պիտի լինի 166—200 թուականների միջոցին։ Փաւստոս Քիւզանդացին նորան «առաքելասպան» է անուանում և Թաղէոս առա-

քեալի քարոզութիւնը պատմող գրուածքի մասին յիշում
է այնպէս, որ Ենթագրել է առաջ, թէ այդուղ Աբգու
անուն չի եղել, այլ Սանատրութն է նկատուել իբրև Հա-
յոց իսկական թագաւոր և սկզբէց մինչեւ վերջ հալտօնու
քը իստունէութեան: Նայն նիւգունդացին պատմում է, ո
ւ. գարում Պարսէկները Հայոց թագաւորների գերեզման-
ները բանալիս չեն կարողացել Սանատրուել գերեզմանը
բանալ, այնչափ ամսւր և հակայտկան շինուածք է ունե-
ցել: Առհասարակ նորա մասին ազգային պատմութիւն
մէջ մնացած յիշատակութիւնները ցայց են տալիս, ո
մեր ամենազօրեղ թագաւորներից մէկն է եղել և վիպտ-
կան զբոյցների առաւտ նիւթ առւել: Հաս հուանական է,
որ Մծբինը նորա ժամանակուոր մասրաբագազն եղած լին,
և այդպիսով առիթ ներկայացած Ուռ. հայեցիների և հո-
յերի մօտիկ յարացերութեան: Խսկ Ռսկեանց ու Առւցիո-
սեանց մասին աւանդուտծները հասկանալի կդառնան ով
դէպրու մ միայն, եթէ համարենք նոցա Բ. գարի վերջե-
րին Հայաստանու մ հալածուած քը իստունէութեան հե-
տեղները: Քանի որ Սուրբասեանք ապրում են Պարոց
Դապուհ թագաւորի ժամանակ՝ Գ. գարի միջոցներում,
նոցա ու սույնի Ռսկեանք ևս հարկաւ առաջին գարի մոր-
դիկ լինել չեն կարող, և այն «մեծ թագուհին», որի մօտ
սուզա քարոզում են և որի որդուց ձեռքով նահանապիտ-
թիւն են ընդունում, Գ. գարու սկզբներին պէտք է առ-
րած լիներ, միշտէո է՛ իրօք Վ.աղարշ թագաւորի կինը:
Այդպիսով կմնայ հետեցնել, որ Ռսկեանք քը իստանէու-
թիւն ընդունել են Սանսարուեկի օրով Հայաստան եկած մէ-
քարոզից: և եթէ Աքդարի գարճի պատմութիւնը ազա
յիշում թիւն և վկայաբանութեանց ոռով ձեռակերպաւք մէ
փոխանցու մն է՝ Բ. գարի վերջից առաջին գարի միջոց-
ները, այն անցքելի, որոնք աեղի են ունեցել իսկապէս
Աբգու Ի. քը իստունեայ թագաւորի օրով, անհիմն չի
լինի հարկաւ նման փոխանցում Սանսարուեկի թագաւոր-
ութիւնն գէպքերի համար ընկունել: Ասորտկան և հայ-
կակոն աւանդութիւնների միմէանց հետ կապուելու
գլխաւոր որ պատմածառն ևս այն կարելի է համարել, որ ամե-
նայն հպւանականութեամբ Եղեսիայից եկած քարոզիչների

Ներքով պիտի տուրաֆուստ մինչ քրիստոնէութիւնը հա-
կ յերե մէջ։ Այդ հաստատում է և մօջի այլոց Խորե-
անացու պատմացիք Բարգարականի մոգին, թէ նա Հայութաւու-
նի եկել քարոզեցու և մագսագի է իւր գրուածներով Մար-
քոննեանց գէմ։

Գարդավ ա. Բարգուղիմէոսի վեպյաբանթւթեան՝ այն
ժեռվ, ինչպէս մեզ է հարել, յերեւրան է անշուշտ ու շ-
ժամնիակի, Թագէոս տապեամի վիպյաբանթւթեան նե-
տեղութեամբ բայց տւանդութիւնը, թէ նա Հայութաւու-
նի առաքեալ է եղել, պւելի հին և և շատ պնդամ յիշ-
շուած զարք եկեղեցական հայրեցից։ Դասցէ այդ տւան-
գութեան մէջ հետքեր կարելի է քանիզ այն համապահան-
քի, որ բացի նգեսիացից ուրիշ մի նախապարհով էլ քրիս-
տոնէութիւնը մաւոր է գործել Հայութաւունի։ Ա. Կայարանու-
թիւնն իսկ հարգութիմնոց պատքայի Դասթիւց Հայութ-
աւուն գալը այնպէս է պատմաւի, որ կարելի է մուտքել,
թէ Դոզթիւնը Հայութաւունում չէ։ և երգ մեր երերի այդ
պարեմտեան մասեղը Ա. և Բ. գարերում Մարաց թագա-
ւորի իշխանութեան ներքոյ են եղել Խոկ նոյն ժամանա-
կուայ Մարաց Երկրի մասին յայրոնի և, որ բրազմաթիւ-
նը էաց ընակիցնեց անելը և ըրբական ազդեցութիւնն այն-
քան զգեզ էր, մինչ Քիմսուոսի փամակականից թագաւոր-
քական ընտանիքը հրեսութիւն է ընդունել, յատկապէս
նրաւառագէմում բարեգարձութիւն անոց այն Հեղինէ թա-
գութիւնն, որին մից Խորենացին Արքարի մայր է համարում
և քրիստոնեայ։ Եաւ անհաւանական չէ ուրեմն, որ ինչ-
պէս ուրիշ պէզեր, այնպէս և այսուղ քրիստոնէութիւնը
հրէաների մէջ օգու ընդունելութիւն գտած լինէր՝ նախ
Մարաց, և ազգ Հայերի մէջ։ Ա. Բարգուղիմէոսի վկայա-
բանութիւնները առար չեզուներակ Աստիապրուեի փոխարէն
մի ուրիշ հայ թագաւոր են յիշում, ոյք Խորան նպո-
հատակնել է և որի անունը, ինչպէս և որուաքեալի նոր-
հատկանութեան տեղի անունը, շատ պատւագուած է, և
գժուար է որոշել թէ ի՞նչ ժամանակի ու քաղաքի մագին
է Խորքը։ Բայց երեսում է, որ նորան նախապարհութիւնը
այն պատճառու միացն յետայ Սահագրուէին և վերա-
գրաւել, որ առ էր հայկական աւանդութեան մէջ յազանք

«առաքելասպանը», և եթէ մի առաքեալ նորա ձեռքով է սպանուել, ժամանակակից միւս առաքեալի սպանութիւնն ևս նորա ձեռքով կատարուած պիտի համարէին:

Եղել է արգեօք ո. Բարդուղիմէոսի կամ «Մարտկան» մի առաքելութիւն և աւելի հին է, քան ո. Թագէսօմիւր կամ «Եղեսական»ը, ինչպէս մի քանի նշաններ ցոյց են տալիս, — չենք կարող հարկաւ որոշ ասել. ինչպէս և առհասարակ մեր ձեռքում եղած աղբիւրներով պարզել չեղարելի, թէ որչափ հին է քրիստոնէութեան առաջին քարոզի մուտքը Հայաստանում և ո՞ր կողմից է տեղի ունեցել: Եթեև հաւաստի պէտք է ընդունել միայն, որ արգէն Ա. գարում աջքի ընկնող քանակութեամբ հրէանեց կային այստեղ և հաւանականաբար աւելի քաղացան Բ. գարում. որ մեր երկերը գեռ Քրիստոսից շատ առաջ՝ մանաւանդ Տիգրան Մեծի օրերից սկսած, կենդանի յարաքերութեան մէջ է եղել թէ Պաղեսատինի և թէ Հռովմէական պետութեան այլ նահանգների հետ, որոնք քրիստոնէութեան սրբան դարձան: որ եթէ ո՛չ հարաւից, գոնէ աբեմուտքից և արևմատահիւսային կողմից սահմանակից էր նա այնպիսի երկների, ուր արգէն Ա. գարում քրիստոնէութիւն է քարոզուել, և լինելով նոցա պէս Հռովմէական գերեշխանութեան ներքոյ՝ որոշ տեսակէտից նման քաղաքական և քաղաքակրթական պայմանների մէջ էր գտնուում: Ապա ուրեմն ոչինչ չի արգելում մտածելու, թէ ինչպէս այդ երկներում շատ վաղ տարածուել է քրիստոնէութիւնը, նոյն կերպ կարող է նաև հայերի մէջ մուտք գործած լինել: Հարկաւ ո՛չ մի պատմական փաստ չունինք, թէ 12 առաքեալներից մէկն ու միւսը իրօք եկել է այստեղ քարոզութեան. ընդհակառակը պէտք է ի նկատի առնենք, որ Հայաստանը քաղաքականասպէս այնպիսի խառն վիճակի մէջ էր Ա. գարի կիսին և այնչափ ենթակայ անընդհատ կրկնուող պատերազմների, մինչ եթէ եկող էլ լինէր՝ հազիւ յաջողութիւն գտնէր այսաեղ: Բայց 66 թ.-ից ի վեր, երբ Տրդաս թագաւորը հաստատուում է գահի վերայ և խաղաղութեան մի բաւական երկարաժամկետ շրջան է սկսուում, նոր կրօնական շարժման համար ազատ ասպարէդ կար, և այդ շրջանում կենդանի մնացած առաքելական քարոզիչք:

Ները կարող էին հեշտութեամբ լրենց գործունէութիւնը մինչև մեր երկրը տարածել. մանաւանդ որ նոցա քոլորի հաստատ համոզմունքն էր, թէ իրենք պարտականութիւն ունին աւետարան քարոզելու աշխարհի բոլոր ծայրերում, ուր միայն հնարաւոր է: նշանակալից է յամենայն դէպտ այն հանդամանքը, որ Գործք առաքելոց Բ 9. ս. Հոգւով ազգեցութեամբ լեցուներ խօսող ազգութիւնների շարքում անպատճեն կերպով դրուած «Հրէաստանի» փոխարէն՝ Տէրտուզիանոս (ինչպէս և Ե. դարբում ս. Օգոստինոս) Հայաստան է կարդացել. թէ որպիսի իրաւունքով, դժուար է ասել. բայց պարզ է գոնէ, որ նա ոչ միայն իւր ժամանակ (Գ. դարի սկզբին) քրիստոնեայ հայեր լինելու մասին ունեցած ծանօթութիւնն է ցոյց տալիս դորանով, այլ և այն համոզմունքը, թէ այգապիսէք եղել են արդէն Ա. դարբում՝ Գործք առաքելոցի գրութեան ժամանակ:

Փոքր Հայքի մէջ Բ. դարբում քրիստոնէութեան տարածուած լինելը արդէն յիշել ենք: Պէտք է ենթադրել, թէ իւր քրիստոնեայ զինուորներով հռչակուած «Մելիտինեան» գնաթի հետ մի կապ ունի այն հին լատինական վկայաբանութիւնը, որի համաձայն Աղքանոս կայսեր օրով (117—138) Արարատ լերան վերայ մի բիւր զինուորներ են խաչ հանուել: Արգեօք այս աւանդութիւնը չէ յիշեցնում, թէ Մելիտինէում ապրող Բ. դարու քրիստոնեայ հայերի հաւատակից-ազգակիցներն եղել են նաև Արարատեան երկրում: Այսպէս թէ այնպէս, գոնէ Սանարառուկի մասին վերև յառաջ բերածներից հետեցնել պէտք է, որ եթէ նորանից առաջ շատ տարածուած չի եղել քրիստոնէութիւնը հայերի մէջ, նորա ժամանակ այնչափ էր տարածուած և կարեւորութիւն ստացած, մինչ ծանր հալածանքի պատճառ գտնուեցաւ: Սանդուխտի յիշատակը, աւելացրած վրան Ուռիու, Զարմանդուխտի և Սուքիատեանց վկայաբանութիւնները, իրաւունք է տալիս ենթադրելու, թէ Հայոց արքունիքում ևս մուտք էր գտեր քրիստոնէութիւնը՝ յատկապէս տիկնանց դասի մէջ, և գուցէ դորա հետքերն են, որ յետոյ պալատական անձինք և Տրդատի քոյըը այնպիսի կարևոր գեր են խաղում նորա գարձի պատմութեան մէջ: Ուկեանց և Առւքիասեանց

զկայաբանութիւնները հաւանական են զարմենում, որ Կանագունքը յետոյ էլ հալածանկներ են եղել Հայառառնում քրիստոնեաների դէմ և անհիմն չէ Խորհնացու պի վկայութիւնը, թէ Խորրով Մեծի օրով շատերը նահատելու ել են: Վերջապէս Լուսաւորչից առաջ Հայոց մէ ոչ միայն քրիստոնեայ անհատներ, այլ նաև ամբողջ կողմակերպուած համայնքներ գտնուելու ամէնից հաստատն պատմական փաստն այն է, որ Գ. դարի կէսում Ազգանդրիոյ Դիսնիսիոս եպիսկոպոսը մի թուղթ է գրել Հայոց Շեհրուժան եպիսկոպոսին: Մեհրուժան անունից հետցնում են ոմանք, որ այդ եպիսկոպոսի աթոռը Վասարուրականի կողմերում պիտի եղած լինի. յամենայն գէտոնչ պատճառ չկայ Մեծ Հայաստանից դուրս, Պոգր Հայքում, որոնելու այն, ինչպէս արել են ուրիշները:

Ե Ր Զ Ա Ն Բ.

Քրիստոնէութեան հաստատուիլը Հայաստանում եւ նորակազմ եկեղեցւոյ մահառումը ներդիմ եւ արտահին թօնամիների դէմ:

Գ Ի Ռ Ի Խ Դ.

Հայոց դարձն ի քրիստոնէութիւն:

Ա. Հայաստանի բաղաբական դրութիւնը Գ. դպրում:—
Մէր ազգի պատմութիւնը շատ կէտերում տարբեր ընթացք է ունեցել, քան մննք սովոր ենք պատկերացնել Խորենացու նկարագրածով: Օտար պատմէնների համաձայն, ինչպէս ակնարկեցինք առաջ, Կարստկալը կայուրը 211 թ.-ին նենգութեամբ կարանաւորեց Հայոց Վաղարշ թագու պրին, և սա մեռաւ բանառում 216-ին. իսկ առաջ որդին Տրդաս Բ. թագ ստացաւ Կարստկալլացի յաջարք Մակրինոս կայսրից 218 թ.-ին: Այդ ժամանակ արդէն մի մեծ քաղաքական յեղաշրջաւումն էր սկսուած: Հայաստանի սուհմանակից և բազմազան պէրտ կապերով նորա հետ կապուած Պարթևաց պետութեան մէջ: Արտաշիր Սարգս-

— Նեան՝ հպատակ իշխաններից մէկը, ապատամբել էր և ան-
գախ պարտկական թագաւորութիւն հաստատելով նետ-
քնետէ նուանում էր Պարթևաց արևելեան նահանգները:
— Զ26 թ. մին մի քանի վճռական ճակամարտների մէջ նա
վերջնականապէս խորտակեց Պարթևաց զօրութիւնը, որոնց
վերջին թագաւորն Արտաւան սպանուեցաւ պատերազ-
մում, և նորա որդիքն ապաւինեցին Հայաստան: Արտաշէք
Հափշտակեց այդպիսով արքայից արքայի տիտղոսը և տէք
Կարձաւ գրեթէ բողոք նախակին պարթևական երեխներին.
Բայց Հայաստանին տիրելու վորոն անյաջող անցաւ: Մեր
Ագաթանքեզոսի պատմեցով՝ Հայոց թագաւորն էր այդ
օրերում Խոսրով՝ Վաղարշի որդին, որ ուրեմն վերոյիշեալ
Տքատ Բ-կ Եղբարին ու յաջորդը պէտք է եղած լինի: Օտար
պատմիչները չեն հերթում Ագաթանգեղոսի պատմածը,
որի համաձայն Խոսրով տառը տառի շարունակ պատերազմ
մկեց Արտաշրէ գէմ (228—238) և անպարտելի մնաց,
մինչև որ դաւաճանութեամբ սպանաւեցաւ. ընդհակա-
ռամկն նոցա հարևաններից յիշառակութիւններից երեւում է,
որ նոյն իսկ Խոսրովի մահից յետով պարտիկներն անմիջա-
պէս շիաբոզագան նուաճել Հայոց Երկիրը: Հարկաւ Հա-
յաստանը միայն սեփական զօրութեամբ չէր ընդգեմթղթում:
Գանուերով հռովմայեցւաց գերփշխանութեան ներքոյ՝
Պարթևաց անկումից յետոյ նա տւելի մեծ չափով կարիք
պէտք է զգար նոցա յաքելու և նոցա մատ պաշտպանու-
թիւն սրճնեցու. իսկ նոքա պիտի աշխատէին թոյլ չտար,
որ Պարթևաց իշխանութեան տեղ մի տւելի վտանգաւոր
և թագմ ուժերքի տէր ախոյեան հանդէս գայ յանձնն Սա-
ռանեանց: Յիրաւէ մի շարք հոռովմէական կայսրներ վո-
լովասակի յաջոգութեամբ արշաւանքներ յանձն առին սոցա-
դէմ և թէպէտ նպատակին ջնասան ու շընմիեցին սոցա,
բայց գանէ սահիպեցին նախկին սահմանների մէջ մնալ.
Հայերն էք՝ մասամբ այդ արշաւանքների շնորհիւ, մասամբ
հեռափառացին ազգերի կողմից գտած օդնութեամբ, պահե-
ցին կիենց տնկակութիւնը: Փէկիպապոս Արաբացի կայսրը
Զ44 թ. մին վճարած մի ամօթազի դաշնագրութեամբ ճեռք
Եթ. վերընում հայպատակից այնուամենալիւ հպեզը շա-
րունակեցին իրենց ընդգիւմադրութիւնը՝ ոչ առանց նոր

մայեցիների գաղտնի օգնութեան, և միայն 253 թ.-ի Արտաշը յաջորդ Նապուհ թագաւորը (242—272) կար- դացած պիտի լինի տիրել Հայաստանին. իսկ Հայոց Տրդա- թագաւորը, մի օտար պատմիչի ասելով, այդ ժամանակ է խոյս տուել և ապաւինել Հռովմայեցւոց երկիրը:

Այս կէտում շփոթութիւն կայ Ագաթանգեղասի պատ- մութեան մէջ: Հաւանականաբար ճիշտ է նորա պատմածը թէ Խորովի մահից յետոյ Տրդատ էր «մանկիկ փոքրիկ»: բայ սա անմիջապէս դայեակների ճեռքով «ի դուռն կայսեր» չ տարուել, այլ երեխ հայ Նախարարների ինամակալութեան ներքոյ ժառանգել է իւր հօր թագաւորութիւնը. մինչ որ 15—16 տարեկան դեռ տղայական հասակում սահ. պուած էր տեղի տալ Պարսից զօրութեան առաջ, որոնց օգնում էին, ինչպէս Ենթաղրել կարելի է նղիշէի պատ- մութեան մի կարեսը ակնարկից՝ իւր «Հայրասպան հօր- եղբայրները»: Այդ գաւառնան ազգականները հաւանա- կանօրէն գաղտնի գաւադրութեան մէջ լինելով Պարսի թագաւորի հետ՝ սպանել էին Խոսրովին, Պարսից Երկիր փախել և շարունակ աշխատում էին վերադառնալ ու խլել թագաւորութիւնը Տրդատից, որ և յաջողուեց 253-ին Նապուհ՝ Հայաստանին տիրելով, ըստ Երևոյթին առանց այլեայլու թեան չի միացրել այն իւր Երկրի հետ, այ Տրդատի նենգաւոր հօրեղբայրներից մէկին թագաւոր Հաստատել այնտեղ, և դա է գուցէ այն Արտաւագ- անունով Հայոց թագաւորը, որի մասին օտար պատմիչնե- յիշու մ են 260 թ.-ին: Նոյն այդ թուին Հռովմայեցւոց Վա- զերիսնոս կայսրը Պարսից գէմ վարած անյաջող պատե- քավմի մէջ գերի էր ընկել. բայց Հռովմէական գերիշմա- նութեան ներքոյ գտնուող Պալմիրայի Ողենատոս թագա- ւորը Հռովմայեցւոց զօրավարի հետ միացած յաջորդ տա- վին սաստիկ ջարդ տուաւ Պարսից զօրքերին և հասա- պաշտորեց մինչև իսկ նոցա Տիգրոն մայրաքաղաքը: Հաւա- նականաբար հայեցն ևս այդ ժամանակ ելան նոցա իշխա- նութեան տակից, և գուցէ Տրդատ վերադարձաւ, հալա- ծեց Արտաւագդ թագաւորին ու նորա կողմնակիցներին և հաստատուեց հայրենի գահի վերայ: Սակայն այն հանգա- մանքը, որ Ագաթանգեղոս Տրդատի թագաւորութեան

Թալիրանալը կապում է Գոթաց մի արշաւանքի հետ, ուր նա առանձին քաջութիւն է ցոյց առւել և իբրև վարձասորութիւն «Յունաց թագաւորից» թագ ու օգնական զօրք ատացել, տրամադրում է ենթագրելու, թէ ծրդատի վերադարձը տեղի է ունեցել աւելի ուշ, 267 թուից յետոյ։ Այդ թուին իրօք Գոթերը մի մեծ արշաւանք են գործել Փոքր Ասիայի նահանգների վերայ, ուր հաւանականտքար ապաստանած էր և Տրդատ։ Նոցա գէմ մզած պատերազմի մէջ սպանուեցաւ Ողենատոս թագաւորը և սուբքա իշխանութիւնը ժառանգեց իւր կինը՝ Զինորիա թագուհին, որ թշնամացաւ Հռովմայեցիներին և պատերազմի բունուեց Աւրեղիանոս կայսեր հետ։ Զինորիայի դաշնակիցների թուում յիշուում են և հայերը. բայց Աւրեղիանոսի համար ևս պատմուած կայ, թէ կարողացաւ հայերին իւր կողմը ձգել։ Գուցէ մի նշան է այդ, որ հայերի մէջ գեռ երկու կուսակցութիւններ կային։ Տրդատի կուսակցութիւնը Հռովմայեցիների կողմն էր բոնում, իսկ նորա հակառակորդները գէպի Պարսից կողմը հակուած լինելով՝ դաշնակից էին դարձել Զենորիային։ Յամենայն գէպս յայտնի է, որ Աւրեղիանոս 273 թուին վերջ տալով Զենորիայի թագաւորութեան և գերի վերցնելով՝ նորան՝ ի միջի այլոց տարաւ իւր հետ նաև հայ գերիների և իւր վերայ վերցրեց «Հայական» պատուանունը. ուրեմն հաւանականօին առաջ բոլոր հայերը Հռովմայեցւոց իշխանութեան տակ չեին և նա գոնէ Հայաստանի մի մասը նորից նուաճեց։ Եթէ Տրդատ Ողենատոսի յաղթութիւնից, կամ Գոթաց արշաւանքից յետոյ, թագաւոր էր հաստատուել Հայաստանի մի մասի վերայ, այժմ կտիրանար երեկ ամբողջ երկրին. բայց յաջորդ տարիներն ևս նա խաղաղ իշխանութիւն վայելել չէր կարող, որովհետեւ շարունակ պատերազմներ էին տեղի ունենում Հռովմայեցւոց և Պարսից մէջ՝ սկզբում ո՛չ յաջող առաջինների համար, մինչև որ Կարսոս կայսրը 283 թուին յառաջ գնաց, Միջագետքը գրաւեց, պաշտօնեց ու առաւ նոյն իսկ Ցիզըն մայրագաղաքը։ Սորա յանկարծական մահն արգելք եղաւ այդ յաղթութիւնների պտուղն իսկոյն քաղելու, և միայն Դշոփետիանոս կայսեր 286 թուի վերջին կապած դաշ

գրութեան համաձայն Հայաստանը՝ Տիգրեակ այս կողմէ
եղած միւս երկրների հետ, մնում էր հաստատապէս Հռով
մայեցւ ոչ գերիշխամնաւթեան ներքոյ:

Երեք այս գաշնազըութեան շնորհիւ Ցրդառի թու
գաւորութիւնը վերջնականապէս ապահովելու ցիշողու
թիւնն է, որ Խորենացին Տրդատի գահ բարձրանալը հո-
մարում է Դիսկզետիանոսի իշխանութեան երրորդ տա-
րին. մինչդեռ Ակաթանգեղոսի Գրեկն և Կրեկն անդամ
յիշատակելը, թէ Տրդատ իւր կեանքի բոլոր պեղը ան-
ցել է Պարսկաց դէմ զսրած պատուերազմէրի մէջ՝ Սայց և
տալիք, որ նորա թագաւորութեան գմնէ մի աշքի բնէ-
նող մասը նախընթաց պատերազմական շրջանում է տեղի
ունեցել, և ոչ ամբողջը յաջորդ, համեմատաբար խազար
ժամանակամիջոցում: Ցիրտիկ Հայաստանը գարձեալ և
անդամ պատերազմի ասպարէզ դարձաւ 296 թ-ին, երբ
Պարսկա ներսեն թագաւորք ծանր զօրքով եկաւ գրաւել
այն, և Գաղերիս Կեսարը նորա դէմ ելնելով՝ առաջի
անդամ պարտութիւն կրեց. բայց շուտով նոր զօրք ժո-
ղովից սա և այնպիսի փառաւոր յաղթութիւն տարաւ,
որ, 208 թ-ին կարած գոյշնազըութեամի՝ ներսեն ստէ-
պուած էր ամենածանր պայմաններ յանձն առնել և իր
պառ ձեռք քաշել Հայաստանից: Այնուհետեւ 40 տարի
շարունակ տևեց խազաղութիւնը երկու մեծ պետութիւն
ների մէջ: Եւ մեր ազգային պատմութիւնից չի երեւամ, ո
Տրդատ այս պատերազմի միջոցին բոլորովին գուրս մզուա-
լինի Հայաստանից, ինչպէս եղրակացնել կարելի էր օտա-
պատմիչներից: Հաւանականաբար նա տէր մնաց Երկր
մի մասին և օգներով Դադերիտին պարագների դէմ՝ գաշ-
նադրութիւնից յետոյ ընդարձակեց եշխանութիւնը ամ
բողջ երկը վերայ: — Որչափ և մութ ու խառն է մեր երկը
պատմութիւնն այս ժամանակամիջոցում, երեսում է այ-
նաւամննայնիւ, որ չնայելով երկարատև պատերազմների
և իւր ենթագրեալ վիճակին՝ քաղաքակունապէս պատեկա-
ռելի մի զօրութիւն էր ներկայացնում նա ու աւելի զօրա-
ցաւ Տրդատի ուժեղ բազկի ներքոյ յաջորդ խազա-
շրջանում: Եւ այդ զօրութեան ու խազաղութեան օրեւ-
ռում քիչտեսնէութիւնը Հայոց մէջ աղասի կըօն գուշնաւ

Բ. Հայոց ներքին կեանքն ու հեթանօսական կրօնը.—
Արտաքին պատմութիւնից աւելի անծանօթ է մեզ հայե-
ցի ներքին կեանքը քրիստոնէութիւն ընդունելուց առաջ:
Խոքը և շատէ գաղափար ստանում ենք այն ժամանակից,
երբ ազգային հեղինակները սկսում են զբաղսւել մեր ան-
ցեալով, և ահա դոցա նկարագրութեամբ սկզբեց և եթ
տեսնում ենք Հայաստանը բաժանուած մի շարք նախա-
լարութեանց մէջ, որոնք գրեթէ անկախ իշխաններ են
իրենց երկրներում և շատ անգամ կենդրոնական իշխա-
նութեան դէմ են դուրս գալիս: Տաղովուրդը շինական
պարզ կեանք է վարում, շարունակ պատերազմների մէջ,
աղէնքը ձեռնին իւր ինքնուրոյն գոյութիւնը պահպանելու
տակլուած և, իւր երկրի աշխարհագրական գերքի, շրջա-
պատող քաղաքական պայմանների շնորհիւ՝ պատմութեան
առարկրէզ ելնել, մեծ գործեր կատարել, սակաւ դէպքե-
րում միայն կարողացել է: Սակայն գտնուելով մի կողմէց
փառաւոր բազմադարեան անցեալ ունեցող արևելքի, միւս
կողմէց յոյնհռովմէական քաղաքակրթութեան աղդեցու-
թեան տակ՝ տնհաղորդ չէր մնացել անշուշտ երկու կող-
մից ևս առատութեամբ ընդունած տպաւորութիւններին,
և նորա նիստ ու կացի, նորա սովորութիւնների մէջ
պէտք է նշանառուէին, այդ աղդեցութեանց հետքերը: Ցի-
քաւէ աղդեցութիւնը նկատելի է և միջի այլոց Հայոց հե-
թանոսական կրօնի վերայ, որի ուսումնասիրութիւնը ա-
մէնից մեծ նշանակութիւնն ունի ու ամէնից աւելի հե-
տաքրքրական է եկեղեցւոյ պատմութեան համար:

Ամենակարևոր տեղեկութիւններ հայոց հին կրօնի
մասին գտնում ենք Ագաթանգեղոսի պատմութեան մէջ:
Այսպէս, Տրդատի առաջին հրօմաքտակից տեսնում ենք,
որ հայոց գլխաւոր տստուածութիւնները երեք են. Արա-
մազդ, Անահիտ և Վահագն: Աւաճին ուշադրութեան ար-
ժանի են այն յատկութիւնները, որ տրուած են այստեղ
աստուածներին: Արամազդի մակդիրն է Արի. Նորանից
սպառում է երկրի պարագտութիւնը, լիութիւնը: Հայոց
երկրի բուն խնամակալն է Անահիտը. իսկ Վահագն քաջու-
թեան աստուած է: Զարմանալի է մանաւանդ այն կա-
ռևորութիւնը, որ արուել է յունական վիլխովայութեան

և քաղաքակրթութեան, մինչ աստուածների բաշի բարեխներիս համահաւասար է համարւում յունաց իմ տութիւնը:

Ցիշած աստուածներից ամենասերելին և կարել ասել ամենազգայինը, թէս ուրիշ արևելեան ազգ մէջ էլ նա պաշտում էր՝ Անահիտն է, որի գլխա մեհեանը գտնւում էր Եկեղեաց գաւառի Նըշղա աւ նում: Նա կոչւում է «Փառք աղգիս մերոյ և կեցուցի «Մայր ամենայն զգաստութեանց»: Նորան նմանեցն էին զանազան յունական աստուածութեանց, աւ Դիանային կամ Արտեմիսին, որ որսի և կուսութեան տուածումի էր: Ուշագրաւ է մանաւանդ այն կէտը, մինչգեռ օտարները խիստ անբարոյական պաշտամունք վերագրում Հայոց Անահիտին, այստեղ ընդհակառա նա ներկայանում է իրեն պաշտպան գդաստութեան բարոյական կետնքի, մի տեսակ մարմնացումն հայ մ գու իւր գերգաստանի տանտիկնոց մասին ունեցած գ զափարիք: Անահտի մի ուրիշ մեհեանը գտնւում էր տիշատում, որտեղ գարձեալ երեք աստուածութեանի ամաստեղ պաշտօն էին մատուցանում: Դոցանից մէկը կեմայր, Ոոկեծին, Ոսկեհատ մականուններն ունէը, որ հաւանականաբար Անահտին էին տրւում՝ նորա հաւ կանգնած սսկէ արձանի պատճառով: Բայց Անահտից ւելի պատուաւոր տեղ բռնում է այստեղ Վահագն, անուանն նուիրուած Վահէվահեան մեհեանը առաջին յիշում, բազմաթիւ քրմեր և ընդարձակ պաշտամու ունէր. իսկ նորա հետ սերտ կերպով կապուած էր Աս զեկի մեհեանը, որ կոչւում է նաև սենեակ Վահագ՝ որովհեակ Աստղիկը այստեղ նկատուում է իրեն Վահագ կին, սիրոյ և գեղեցկութեան աստուածուհի, որ մօտաւ բապէս այն նշանակութիւնը պիտի ունեցած լինէ ժողովրդի համար, ինչ որ Աֆրոդիտէն յունաց և Աստա տէն Փիւնիկեցւոց համար:

Ամենամեծը աստուածներից հարկաւ Արամազդն որի գլխաւոր մեհեանը գտնւում էր Անի կամ Կամ քաղաքում: Նա բոլոր աստուածների հայր էր և հաւ նականաբար նորա պաշտօնը կատարուում էր նաև աւ

անեղ, ուր ուրիշ մեծ կռտտուններ կային, ինչպէս Ար-
տաշատում, Արմատիրում, Բագարանում, Վաղարշապատ
Մայրաքաղաքում ևն: Արամազդ թէկ նոյն անունն է, ինչ
որ Պարսից Ահուրամազդան կամ Արմիզդը և անկոսիած
նոյն ծագումն ունի, բայց նորա գաղափարը և պաշտա-
մունքը հայերի մէջ տեղական բնաւորութիւն է ստացել
և շատ գծերով տարբերում է պարսկականից: Նորան
նմանեցրել են Յունաց Զեսին և նորա անուտն հետ կա-
պել են մի ամբողջ ընտանիք աստուածների: Այսպէս նորա
առաջին ծնունդն էր Անահիտ. Երկրորդը նանէն, որի
մեհեանը գտնուում էր Թիլն աւանում, և իրրե ճարտա-
րութեան ու արուեստի աստուածութիւն նա ամէնից
աւելի նմանում էր Յունաց Աթենասին: Իոկ Արտամազդի
արու որդին համարում էր Սիհր, որ նոյնպէս ըոլոր ա-
քիական ազգերի մէջ պաշտուած մի աստուածութիւն է՝
Կրակի, արեի, լուսոյ ներկայացուցիչ: Նորա գլխաւոր մե-
հեանը գտնուում էր Բագայառին գիւղում:

Այս ընտանիքից գուրս է Բարշամինան, որի մեհեանը
գանուում էր Թորդանում և որի պաշտօնը փոխ է առ-
նուած առողիներից: Հայերի մէջ պատմուող այն առաս-
պելը, թէ Վահագն գնացել յարդ է Կողացել նորանից և
Երկնքի Երեսին թափելով յառաջացել է յարդագողի ճա-
նապարհը՝ ցոյց է տալիս, որ այդ Երկու աստուածութիւն-
ները գաղափարով մօտ են միմեանց և մի տեսակ հառա-
կորդներ են հանդիպանում: Իրօք Բարշամինան կամ Բաալ-
շատմինը ասսորիների մէջ նոյնպիսի Երկնքի աստուած է Ե-
պել, ինչպէս Վահագնը հայերի մէջ, և մըցելով սորա ազգա-
յին պաշտամունքի հետ, մուտք է գտել հարաւ արևելուն
Հայաստանում: Արամազդի ընտաքից գուրս էր նուև Տիւր
աստեւած, որի մեհեանը գտնուում էր Վաղարշապատից
պէտի Արտաշատ տանող ճանապարհի վերայ, Նրագամոյն
Գրշուած աելում, և օր Արամազդի պրիչն էր, գրում էր
Ամարդիանց գործերը, իբրև միջնորդ և պատգամախօս
ներկայանում Արամազդի և մարդկանց մէջ: Որտես նմանե-
ցնում են յունաց Հերմանին:

Արքենք Արամազդի պատկերացումը, թէ անկան ու
աստուածութիւն գր Վահագնը կամ Արամոր անսու-

ծը, որի մեհեանը Բադաւ անում Հայոց ամենամեծ ռւիտատեղիներից էր և որի անուան նուիրուած էին Նաւասարդի ժողովրդական տօները, դժուար է ասել: Բայց աղօտ յիշատակութիւններ ենք գտնում Սազանգարամետ, Փառնակ և այլ այսպիսի աստուածութիւնների մասին, որոնց խիստական գաղափարն ու բնաւորութիւնը անձանօթ է մշնում: Աւելի յայտնի են Յարլէզք, Քաջք և ու Ելշ բազմազան ոգիները, որոնք նաև քրիստոնէական շրջանում մնում են հաստրակ ժողովրդական հաւատալիքների առարկայ և գուցէ առ ելի զեր են խաղացել նորա կրօնական կետնքի միջ, քան բուն պաշտօնական աստուածութիւնները: Այսպէս թէ այնպէս, բոլոր մեր տեղեկութիւնները համեմատելով՝ տեսնում ենք, որ Հայոց հեթանոսական կրօնը մօտիկ յարաբերութիւն ունի դրացի ազգերի կրօների հետ, շատ դէպերում փոխաւութիւններ է արկ նոցանից. Ամէնից աւելի ազդեցութիւն են ունեցել անշուշտ հին պարսիկներն ու Պարթևները, որոնցից առնուած են ոչ միայն գլխաւոր աստուածութիւնների անուններ այլ նաև կրօնական կեանքին ու պաշտամունքին վերաբերեալ շատ բառեր և գարձուածներ: Առորական ազգեցութիւնը կրօնմանկի կերպով է եղել և մի քանի երկրորդական աստուածութիւնների գաղափարն ու պաշտամունքը ներմուծել: Խակ յոյն-հռովմէական քաղաքակրթութեան, մասամբ գուցէ յունաց երկրից բերած արձանների և կրօնական հասկացողութիւնների շնորհիւ, այդ բոլոր աստուածութիւններն ընդունել են աւելի մարդկային և գաղափարական կերպարանք, ասիական վայրագ ըմբռնումներն ու բարերը մեղմացրել:

Կան սակայն առանձնայատկութիւններ, որ պէտք է ենթագրել, թէ միայն Հայոց ժողովրդին էին յատուկ և ցոյց են տալիս նորա ունեցած առանձին գաղափարը կրօնի մասին: Բոլոր նշաններից երեւում է, որ կրօնական կեանք Հայտատանում այնպէս ընկած չէր, ինչպէս Հռովմէական պետութեան մէջ. յունական փիլիսոփայութիւնը և ուրիշ գրգեններ չկային այստեղ, որ աստուածները իրենց յարգը կորցնէին: Հայերի անտարբեր չիննելք գէպի իրենց առածուածները, երևում է օրինակ նսցա բերած հաղուառ

գոհերից և նոցա կատարած փառաւոր տօնախմբութիւննից: Բայց այն հանգամանքը, որ Հայոց աստուածները բարոյական յատկութիւններ են ցոյց տալիս և հայերը պարզ կեանք ունեցող մի լեռնական ժողովուրդ են՝ դիւրամատչելի պէտք է դարձնէր միւս կողմից քրիստոնէութիւնը, որի մէջ այնքան ընդարձակ տեղ են բռնում բարոյական գաղափարները: Պատճառներ շատ կային ուրեմն, որ սա թէ զօրեղ հակառակութեան հանդիպէր, և թէ իւր յարգը ճանաչողներ գտնէր: Հարկաւոր էր միայն որ առաջին քարոզիչները հասկանային յարմարուել նորա հոգեոր պահանջներին, և մենք տեսնում ենք, որ այդ իրօք տեղի է ունեցել կատարելապէս, որ նոքա աշխատել են բարեփոխել, վերանորոգել քրիստոնէական ոգւով այն, ինչ որ հայ ժողովրդի համար սուրբ էր և իւր մաքուր ու բարոյական բնաւորութեամբ համաձայնել կարող էր քրիստոնէութեան հետ: Մեզանում տեղի է ունեցել նոյն երևոյթը, որ, ինչպէս յեշուեցաւ, Գրիգոր Սքանչելագործի ջանքով առատ արգելնք էր տուել հարեան Պօնառոսում, և այստեղ նոյնպէս զորանով է ամենից աւելի բացատրուում, թէ ինչպէս քրիստոնէութիւնը այնքան հեշտութեամբ հաստատուեց ու տարածուեց հայ ժողովրդի մէջ:

Գ. Տրդատի վերադարձն ու Գրիգոր Լուսաւորիչ: —Վերև յառաջ բերած հարեանցի տեսութիւնը Հայաստանի քաղաքական վիճակի մասին ցոյց էր տալիս, թէ որքափ գժուար է որոշել այն տարին, երբ Տրդատ թագաւոր հաստատուեցու: Դորա համեմատ գժուարանում է որոշել նաև նորա գարձի թուականը: Ագաթանգեղոսի պատմելով Տրդատ Հայաստան ոտ գնելուց անմիջապէս յետոյ, Գրիգորին հարկադեց պաշտօն մատուցանել Անահատի արձանին Երիդայում, և երբ ոտ մերժեց՝ անտանելի տանջանքներ տալով, հրամայեց տանել ձգել Արտաշատի ԽորՎիրապը, որտեղից նա ելաւ, նոյն Ագաթանգեղոսի աւելի վաւերական տեղեկութիւնների համաձայն՝ 13 տարի յետոյ (Ագաթանգեղոսի ուրիշ մասերում՝ 15 տարի է հաշուած): Արդ, եթէ Տրդատ թագաւորել է 261 թուին, նորա գարձն ևս կարող էր լինել արդէն 278-ին, Աւելի վիանոսի նուաճումներից անմիջապէս յետոյ:

նշաններ, որ կարծես իբաւունք են տալիս այդշափ վազ գնել հայերի քրիստոնէութիւնն ընդունելը: Բայց նո՞ իսկ այդ գէպքում նոր կրօնի տարածումն ու հաստատութիւնը տեղի կարող էր ունենալ աւելի 284—286 թուերից, մանաւանդ 298-ից, յետոյ տէրող խազազութեան ըքչանում: Ուստի շատ հետու չի եղել ճշմարտութիւնց մեր մէջ ընդունուած այն տեղեկութիւնը, թէ Տրդատ գահ նստած լինելով 287 թ-ին քրիստոնէութիւն ևս ընդունել է 300 թուին: Յամենայն դէպս, որ Դ. գարդ սկզբում հայերը յայտնի էին օտարներին իբրև քրիստոնեայ ժողովուրդ, դորա համար ունենք մի շատ արժէքաւոր վկայութիւն: Եւսեբիոսի եկեղեցական պատմութեան մէջ յիշուում է, որ 312 թուին քրիստոնեայ հայերը մի պատերազմ են ունեցել իրենց հաւատի պաշտպանութեան համար, քրիստոնէութիւնը հալածող Մաքաքմիանու Դացա Կեսարի հետ: Այսպիսով օտար պատմիչներն ևս համաձայն են, որ Տրդատ քրիստոնէութիւնն ընդունեց Կոստանդիանոսից շատ առաջ և առաջին անգ ամ հայաստանում քրիստոնէութիւնը ազատ կրօն հրատարակուեցաւ: Դոցանից մէկն ասսւմ է, որ քրիստոնէութիւնը հրաշքոյ հաստատուեցաւ Հայաստանում, և մեր պատմութիւն հաստատում է Հայոց գարձի այդպիսի հրաշալի բնաւորութիւն ունենալը:

Ըստ Ագաթանգեղոսի Տրդատ թագաւորը ակզրուած հալածող էր քրիստոնէութեան: Նա իւր կրթութիւնն ստացել էր յունական աշխարհաւմ, և յունական փելքիսով փայութեան ուսմամբ վարժուած էր: Նորա օրով մի քանի մեծ հալածանքներ են տեղի ունեցել Հռովմի Կայսրներ կողմից: Բնական է, որ նա ևս իբրև նոցա աջակիցն ու սառադրեալը հետեւ նոցա օրինակին: Մի հրաշալի գէպի պաւած պէտք էր ուրեմն, որ նորան ստիպէր թողնել իւր ներքին ընթացքը և նոր կրօն ընդունել: Այդպիսի մի գէպի պաւած գտնուում ենք Ս. Հովհաննեսան Կոյսերի Դիոկղե: Միանուի ձեռքից փափչելու և Հայաստան գալու պատմութեան մէջ: Թէ որչափ պատմական և մեր երկրին վերաբերեալ նիւթ է տալիս Հովհաննեանց վկայաբանուածենր հապաւոր չէ ստուգել, բայց քանի որ այդ կոյ-

քի համար Լուսաւորչի ձեռքով վկայաբաններ շինուեւ և արդէն Դ. գարում նշանաւոր ուխտատեղիներ ունալու մասին կառկածի տեղիք չկայ, այտք է ընդուռ որոշ առջնութիւն նոցա նահատակութեան և Տրդագարձի մէջ: Աչինչ չկայ անհաւանական, որ Տրդատսն մի առթիւ ծանր հիւանդութիւն ստացած և Գրիգ Լուսաւորչի ազօթքին ապաւինելով՝ բժշկուելուց ոյ քրիստոնէութիւն ընդունած լինի:

Մեր պատմութիւնը կապում է Տրդատի բախտը Հաւանաւորչի բախտի հետ արգէն նոցա մսնկութեան րից սկսած: Գրիգոր Լուսաւորիչը ներկայանում է տոեղ իբրև Տրդատի հայր Խոսրովին սպանող Անակիլին, սերուած ուրեմն Պարթև թագաւորական ցեղից, Տրդատի նման մանուկ հասակում տարուել էր յունացիքը և Կապադովիկոյ Կեսարիա քաղաքում մնուել Խոտոնէական կրօնով, ապա առանց ի վեր հանելու ժամանակ գնացել սպասաւոր էր եղել Տրդատի մօտ՝ լրական մեղքը քաւելու համար: Անշուշտ այս աւանդեան մէջ շատ բան ճոխացրած է, և գուցէ իւր բձից առաջ Տրդատ ամեննեին չէր հանդիպել Լուսաւորչ, բայց գոնէ այնքանը կարող ենք ստոյգ համարել, որ ջինս իւր կրթութիւնը ստացել է Կապադովիկիայում՝ տրիա կամ գուցէ և Սեբաստիա քաղաքում, և իշխական մեծ տնից է եղել: Եթէ նա իրօք Խոսրովի սպանութիւնին էր, իսկ Խոսրովին սպանել են իւր եղբայրներ ապա ուրեմն Տրդատի հօրեղբորոքին պիտի լինէր, որովի սպանութիւնից յետոյ փախցրած Հայուստանից և ցեղ Տրդատից առաջ, Արտաւազդ թագաւորի օրով, այնող վերագարձած: Գուցէ նա այն իշխաններից մէկն էր, նք գերի բռնուեցան Հայուստանում Ռտենագոսի յաղութիւնից յետոյ և այդ ժամանակից ի վեր գտնուում Արտաշատի բանգում, մինչեւ որ մի արտագին քաղական ազգեցութեան շնորհիւ (Զենոբիայի?) ապատուեց:

Տրդատ հաշտուեց նորու հետ, եթե հակամէտ լինելով ատոնէութիւն ընդունելու՝ այլ ևս որ ունենալ չէր ուզ նորա դէմ, իբրև մի յայտնի քրիստոնէի, այւ ընդհառակն շատ բան պէտք է սպասէր նորա աջակցութեան ապաւորչին շնորհիւ (Զենոբիայի?) ապատուեց:

նից: Նշանակալից է յամենայն դէպս այն հանգ ամակը որ կուսաւ սրիչ քարոզել սկսում է հայ լեզուով, իբ հայ մարդ, և մեր պատմութեան մէջ ոչ մի ակնարկ չկդ որից երևաց, թէ նա օտար լինէր հայոց կեանքին և հար սովորութիւններին, երբ և իցէ օտար լեզու գործածէր Ապա ժամանակի պայմաններն ի նկատի ունենալով՝ պէտ է կարծել, թէ այն ընդուրձակ կալուածները և այն իշխանական զերքը, որ ունիք նորա սերունդը և զայելում է անկամ հայրապետական կոչումից, յանկարծակի ձեզ չքերուեցան, այլ առհմական սեպհականութիւն էր, և կուսաւորիչ ինքը ծնուել էր իրեն մի հայ իշխանապն՝ այդ սեփականութեան:

Ըստ Ագաթանգեղոսի Առ սաւ որիչ Վիխապից ելնու է Տրդատի քայր Խոսրովիդայխանի տեսիլքով և Ստու ի խանի ձեւնատութեամբ: Ի՞ որ Թագաւորին, Նորա շը ջապատողներին և ժողովրդին քարոզելուց, Տրդատին միւս հիւանդացած իշխաններին բժշկելուց յետոյ՝ նոր առաջին հոգան է լինում նախ Հուփիսիմետոնց վկայու հիների մարմիններն ամիսնիւլ և ապա շրջելով այն ու դերը, որոնք կենդրոն էին հեթանոսական պաշտաման կործանել կուտաներն ու կուռքերը: Նա սկսում է առ քունիքից և կործանում է նախ թագաւորի հայրենակ շաստաւածների բագիները, որոնք գանւում էին անկա կած աէրութեան նոյն ժամանակի մայրաքաղաք Վաղա շապատում, և հաւ անականաբար այդ թագաւորակ բագիների տեղում էլ շինուեցաւ: առաջին Կաթուղիկէ Հայոց թագաւորութեան և կաթուղիկոսութեան Մա եկեղեցին: Ապա ինքը թագաւորը կար առած՝ նորա հե գնում է գէպի հին մայրաքաղաքը, Արաւաշատ, և այսպ կարդաւ միւս տեղերն է անցնում, իսրաւակում ամենո բեր հեթանոսական ոյժը և Քրիստոսի խաչը կանգնեցնու Բագ իների տեղում: Այդ որիջը ի հարկէ այնպէս գիւրո թեամբ չկատարուեցաւ, ինչպէս որ պատմութեան մ երեսում է. թագաւորի զօքքով գնալն արդէն նշան է, սպասում էր մեծ հակառակութիւնների հանդիպել, նորան ցոյց տրուած զօրեղ ընդդիմագրութեան յիշատա առք է համարել Ագաթանգեղոսի այն տեղեկութիւն:

թէ ուր նա և Լուսաւորիչը գնում էին դեկբը նոցա գիշաց էին ելնում գունդագունդ և առ ժամանակ կուռեցուց յետոյ սահպուած էին լինում տեղի աւալ ու փախշել: Քուրմենին էին ի հարկէ դեկբը, որոնք երեկի զօրեղ դասակարգ էին կազմում և իրենց բազմաթիւ սպասառորներն ու հետեւզներն ունէին: Խնչպէս յետագայ ժամանակի պատմութիւնը ցոյց է տալիս նոքա միանգամից շչքացան, այց բաւական երկար մնացին հաւատարիմ քրենց հին կարգերին և շարունակեցին մաքեր պղտորել:

Առանձին ուշագրութեան արժանի է այն հանգամանքը, որ քրիստոնէութիւնը մեր մէջ մտնում է վերեց գէպի վայր, արքունիքից և իշխանական տներից գէպի հասարակ ժողովուրդը: Լուսաւորիչ սկզբից և եթ մեծ հոգս է տարել նաև Տրդատին և նրան շրջապատող իշխաններին քարոզելու, նոցա որդիներին դասակարակելու: Նոյն կերպ վարուում է նա նոյնպէս քրմերի նկատմամբ՝ մասնաւորապէս ուշագրութիւն դարձնելով նոցա զաւակների կրթութեան վերայ, աշխատելով որ նոցանից կազմուած լինի նաև քրիստոնէայ հոգեւորական դասակարգը, որ նոքա ունենալով նման պաշտօն ինչպէս առաջ էր և վայելելով իրենց ունեցած առաջուայ արտօնութիւնները, փոխանակ հակառակորդ լինելու, պաշտպան ու միջնորդ լինին նոր կրօնի տարածման:

Դ. Ս. Գրիգորի ձեռնադրութիւնը և Հայոց հայրապետական արտօնի կոսպը Կեսարիոյ հետ: — Մեր Լուսաւորիչն իւր առաքելութեան գործը յաջողութեամբ առաջ տանել չէր կարող հարկաւ, քանի դեռ ձեւնոգրութեան շնորհը չէր ընդունել: Նորագարձ հօար պէտք է իւր հովիւներն ու հովուապետն ունենար, և ահա այդ կարիքը լցուցանելու համար Տրդատ մեծ ժողով է գումարուում նախարարներից և տէրութեան առաջաւորներից; և Ս. Գրիգոր ընտրւում է միաձայն հաւանութեամբ, ուղարկուում առանձին շքով Կապագովկիոյ Կեսարիա քաղաքը, որպէս զի Պ. Առնդ արքեպիսկոպոսից եպիսկոպոսական ճեռնագրութիւն ընդունէ և լինի նորագարձ հայ ժողովրդեան հովառապետը նա ինչու կեսարիա գնաց ձեռնադրուելու, այդ մասն

զանազան տեսակ բացատրութիւններ են արուել։ Ընդունելով իսկ, թէ Ս. Գրիգոր Կեսարիայում է ձեռնադրուել որի գէմ լուրջ կասկածներ կարելի է յարուցանել՝ մեկ համար այնտեղ գնալու պարզ բացատրութիւնն այն է, որ այնտեղ էր իւր սկզբնական կրթութիւն ստացել, ու Կեսարիան Հայաստանի մօտ ամենից աչքի ընկնող եպիսկոպոսական աթոռոն էր, քաղաքական կապեր էլ ունէր մեկ երկրի հետ (այնտեղ էր նստում արևելքի հռովմէական գօրաց ընդհանուր հրամանատարը), Հայաստանում գընուած մի եպիսկոպոսից ձեռնադրութիւն ընդունել ան յարմար էր համարւում գուցէ, քանի որ յետոյ իբր քահանայապես պիտի Եշմէր նորո վերայ։ Ղետղիու հայերին գրած նամակի մէջ ասուում է, թէ քահանայա պետական ձեռնադրութիւնը հայերը այնուհետեւ պէտք Կեսարիայից ընդունէին, որից, և առհասարակ ս. Գրիգորի Կեսարիայում ձեռնադրուելու հանգամանքից՝ հետևել բել են շատերը, թէ հայոց հայրապետութիւնը երկու ժամանակ ենթարկուած էր Կեսարիայ աթոռին։ Սակա պէտք է նկատել նախ, որ Ղետղիու նամակի այդ հատուածը պակասումէ արագերէն լեզուով գրուած ս. Գրիգորի վարուց մէջ։ Երկրորդ, որ հայերն լնչպէս տեսան 300 թուից տարբներ առաջ քրիստոնէութիւն ընդունաւ ս. Գրիգոր ևս ձեռնադրուած պիտի լինէր, մինչգեռ Ղետղիու 316 թուից միայն յայտնի է իւրեւ Կեսարիու եպիսկոպոս և եղել է 325 թուին Նիկոյ ժողովում։ ուրեմն նորու ս. Լուսաւորչի ձեռնադրող լինելն էլ աւելի քսկասկածելի է։ Գուցէ իրենք Կեսարիու եպիսկոպոսները ։ Ժամանակ ձգտում ունեցել են իրենց աթոռի իրաւասութեանը ենթարկելու հայերին, բայց որ վերջիններս Կեսարիայից ընդունած ձեռնադրութեան այդպիսի նշանակութիւն չէին տալիս, երեւում է թէկուզ նորանից, ։ ս. Գրիգորի անմիջական յաջորդը իւր հօրից է ձեռնադրուել և գործ համար Կեսարիու մետրապօլիտի հաճութիւնն առնել ամենեւին չեն մտածել։ Այնուհետեւ թէպէ ըստ Փաւստոս Իշւղանի մը շաբթ հայ Կաթուղիկոսներ Կեսարիայից են առել ձեռնադրութեան շնորհը, յատկան նա Լուսաւորչի տան շառաւելզները, որոնք աշխարհական

«Ճակից եպիսկոպոսստթիւն էին ընդունում, բայց ինքը աստմիջը մտքով չի անցկացնում, թէ այսպիսով հայերը պթարկուած էին լինում Կեսարիոյ աթոռին: Կապադովաց Կեսարիան հռոմէական պետութեան մէջ բարձրացն աթոռներից չէր: Երբ պատրիարքական իշխանութիւնը արգացաւ Գ. ղարում, այդտեղ նստող մետրաւազօլիաներն պթարկուեցան սկզբում Անտեփի և յետոյ Կ. Պոլսի պառկարքի իշխանութեան: Խնչպէս կարող են ուրեմն Լուսաւորիչ և իւր յաջորդները, որոնք սկզբից և եթ Շատուղիոս» տիտղոսն ընդունեցին և գորանով կամեցան Աբրող Հայութեան թիգնանրական տեսուչը լինել՝ նոյն լիսի բացարձակ հոգեսոր իշխանութիւն ունենալ նորա ազմ եկեղեցական համայնքի վերայ, ոսպիսին Արշակունի թագաւորները իրենց երերի վերայ ունէին,—յօժարաւամ ենթարկուած լինել գրսի մի երկրորդական աթոռի որաւասութեանը, մինչ իրենց «գիւցախառն» ծագմամբ զարծեցող արշակունիք մեծ գժկամակութեամբ ենթարկում էին նոյն իսկ Հռովմի հջոր կայսրների իշխանութեան: Տեղ համար հարց է նաև այն, թէ արգեօք Փաւոտոս որոշ Թաումով չէ Հայոց բոլոր հայրապետներին մինչեւ Մեծն երսէս Կեսարիա տանում ձեռնադրելու, թէ նա մի ամ երկու անգամ պատահած գէպքը չի ընդհանրացում արգեօք բոլորի վերայ: Յամենայն դէպս երեակայեք ենք կարող, որ այդ ամէնը պատմական իրողութիւն լինէր, այսոց Հայրապետութիւնը խզէր իւր կապը Կեսարիոյ ոթոսի հետ այնպիսի մի նշանաւոր նուիւտապետի ժամանակ, որպիսին էր Բարսեղ Մեծ Կեսարացին, և սա ահա ին ազմուկ չբարձրացնէր այգ առթիւ, սորա բազմաթիւ ըրուածների մէջ ոչ մի յիշատակութիւն մնացած չլինէր ոյդ մասին:

Ա. Լուսաւորչի գործունեութիւնը ձեռնադրութիւնից եռոյ:—Երբ Լուսաւորիչը ձեռնադրուած վերադարձաւ Կեսարից, Կորա առաջին գործն եղաւ ըստ Ագաթանց կասի Հայոց ամենանշանաւոր, գեւ ևս կանգսւն մնամած մէնեաներից մէկը կործանել, այն է Վահէվանեան Շհեանը Աշտիշատում: Այդտեղ ամփովում է նա եւռ

Հետ բերած Ս. Յովհաննու և Ս. Աթանագինէի մասուն
ները և առաջին անգամ արդէն իրքեւ կաթուզիկոս եկ
զեցի է շինում ու մկրտում իւր հետ եղած եշխաններ
և ժողովրդի մեծ բազմութիւն (19 բիւր): Աշտեշատին
թանոսական ժամանակ իրքեւ ուստատեցի սւնեցած ն
զինակութիւնը անցնում է նոր շինուծ եկեղեցաւ վր
և մնում է մինչև մեր օրերը: Այդտեղից Լուսաւորի
գալիս է Բագաւան, ուր նրան ընդառաջ էր ելել Հայ
թագաւորը: Ամսօրեայ պմհեցողութեամբ նախապատր
առուելուց յետոյ՝ Լուսաւորիչը մկրտում է Թագաւոր
ու հետք եղած զօրքին (15 բիւր): Ապա մի ամբողջ շ
բաթ մնում է այդտեղ, ըստ Ագաթանգեղոսի 400 բ
ժողովրդի բազմութիւն մկրտում, շինում է երկրորդ ե
ղեցին Ս. Յովհաննու անունով, և այստեղ էլ Վանաս
Ամանորայ գեց յեշատակն ու տօնն է կապուտմ Ս. Յ
հաննիսի անուան հետ և այս եկեղեցին մնում է առ
ջուայ նման մեծ ուլատեղի: Ս. Գրիգոր իւր ճա
պարհորդութեան միջոցին առ ժամանակ մնացել էր
բանտիայում, և բերել էր իւր հետ եկեղեցու պաշ
նեաներ, որոնց և գործակից է գարձնում իրեն քա
նաներ կարգելով նորահաստատ եկեղեցիների մէջ: Ի
նորա աշխատութիւնն էր, գլխաւորապէս, ինչպէս
շուեցաւ, նախկին քրմերի սերնդից եկեղեցու պաշ
նեաներ պատրաստել: Այդպիսի քրմական աներից Ա
թանգեղոսի վկայութեամբ նա յետոյ 12 եպիսկոպոս
է ձեռնադրում, որոնցից ամենանշանաւորն էր Ազք
նոս: Սորա սերունդը աւանձին գեր է կատարում Հ
եկեղեցու պատմութեան մէջ: Այդ քրմերի, ինչպէս
իշխանների որդիները գաստիարակւում էին հելլե
ասոլի դալրութեամբ: Նոցանից կարձ միջոցում Լու
ւորիչը կարսղանում է բազմաթիւ պաշտօնեաներ պ
րաստել եկեղեցու համար: Որպէս վի այդ պաշտօն
ները տնտեսապէս ապահովուած լինեն, Ս. Գրիգոր
դասի միջոցաւ յատկացնել է տալիս նոցա օգտին
ըաքանչիւր գիւղում չորս երդի և իւրաքանչիւր աւան
եօթն երդի հող: Այդ կարգադրութեան և եպիսկոպոս
ների ունեցած տոհմական կալուածների շնուրնեւ այն

ռաստ էին հոգեւորականների եկամուտները, որ, ինչպէս
ունենաք, յաջորդ շըջանում աշխարհական իշխանաւոր-
նորի նախանձն էր շարժում և վերջը զգալի կերպով պա-
ստեցրին նոցա քանակը:

Այսպէս Ս. Լուսաւորիչ Վաղարշապատ մայրաքա-
ռաքը համելուց և այնտեղ նախօրօք նշանակած տեղեւ-
ում հայրապետական մայր եկեղեցին և կոյսերի վկայա-
նաները կառուցանելուց յետոյ՝ կրկին շրջեց Հայուստաւ-
ն բոլոր կողմերը, ամեն տեղ եկեղեցիներ և եկեղեցական
բաշտօնեաներ հաստատեց, կարգ ու կանոն սահմանեց և
արճ միջոցում կազմակերպել կարողացաւ նորահաստատ
կեղեցին:

Մեր պատմիչների վկայութեամբ ծերութեան օրեւ-
տւմ նա սկսեց ճգնազգեաց կեանք վարել և երբ թա-
քաւորը, որ ցանկանում էր նրան միշտ իւր մօտն ունե-
նալ, տեսաւ որ չէ կարող նրան համոզել թողնելու ճըգ-
տութիւնը, կամեցաւ որ նորա փոխարէն մէկ ուրիշը ար-
քունի գրան եպիսկոպոս ձեռնադրուի և նորանից յետոյ
հայոց եկեղեցու առաջնորդ լինի: Իմացուեցաւ այդ ժա-
մանակ, որ Լուսաւորիչն երկաւ որդիներ ունի Կեսարիաւ-
յում «մասցած» Վրթանէս և Արքուուակէս: Նոցա բերել
առուն և որովհետև Արքստակէսն ամուսնացած չլինելով
սւելի յարմար գտնուեցաւ, եպիսկոպոսական կոչումն
և ճեռնադրութիւն ընդունեց իւր հօրից: Սակայն Ագաւ-
թանդեղուի աւելացնելն անմիջապէս, թէ Լուսաւորիչ
յարունակում էր այնուամնայնիւ շրջել իւր հօտի մէջ և
տրա հոգեւոր պէտքերը հոգալ՝ ցոյց է տալիս արդէն, որ
յու Գրիգորի ճգնութեան մասին պատմածները չտիպազան-
ութիւն են՝ ուշ՝ ժամանակի գաղափարներ փոխադրած
այնպիսի մի շըջան, ուր չէին կարող այդ կարևորութիւնը
պուած լինել ճգնական՝ կրօնաւորական կեանքին:

Զ. Քրիստոնեութեան պիտական իրօն գառնալը Հոռվ-
ուսկիտն ածխարհում եւ դրաւ հետեւամբը նայերի համար:—
Եց ժամանակ ահա արտաքին յայն հռովմէական աշխար-
հում մի մեծ դէպք տեղի ունեցաւ: Ճրէսազնէութիւնը
ուր մըշտ հաշածեալ վիճակի մէջ էր եղել և, ինչպէս

տեսանք, Դիոկղետիանսս կայսուր օրով վերջին ամեն մեծ հալածանքին ենթարկուել, ադառ կրօն հրառ քակուեց։ Այդ նկատմամբ առաջին քայլ անազը, եթէ նոյն ինքն Գաղերիոս կայսրը, որ առաջ Դիոկղետի նոսի կեսարն էր և նորա հանած հալածանքի գլուխ գրգիչը։ Երկար ժամանակ քրիստոնէութեան դէմ կառ զի կոփւ վարելուց յետոյ նա իւր կեանքի վերջին օրերու համոգուեցաւ, որ այդ կոփւն անօգուտ է և 311-ին հրովարտակով ազատութիւն տուեց քրիստոնէանների իրենց կրօնը պաշտելու։ Այնուհետև քրիստոնէութեան քացարձակ պաշտպան հանդիսացաւ Կոստանդիանոս՝ Թուութեան արևմտեան մասի կայսուր, որ 312-ին իւր գու հակիցների հետ հրատարակեց Մայլանդի (Միլանի) հրաբուծակը, որով քրիստոնէութիւնը ոչ միայն ազատ էր ճանաչուում, այլ և հրամայուում էր քրիստոնէանների խլած կալուածները յետ գարճնել։ Բայց կատարեալ վերջնական ազատութիւն ստացաւ քրիստոնէութիւն այն ժամանակ միայն, երբ Կոստանդիանոս 323-ին յազի հեթանոսութեան վերջին պաշտպանին, արևելեան մակառավարիչ իւր փեսայ Լիկիանոսին, և միահեծան պարձաւ Հռովմէական պետութեան։ Ադաթանդեզ պատմելով՝ երբ Տրդատ Կոստանդիանոսի քրիստոնէութիւն ընդունելը լսեց, Լուսաւորչի և Արիստակէաի և մեծ պատրաստութեամբ գնաց Հռովմ, ինդակցութիւն յայտնելու և այնտեղ գտշն հաստատեց Կոստանդիանոս հետ։ Դժուար է որոշել, թէ այստեղ որ թուականն է և մարտում Կոստանդիանոսի քրիստոնէութիւն ընդունել եթէ 313-ը, այն ժամանակ Կոստանդիանոս միմիուցն արմուաքի իշխան էր, իսկ Տրդատը գտնւում էր Աքենի իշխան Լիկիանոսի հովանաւորութեան ներքայ, ուրեմն նուիշխանութեան սահմաններից անցնել և Հռովմ գնալը ու պատեհութիւն կլինէր։ իսկ եթէ 323 թիւը, ապա յայնի է, որ այս ժամանակուայ միջոցներում կայսուր մաստամբ արևելքում, Նիկոմիդիայում էր գտնւում, որեմն չէր կարող հայոց թագաւորի այցելութիւնը ընդունել լինել Հռովմում։ Եթէ ոյդպիսի կարևոր դէմք անահմար, բոլորովին անհականալի էլ կլինէ, թէ Ըսէ

այս մասին ժամանակակից պատմիչների մօտ ոչ մի յիշտտառ կութիւն չկայ։ Հաւանականաբար այդպիսի զրոյց ստեղծելու հիմք ծառայել է Տրդատ Ա. Հայոց թագաւորի ներոն կայսեր օրով Հռովմի գնալու և այնտեղ մեծ շըռվ ընդունուելու պատմութիւնը, և այդ միակ դէպքը չէ երեխ, որ ուրիշ Տրդատների անունից փոխադրուել է Տրդատ Գ. առաջին քրիստոնեայ և քրիստոնեայ պատմիչներին առանձնապէս սիրելի թագաւորի վերաբարյայ։ Անշուշտ Կոստանդիանոսի քրիստոնէութիւն ընդունելը մեծ նշանակութիւն ունէր քրիստոնեայ հայերի համար, այդպիսով այն կապը, որ կար Տրդատի թագաւորութեան և Հռովմէան պէտութեան մէջ, աւելի պէտք է հաստատուէր։ Քացի այդ քանի որ Մաքսիմիանոս Դացայի դէմ 312 թուին պատերազմ վարող քրիստոնեայ հայերի թագաւորը Տըրդատը պիտի լինէր, դորանից յետոյ ըստ ինքեան կարիք յառաջ կդար վերահաստատելու իշխող պետութեան հետ խզուած յարաբերութիւնը. ուստի և շատ հաւանական է, որ Տրդատի ու քրիստոնէութեան հակամէտ ու յաղթական Կոստանդիանոսի մէջ մի նոր զաշինք կնքուած լինի, ինչպէս յիշուում է այդ եղիշէի և ուրիշ պատմագիրների կողմից. բայց դորա համար Հռոմ գնալու կարիք չկար:

Կոստանդիանոսի, ինչպէս բոլոր քրիստոնեայ եկեղեցւոյ, այնպէս նաև մեր եկեղեցւոյ համար մեծ նշտնակութիւն ունեցող մի գործը այն եղաւ, որ նա ՏԶԻ-ին Ա. Միեղերական ժողովը գումարեց Նիկիայում։ Յայտնի է, որ այդ ժողովում Արքոսի մոլորութեան դէմ մարգեղութեան խորճի ճշմարիտ վարդապետութիւնը հաստատուեցաւ և կազմուեցաւ առաջին անգամ հաւատոյ մի հանգանակ, որ ընդհանրական եկեղեցու միութեան ոգին և բոլոր քրիստոնեաների մաքուք հաւանը պէտք է արտայացաէր։ Ըստ մեր պատմութեան, որ և հաստատուում է Նիկիայ Մողովին մասնակցող եպիսկոպոմների մեջ հասած ցանկով՝ այդ ժողովին մասնակցելու համար ուկարկուեցաւ Ս. Արքոսակէս, որ իւր հետ քերաւ հաւատոյ հանգանակը և ժողովի մէջ հաստատուած 20 կանոնները Այդ հանոնների վերաբարյա իւր Լուսաւորիչ նորեն է աւելա-

ցըել, և գործադրել իւր Եկեղեցու մէջ։ Այնուշետե իբ Լուսաւորիչն այլ ևս ժողովրդի մէջ չկ Երևացել, այլ Սեպուհ լեզան վրայ ճգնելով վախճանուել է անյայտութեամ մէջ։ Հովիւներն առանց ճանաչելու թաղել են, յետ Գառնիկ ճգնաւորի աեսելքով գ աել, տարել թաղել և Թորգան գիւղում։ Սակայն այս ամէնը, ինչպէս և Արքուակէսի մասին պատմուածը, թէ Ս. Լուսաւորչի իսպառ հրաժարելուց յետոյ 7 տարի հայրապետական իշխանութիւնի վարում, նահատակւում Զորբորդ Հայոց Արքեղայոս է։ Խանի ձեռքով և թաղում Խիլն աւ անում, թէ նո՞ աարին մեռնում է նաև Տրդատ՝ նախարարներից թունաւորուելով, թէ նորա մարմինը մնծ շքով քերսւմ ն Թորգան և Լուսաւորչի մօտ թաղում, և յետոյ փոխգրում է Հոգւոց վանքը, Խորենացու պատմուծներն և ուշ ժամանակի անվտանգնելի աւ անդու թիւններ։ Ագթանգեղոս Լուսաւորչի, Տրդատի և Արքուակէսի վերջի օրերի մասին ոչինչ չէ պատմում, և մենք այդ մարդ սայդ պատմական աեղեկութիւններ չունինք։ Սոյն միայն կարող ենք համարել Ս. Արքուակէսի խոստովանական մահը, որ Փաւատոս Նոյնակս յիշում է։ Նոյն իս Ազաթանգեղոսի պատմած վերջին անցքերը զանազան աեսակէտից կասկածելի են։ Արդէն նիկիոյ ժողովի ժամանակ ամենայն հաւանականութեամբ ոչ Լուսաւորիչ և ոչ Տրդատ կենգանի չէին։ Նորագոյն ուսումնասիրութիւնների հիման վերայ Տրդատի մահը ոմանք դնում է 317 թուին։ Եթէ Լուսաւորիչ նրանից առաջ է վախճանուել, ուրեմն Ս. Արքուատիկս նիկիոյ ժողովում մասնակ ցել է ոչ իբրև նորա փոխանորդը, այլ իբրև հայոց իսկական կաթողուղիկոս և ինքնիշխան հայրապետ է Եղել եօ առարուց աւելի, —որչանի և մինչև Երբ դժբախտաբայ յայտնի չէ։ Յամենայն դէպո Ս. Լուսաւորիչ անյայտութեան մէջ վախճանուած և նորա նշխարները Գառնի ճգնաւորի միջոցաւ՝ Զենոն կայսեր ժամանակ, ե. գալ վերջերին, գտնուած լինել չեն կարող, քանի որ Փաւատուի կազմակացուն քաջ յայտնի է որ նա թաղուել է ակը քից և եթ Թորգանում և Ս. Վրթանէսի մահուան ժամանակ նորա գերեզմանը յայտնի էր, որ որդուն տարա

Առօրա մօտ թաղեցին։ Խսկ Ե. դարու կէսերին նորա նշխար-
տերն ամենայն հաւանականութեամք Գուին են տարուել
։ Նոցա վերայ կառուցուել է Հայոց հայրապետութեան
Եթկըորդ աթոռանիստի կաթուղիկէ ս. Գրիգոր Եկեղեցին։

Գ. Լ. ՈՒ Խ. Ե.

Հայոց Եկեղեցին Ս. Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդասի
անմիջական յաջորդների օրով։

Ս. Ս. Վ. Վրանեսի Հայրապետութիւնը։—Ս. Լուսաւորչի
քաջորդների և նոյն ժամանակի Հայոց Եկեղեցու վիճակի
մասին մենք շատ քիչ պատմական տեղեւկութիւններ ու-
նենք։ Դժուար է նաև այդ շըշանի ժամանակագրութիւնը
ճշտել, որովհետեւ Խորենացու և Նրա թուեցը անվատահե-
տի են։ Խորենացու ասելով Ս. Վ. Վրթանէսը տասն և հինգ
տարի կաթուղիկասութիւն է արել. այդ թիւը մօտաւո-
քարէս ճիշտ կարելի է համարել այն գէպում, եթէ ըն-
գունենք, որ Ս. Արիստակէս Նիկիոյ ժողովից անմիջապէս
յետոյ, կամ 326—327 թուականներին վախճանել է, իսկ
Ս. Վ. Վրթանէս Խորեն յաջորդելով՝ մինչև 340 թիւը եղել է
Տայրապետական աթոռակ վերայ։ Այսպէս ընդունելուն
Տամապետականում է այն հանգամանքը, որ Ս. Վ. Վրթա-
նէս ժամանակակից էր Երուսաղէմի Մակար Եպիսկոպոսին։
Կակ սա Նիկիոյ ժողովին մասնակցող հայրերից է, թէպէտ
յետոյ էլ բաւական ժամանակ կենդանի է մնացել։ Ապա
Շայնը հաստատում է և այն տեղեկութիւնը, որ Ս. Վ. Վրթա-
նէս կաթուղիկաս եղաւ, ըստ Փաւատոսի Խոսրով Բ. թա-
գաւորի օրով։ Փաւատոս մի կարեւը գէպէ յառաջ բե-
րում Ս. Վ. Վրթանէսի կեանքից, որ բաւականաշափ լոյս է
ափուում այն ժամանակուայ հայոց քրիստոնէութեան և
ափող բարքերի վերայ։ Ս. Վ. Վրթանէսը Տարօնի Մայր Եկե-
ղեցում պաշտօն էր մատուցանում, ինչպէս սովոր էր
ապարէցտարք կատարել։ Այդ ժամանակ այդտեղ և շըշա-
նայրում մնացած հեթանոսները դաւադըութիւն ևս
ետզմաւմ, որի մէջ մասնակից է լինում և թագուհին

Նոյն իսկ պատարագի միջոցին կամենում են Ս. Վըթան ախ գուրս քաշել և նահատակել, բայց նա հըաշքով պատւում է: Այս դէպքը, ինչպէս և Փաւստոսի պատմա այն մեծ կստորածները, որոնք տեղի են ունենում կ գունեաց, Բզնունեաց և Մանաւազեանց նախարակ տների մէջ, Մանաճինը Ռշտունեոյ վարմունքը Յափ Մծբնայ հայրապետի հետ և ուրիշ նման գործեր ցոյց տալիս, թէ քիուառնէութիւնը որչափ քիչ աղկեցութիւնէր գեռ որոշ շրջանների վարք ու բարքի վերայ. թ ինչպէս ամբոխի մէջ, նոյն իսկ իշխանական տներում, է խող էին մնում հեթանոսական ոովորութիւններ, մնու էր գեռ հեթանոսական կեանքը ընդարձակ չափով. հաւա նականաբար շատ տեղեր ծածուկ կատարւում էր նո հեթանոսական պաշտամունք:

Փաւստոս իւր պատմութեան ԴՊ. Գ. ԺԿ. գլուխ գեղեցիկ կերպով նկարագրում է այս շրջանի հայոց ցաւալի կենցաղն և վարք ու բարքը: Խոկ եկեղեցւոյ ներք վիճակի մասին փոքր ի շատէ գաղափար աալու համառանձին արժէք ունի վերոյիշեալ Մակար Եռուսաղէմ ցու թուղթը, ուղղուած առ «Եպիսկոպոսապետ Տ. Վըթանէս և համօրէն եպիսկոպոս և քահանայս Հայոց», ո վաւերականութեան դէմ կասկածելու առանձին պաճառ չկայ և որ Հայոց կողմից եղած մի դիմումին պատասխաննելով՝ կանոններ և հրահանգներ է աալիս մկրտութեան ու հազորդութեան խորհուրդների պատշաճաւ կարգերով կատարելու համար: Երեսում է այստեղից, թ որչափ անորոշ էր գեռ հայոց եկեղեցւոյ դիրքը այսպիս լինդիրներում և որչափ նախնական ձեռվ էին կատարուու մնը մէջ զանազան ծէսներ: Նատ հետաքրքրական նաև երկու հայ եպիսկոպոսների մասին յիշատակութիւնը, որոնք արիոսականութեան էին յարել և ըմբուտաց եկեղեցւոյ օրինական վարչութեան դէմ: Դժբախտաբ այս և նման ազօտ յիշատակութիւններից ոչինչ որոշ եւ ըակացութիւն հանել չենք կարսդ, թէ ի՞նչ գեր են կատարել աղանդաւոր շարժումներ հայոց եկեղեցու պակցնական շրջանում:

Ս. Վըթանէսի օրով ըստ Բիւզանդի Երկու կազմ

պատերազմներ են աեզի ունեցել Հայոց և Պարսից մէջ։ Նուածնի առկիթը տուել է Աղձնեաց Բակուր բդեշխի առաջտամբութիւնը Հայոց թագաւորից՝ և այդ պատերազմում հայերը յաղթող են հանդիսացել։ իսկ երկրորդում երկու կողմից մեծ կոտորածներ են եղել և ընկել է պատերազմի դաշտում Հայոց նշանաւոր սպարապետ Վաչէ Տամիլկոնեանը։ Խնդը Ս. Վրթանէսը այդ պատերազմին ազգային կրօնական նշանակութիւն է տուել։ Ուշագրութեան արժանի են Բիւզանդի բերած այն խօսքըրը, որոնցով միմիթարում է Ս. Վրթանէս՝ ունեցած մեծ կորստի ամար։ Վաչէ և իւրայինք ներկայանում են իբրև Վարչանանց նախատիպ նահատակներ, «որ յաղագս աշխարհի և եկեղեցեաց և աստուածագործ օրինաց ազատութեան մեռան», ուստի Հայոց հայրապետը սահմանում է, որ նոցա յիշատակին տօն կատարուի տարեցտարի և նոցա անունը յիշուի Ս. պատարագի մէջ։ Իսկ Վաչէի փոխառէն սպարապետ է կարգւում մանուկ Արտաւազդը՝ Մամիկոնեանց փեսաների խնամակալութեան ներքոյ։ Այնուհետև վախճանուում է Խոսրով Բ. որին Բիւզանդ հակառակ Փորենացու «Քաջարանց և աշխարհաշէն» է անուանում, և որ ուրեմն թագաւորած պիտի լինի առնուազն մինչ 337 թիւը, որովհետև այդ թուականից առաջ լուրջ պատերազմ վարել Պարսից դէմ անկախ Հռովմայեցիներից նա չէր կարող։ Նատ շանցած մեռնում է նաև Ս. Վրթանէսը և թաղւում Թորդան աւանում՝ «Առ մեծ հայրապետին Գրիգորի»։

Բ. հայոց եկեղեցին Ս. Լուսաւորչի քոռների օրով։— Ս. Վրթանէս ունէր երկու որդի, ըստ Բիւզանդի նորա ժերութեան օրերի պտուղ, որոնցից անդրանիկը, Ս. Գրիգորիս, եպիսկոպոս էր կարգուած «Կողմանց Աղուանից և Վրաց»։ Խորենացին նրան Պայտակարան նահանգի եպիսկոպոս է համարում, որ չի հակասում նախորդ սրոշման։ Բայց աւելի ուշ ժամանակների հանած եղբակացութիւնը, թէ եղել է Վրաց և Աղուանից Կաթուղիկոս՝ պատմական պատմերով չի արդարանում։ Յիշաւի քանի աւելի պարզում այն ժամանակի պատմութիւնը, նոյնքան

Նշաններ են երեսւմ, որ սերտ կապ է եղել Հայոց դար
և այս հարեւան ազգերի քրիստոնէութիւն ընդունելու մէ
և որ Ա. Լուսաւորչի առաքելական գործունեութիւն
տարածուել է մասամբ նոցա վերայ. ստիայն թէ ի՞ն
իսկապէս տեղի ունեցել և ի՞նչ յարարեքա. թիւններ և
սպեղծուել գործնով՝ գժուար է առ այժմ որպէս,
Հայոց Գիւա Կաթուղիկոսը Ե. գարում Ազուանից Վա
թագաւորին գրած նամակում պարզ ասում է, որ Լուսաւորիչ նացա համար ձեռնադրել է Հռոմի քաղաք
մի եպիսկոպոս, ուրեմն ոչ Գրիգորիսն: Բիւզան
պատմում է, թէ ինչպէս Ս. Գրիգորիս քարոզել է Կո
կասեան աւագակորարոց ժողովուրդներից մէջն Սո
քթաց մէջ, որոնց թագաւորը մի Արշակունի եր Սանէս
անունով, և այդ հանդամանքը երևի զիւրութիւնն էր ոս
լիս նրան արգունիքում մաւա գործելու: Ակզրում նա բ
ջողաւթիւն է ունենում, բայց ժողովուրդը զդում է, և
իրեն անյարմաք է աւետարանի պատուիրանների համաձա
կեանք վարել. թագաւորին գրգաւում են Գրիգորիսի դէ
և սա կնքում է իւր կեանքը Ղատնեան դաշտի մէջ ձեաքա
նահատակութեամբ: Նորա մարմինը թագում են Ամար
ոու մ, որ այնուհետեւ դառնում է մեծ ուխտատեղի: Ն
րո մոռին պատմածները վկայում են, որ այս սկզբն
կան ժամանակներում Հայերը փորձել են քրիստոնէակ
առ ափելութիւնը յառաջ տանել հարեւան վայրենի ժող
վրուների մէջ և ծանր արգելքների են հանգիպեր:

Ո. Վ. Արթանէսի երկրորդ սրդին էր Յուստիկ, որ ի
տղայական հասակում կնութեան էր առել Տիրան արք
յորդու գտասորը և ունեցել էր երկու որդի՝ Պատ և Աթո
նադինէ: «Յուրը երանելի մասուուկ» է անուանուում ն
այն ժամանակ ևս, երը իւր հօր աեղ Հայոց հայրապետ
ընտրուում՝ արդէն իւր անեղ Տիրան թագաւորի օրո
որի կողմից և ուղարկուում է մեծ իշխանների ուղեկցո
թեամբ Կեսարիա՝ Եպիսկոպոս ձեռնադրուելու: Փաւառ
շատ մութ դոյներով է նկարագրում Տիրանի թագաւ
որութիւնը, խոտիւ պախարակում է մանաւանդ նրա վ
րաբերմունքը գէպի եկեղեցին: Մինչդեռ Խոսքովի իշխա
նութեան առաջին ասթիները խաղաղութեամբ անցան,

մինչայն կերջերը մի քանի պատճեռագումներ եղան, որոնց մէջ
առա ըստ մեծի մասին յաջողութիւն ունէր՝ Ցիշտեհի թաւ-
պատորութեան դրեթէ ամքոնից շրջանը կը դովուած էր
Պարսկաց և Յունաց մէջ առեղի ունեցող անշնչիւան պատճե-
ռազմներով։ Սւ որովհետեւ Յոյները միւնքոյն ժամանակի շա-
ռաւակ պատճեռակմ ունէին իրենց երկրում՝ հիւսիսային
ասդկերի հետ և արևելքում չեին կարող յաջոկութեամբ
պարծ առաջ տանել, ուստի Պարտից թագաւորին յաջող-
աւում էր գրդառել հայոց նախարարների, նոցա իրենց թաւ-
պատորի գէմ համել և ամեն փերպան նեղը ձկել կերջիննե-
ռիւս։ Ինքը Տիրան ստիպուած էր ուքեմն հանոյանալ Պար-
ակց և այդ է պատճառը իրեք, որ առամնէին քարեհանու-
թիւն ցոյց չեր տալիս գէպը եկեղեցին։ Հաւանականակար
ժեր վարը մւ ընարգովն ու ներքին յամփութիւններով էր
նա իւր նախորդների արժանաւոր ժամանդը չեր հանդի-
աւանում, և նրա գործած անիրաւութիւնները պէտք է
քառից անցած լինէին, որ երիտասարդ կաթուղիկոսը իրա-
ւունք է համարում բացարձակապէս նրա գէմն ելնել և
արգելել նրան եկեղեցի մտնելու։ գուցէ այս գէպքում դեր
էր խազում նաև այն հանդամանքը, որ ըստ Փաւստոսի,
Յուսովին ակամայ ըռնադպատել էին Ցիրանի դոսեր հետ
ամուսնականը և նա կարճ ժամանակից յետոյ բաժանուել
էր կնոջից։ Այդպէսով կարող էր նոցա մէջ ընտանեկան
գթութիւն յառաջ եկած լինել կարող էին նաև քաղա-
քական ու ցեղական ուրիշ նկատումներ քրենց նշանա-
կութիւնն ունենալ։ Բւշադրութեան արժանի է այնուա-
մենայնիւ, թէ որչափ բարձր գիտակցութեան էր համել
արդէն հայոց կաթուղիկոսը իւր կոչման մասին, երբ այսու-
ապէսի համարձակ քայլ է անհամ։ Ինչ և իցէ թագաւորը չե-
կարողանում տանել այդ ծանր անարդանքը և ըրածեծ
անելով նահատակել է տալիս եկեղեցու սրբութեան քաջ
պաշտպանին։ Խորենացին այդ գէպքի առիթը համարում
է այն, որ իր թէ Տիրանը կամնցէլ էր Յուլիանոս ուրա-
ցողի պատկերը եկեղեցում զնել։ Սակայն դա ժամանակա-
գրական մէծ սխալ է, որովհետեւ ստոց գիտենք, որ Յու-
լիանոսի կապար լինելուց (362) շատ առաջ արգէն կուրա-
ցրած Տիրանի Արշակ որդին էր հայոց թագաւոր (380)։

Յուսիկի մահուանից յետոյ, սրովհետեւ նրա որդին ըեց ոչ մէկը արժանի չէ համարւում կաթուզիկասութես թագաւորն ու նախարարները մտածում են եկեղեց վերակացութիւնը յանձնել Դանիէլ անունով առորի ք ըեպիսկոպոսին, որ համարուում էր Ս. Կուտաւորչի շակերտ՝ նորանից ձեռնադրութիւն ընդունած և Տար Մայր-Եկեղեցւոյ և եկեղեցական կալուածների կառափ ըէ կարդուած։ Հեթանոսների մէջ քրիստոնէաւթիւն ք ըստած լինելուն և իւր մաքսւր վարքի համար նա և համբաւ էր վայելում։ Գուցչ այսպիսի մէ հեղինակաւ օտարականի կաթուզիկոսական աթոռ բարձրացնելավ ջ րան նպատակ ունէր Կուտաւորչի սերունդից խլելու ժ ռանդական գարձած հայրապետական իշխանութիւնը նորա արագ կերպով աճող հեղինակութիւնը նուաստա նելու։ Ցիշատակելի է այտեղ մի կողմնակի երեսյթ և Փաւստոս, ինչպէս ուրիշ առիթներում, նոյնպէս և անդամ մեծ գովասանքներ ու պատուանուներ է շռ լում Ցարօնի Մնծ եւ նախառաջին Մայր Եկեղեցու հայ և այդ պատճառ է եղել նոր ժամանակներս շատել պնդելու, թէ հայոց հայրապետական Մայր-Եկեղեցին էր սկզբներում և այստեղ Աշտիշատում էր հայոց հայր պետների աթոռանիստը։ Մինչդեռ ս'յն հանդամանքն ի որ այս եկեղեցին յատակ վերակացու ունէր յանձնն Դան էլլի, հակառակն է ապացուցանում։ Թող որ Դ. Պարի և եկեղեցւոյ ամբողջ պատմութիւնը ցոյց է տալիս, հայրապետի աթոռանիստն այնտեղ միայն կարող էր լին ուր էր թագաւորի մայրաքաղաքը, և բոլոր այն փաստե որոնք բերուում են հակառակ Վաղարշապատի Մայր կեղեցու հեղինակութեան և ինպաստ Արտաշոսի՝ զօրութիւն չունեն։

Երբ թագաւորը նշանաւոր նախարարներ ուղարկ լով Դանիէլի ետևեց, բերել է տալիս նորան արքուն սա փոխանտեկ գգացուելու եղած պատուից՝ սասս յանդիմանում է նրան իւր անիրաւութեանց, մանաւա վերջն չարագ ործութեան համար, և թագաւորի հրամ նով տեղուտեղը խեղդամահ է լինում։ Նրա երկու աշ կերտները Եպիփան և Զաղիտա տանում թաղում են նո մաքմինը Ցարօնի Հացեաց գրախտում։

Դ. Լուսաւորչի տոհմին շպատկանող հայրավիեները:—
Պանիկի մահով կրկն հարց է առաջ գալիս, թէ ով պիտի
պինի կաթուղիկոս: Փորձում են միանդամ ևս Յուսիկի որ-
դիներց մէկն ու մէկին բռնադատել այդ բարձր պաշտօնը
ցանձն առնելու և նոցա իրենց կամքի հակառակ սար-
դաւագ են ձեռնադրել տալիս, բայց նոքա արհամարհում
են աստուածային չնորհքը և շատ չանցած պատժւում
անակնալ զարկութելի մահով:

Թէ ինչքան հասատ էր հայոց մէջ այն գաղափարը
որ եպիսկոպոսական աթոռը յաջորդութեամբ որդէցոր-
դի պիտի անցնի, այդ երեւում է Փաւոստոսի շատ վկա-
յութիւններց: Մենք տեսնում ենք, որ ոչ միայն կաթո-
ւիկոսութիւնն է Լուսաւորչի տան համար ժառանդական,
այյլ նաև ուրիշ եպիսկոպոսական աթոռներ ժառանդա-
ռար որդէցորդի են անցնում: Օրինակի համար, Ներսէս
մեծի նշանաւոր տեղապահ Խաղ եպիսկոպոսն արու զա-
ւակ չունենալով, իւր աթոռը թողնում է իւր փեսային
ժառանդութիւն: Այսպէս վարուելու գլխաւոր պատճառն
այն էր անշուշտ, որ իւրաքանչիւր աթոռի հետ ընդար-
ձակ կալուածներ և մեծ եկամուտներ էին կապուած և
երկրում տիրող կարգերը թոյլ չէին տալիս, որ նոքա ամեն
անդամ պատճական մարդոց ձեռք անցնեն: Գորանով
բացատրում է, թէ ինչո՞ւ նաև այժմ նախարարները
պնդում են, որ նոր կաթուղիկոսը անպատճառ Լուսա-
ւորչի ցեղից լինի, և ահա ընտրում է Փաւէն ոմն երէց
«ի գաւառէն Տարօնայ, ի մեծէ մարգարէանսցէն Յովան-
նու»: Փաւոստոսի խօսքերի կապակցութիւնը ցոյց է տա-
լիս, որ այս Փաւէնը Լուսաւորչի տան հետ մի մերձա-
ւոր, մի ազգակցական կապ պիտի ունենար: Գուցէ այն
պատճառով, որ նա անմիջական ժառանդ չէր, այլ կողմ-
նակի մի ազգական, կամ որ նա իւր նախորդների նման
արիաբար թագաւորի դէմ ելնել և նրան յանդիմանել չէր
համարձակւում, «Բայց միայն զիւր անձն սուրբ պահէր
և ի հարկէ ընկերէր անօրէն թագաւորին և ըստ նորին
կամացն երթեալ հաղանդեալ», Բիւզանդ և նրա հետեղ-
ները արժանի չեն համարել նրան որոշ կերպով Լուսա-
ւորչի շառաւիզների շարքում գնել: Խսկ Փաւէնի Ա. Լու-

սաւորչին որ և է կերպով ցեղակից լինելը եթեռւմ է նա նըանից, որ նորա մահից յետոյ «իբրև ոչ ոք գոյը ի առն Գրիգորի այնմ (կաթողիկոս) արժանի. ապա նմանեցացին զնահակ ոմն անուն ի տոհմէ զաւակին Աղքական եպիսկոպոսին»: Աղքականոս ինչպէս տեսանք կուռաւազ ժամանակ տմննից նշանաւոր եպիսկոպոսն էր և նորա առն մից՝ որ պատուով երկրորդ տեղ էր բանում, յանձն առն կաթուղիկոս ընտրել, երբ ևու սաւորչի ցեղից այլ եւ ոք չկար յարմար այդ կոչման:

Այս Շահակը Մովսէս Խորենացու և հետեւող պատմագիրների մօտ չէ յիշւում, բայց Փաւստառա այնպի որոշ կերպով զնում է նորա կաթուղիկոսութիւնը Փառհ Նից յետոյ և ներսէնից առաջ եղած, որ կառակածելու տեղիք չկայ, մանաւանդ՝ Յորիանոս Կայսեր գրած գ Ժողովական թղթում (963 թիւ) յիշւում է նաև Խոակուկիս Հայոց Եպիսկոպոս, որ անշուշտ այս Շահակն է: Եր կարեւոր յիշատակութիւնը մեզ միջոց է տալիս կը կին ժամանակագրութեան վերայ լոյս սփուելու: Փաւստառա ըստ Երեւութիւն թէ Փառէնի և թէ Շահակի կաթուղիկոսութիւնը զնում է Տիրանի օրով, բայց գոնէ վերջինիս համար այդ հաւանական չէ, որովհետեւ ոչ միայն Յորիանոսի նախորդ Ցուլիանոս Կայսեր օրով Հայոց թագաւորը Աքշակն էր, այլ արգէն Կոստանդիոս Կայսեր օրով նա մ քանի անգամ յիշւում է Ցունաց պատմութեան միջ: Յայտնի է, որ Կոստանդիոս Նրան աւելի սերտ կապի: լու համար իւր կայսերութեան հետ, կնութեան է տալի Նրան Աղոմափիա անունով մի ազնուական օրիորդ (որ առաջ Կոստանդիոս Նշանածն էր), և այդ ամոււանութիւնը պէտք է տեղի ունեցած լինի 355-ին: Ապա նոյն Կոստանդիոս 360-ին Կեսարիայում տեսնուել է Արշակ հետ, սիրով ընդունել և գաշն կապել նորա հետ: Հաւանականաբար Արշակը թագաւոր Եգաւ մօա 350 թուին որովհետեւ այդ թուին է տեղի ունեցել Կոստանդիոս կայսեր այն յաջող պատերազմը Պարսից Շապուհ թագաւորի դէմ, որի հետեւանօք վերջինս, ինչպէս և Փաւստառի հէմ, միայն անուններ և դէպքեր շփոթելով, ստիպուած եղաւ մի քանի տարի առաջ նենգութեամէ

նառանպւորած և կուբացըած ճեղանին ազատ թողնելու և
սյա որդի Աթշակին դահ բարձրացնելու։ Փաւստոս այս
պատերազմում մատնակցող Պարսից Թագաւորին ներսէն
անուանելով՝ ամենայն հաւանականութեամբ կէս դար
առաջ ներսէն և Գաղերիսոս Կեսարի մէջ տեղի ունեցած
պատերազմի յեշողութիւնները բերում խառնում է այս
Թամանակուայ դէպքերի հետ։ Նա անտեղի կերպով բե-
րում Աթշակի անուան հետ է կապում նաև Նապուհի
։ անած մեծ հալածանքը քրիստոնեաների դէմ, դորա
պատճառը համարելով այն, որ Աթշակ երդմամբ հաւա-
տարմութեան դաշն է կապել նրա հետ և յետոյ դրժել։
Եիրաւի Նապուհի օրով մեծ հալածանք տեղի ունեցաւ։
Էայց սկսուել էր արդէն 345 թուին երբ Աթշակ չկար բո-
ւորովին մէջ տեղ, այլ պատերազմ էր ծագել հուզմա-
քեցւոց դէմ և Նապուհ շուտով նկատեց, որ իւր պետու-
թեան մէջ գտնուած քրիստոնեաները յայտնի կերպով
համակրութիւն են ցոյց տալիս թշնամիներին։ Մանաւանդ
նըր մայրաքաղաքի Սիմէօն եպիսկոպոսը հրապարակաւ
Թշնամինք արտայայտեց թագաւորի դէմ, նա հալածանքն
աւելի սաստկացրեց և նորա թագաւորութեան ամբողջ
ընթացքում (մինչև 379 թիւը) քրիստոնեաների արիւն էր
թափուում։ Թէև նորա հալածանքն աւելի քաղաքական
նպատակով էր, բայց մոգերը օգուտ քաղեցին թագաւորի
պրամադրութիւնից և մեծ արիւնհեղութիւն դորձել
առուին։ Քրիստոնեաները անթիւ նահատակներ ունեցան,
արոնցից շատերի համար հետաքրքրական վկայութիւններ
կան Փաւստոսի մէջ։ Յամենայն դէպս եթէ Տիրան, ինչ-
պէս հաւանական է, գահից զրկուել է արդէն մօտ 346
թուին, ապա նորա թագաւորութեան օրերում տեղ է
մնում միայն Յուսիկի կաթուղիկոսութեան համար, որին
Խորենացին զեց տարուայ իշխանութիւն է զերագրում,
և կարելի է ենթադրել, որ Յուսիկի և Պանիէլի մահից
յետոյ հայրապետական աթոռն առ Փամանակ թափուը
մնաց, զբայ հասաւ նաև Տիրանին հասած փորձանքը և
միայն Աթշակի գահ բարձրանալուց յետոյ կաթուղիկոս ըն-
տրուեց Փառէն։ Իոկ եթէ ընդունենք, որ սա Պանիէլ
մահից անմիջապէս յետոյ ընտրուել է և կաթուղիկոս եղեւ

տակաւ. Ժամանակ» նոյն խառն տարինելում, ապա դէն նահակի կաթու զիկոսու թիւնը, որ առ նոււազն մինչ 363 թիւր տևել է, Արշակի օրով պիտի գնենք:

Գ Լ Ո Ւ Խ Զ.

Ա. Ներսէս Մեծ (364—373).

Ա. Ա. Ներսէսի ժամանակը. բնուրութիւնն ու ձեռն պրութիւնը.—Ա. Կուսաւ որչից յետոյ մեր եկեղեցու պատմութեան մէջ տանիսից աշքի ընկնող անձնաւ որութիւն անչու շատ Ֆեծն Ներսէսն է, որի կաթու զիկոսեամբ կարի է տառել Եկեղեցական կետնքը սեղանում մը նոր ընթաց է սունում և որի օրով իսկապէս քրիստոնէութիւն ակսում է հայոց ժողովրդի կրօնը լինել, նորա զանազան երի մէջ մուտք գտնել և յառաջ բերել այն արգիւնք Ները, որ յաջորդ շրջանում կրօնական պատերազմներ ժամանակ երեան եկան: Զարմանալին այն է, որ նարա պ հետեւանդիրավ հարուստ գործունէու թիւնը շատ կա ժամանակի մէջ տեղի ունեցած պիտի լինի: Դրեթէ մ բարյուր ժամանակագիրները նրան երեսուն և չորս տարի կ թուզիկու եղած են համարում, բայց այս թիւը ըսլորով տանհամածայն է ձշգրիտ պտտմութեան հետ: Փաւստա պատամիյուն նաև ձեռնադրութեամ կեսարիոյ նւաճընքն է պիտիպատից, որ աթոռ էր բորձոցի ՖԲՀ-ին, ուրեմն այդ թուի տուած չէր կորոց ձեռնադրութեամ լինել, մա նու ունգ, ինչպէս տեսունք Հ. Յ. թուն: Կաթուզիկոս է պէս հանձնէ: Ահու կողմից Ներսէս զորհանուել է Պահական առաջ ու ուղի ուղարկ, որը սպանուելու ժաման, և որպէս ու Շանգ Ներսէնի մոհից յետու մէջոց ունեցաւ գերա տեսն մէջ մասնաւութիւններ մաղնելու նարա բարէ նացու ութեանց մէջ, ուրիշն առ է ուն մի տարի առ մ ուն պարունակութիւն: Առաջաւ էին առ առ զարձրացա համարն առ առ առ պարունակութիւն: Առաջ առ զիկոսութիւն համար ուն առ պարունակութիւն: Առաջ առ պարունակութիւն: Տակ ու ժամանակամիջորի մէջ առնենքի ուն բուշուը, բնչ:

Պաւստոսն ու .ուրիշները պատմում են նորա մասին
բժուար կլինի:

Նատ հետաքրքիր է նորա ընտրութեան նկարագիրը,
որ տալիս է Բիւզանդ: Այստեղ իմանում ենք, որ նա իւց
Շանկութեան օրերը անց է կացը և կեսարիայում և այնտեղ
իւր կրթութիւնը ստացել «ընդ հաւատարիմ վարդա-
լիքնոր»: Ապա նա Արշակ թագաւորի սենեկապեան էր
Արձել և դեռ Երիտասարդ հասակում էր, երբ Նահակի
Շահից յետոյ թագաւորի մօտ ժողովուած նախարարները
քահանջեցին, որ կաթուղիկոս լինի անպատճառ Լուսա-
ռուչի անից, յատկապէս Աթանագինէի և Տիրան թագաւ-
որի քոյր (?) Բամբէշից ծնուած ներսէսը: Սա սկզբում
ոիստ ընդգիմանում է այդ պահանջին, անարժան է հա-
Շարում իրեն այդպիսի բարձր պաշտօնի համար, մեղա-
ւում է իրեն զանազան յանցանքների մէջ, սպառնալիք-
ուեր է տալիս, բայց ոչինչ չի օգնում, ինքը թագաւորը
ալում է նորա ձեռքից սուրը, որը իբրև իւր պաշտօնի
շան բռնած կանգնել էր, և ծերունի Փաւստոս եպիսկո-
պալոսին պատուիրում բռնութեամբ սարկաւագ ձեռնա-
գրել նորան: Այնուհետեւ ուղարկուում է Կեսարիա Եւու-
թիոս եպիսկոպոսից ձեռնագրուելու, «Ի կաթուղիկոսու-
թիւն Հայոց Մեծաց»:

Այս առթիւ Փաւստոսը մի հրաշք է պատմում, որ
շատ խորհրդաւոր է ներսէսի գործունէութիւնը բացա-
տրելու համար: Զեռնագրութեան միջոցին ասում է նա,
«Ներկայ եղող Բարսեղ Երէցի գլխին մի աղաւնի է երեսում,
որը յետոյ բարձրանում ներսէսի գլխին է նստում: Այդ
քոյց է տալիս անշուշտ այն սերտ կապը, որ կար Ս. ներ-
սէսի ու Ս. Բարսեղի կեանքի ու գործունէութեան մէջ: Այս
Բարսեղ Մեծն կամ Բարսեղ Կապագովկացին, որ յե-
տոյ Կեսարիոյ Մետրապօլիտ եղաւ, իւր բազմակողմանի
գործունէութեան ուրիշ արդիւնքների թուում շատ նշա-
նաւոր է նրանով, որ արևելքում կրօնաւորական կեան-
գին սկիզբ և նոր ուղղութիւն տուաւ և մշտական կա-
նաններ հաստատեց: Արգէն Գ. գարում յառաջ էր եկել
կրօնաւորութիւնը և քանի գնում ընդարձակ տեղ էր քանուա-
գեկեցու մէջ: Նորա առաջին կանոնաւորողն ու ընդար-

ճակ ծաւալ տուղը եղաւ Դ. դարու սկզբներին Ս. Ա. տօնը Եգիպտոսում։ Ս. Բարսեղ, որ աշխարհական կրթութիւն էր ստացել Աթէնքում, տուն վերագառնալոց յետոյ իւր Մակրինա քրոջ ու այրէացած մօր ազգեցս թեան ներքոյ ընկաւ, որոնք քաշուել էին քաղաքից գոր մի առանձին տեղ և վարում էին նքնական կետնք։ Կ նուժնաւեն ճանապարհորդեց Ասորիք, Պաղետախն, Եգիպտ առս, ուր արդէն կրօնաւորական կեանցը ծաղկեալ վիճ կի մէջ էր, և վերագառնալուց յետոյ սկսեց կանոնաւ վանքեր հաստատել, որոնք կուրճ միջոցում անեցին, և ոգեսրութիւն յառաջ ընթիւն շրջակայքում և ընդարձ ծաւալ ստացման։

Ս. Բարսեղ առանձին բարեկարգութիւն մացրեց կը նական կեանքի մէջ՝ նկատելով այն մեծ վասնգը, կարող էր առաջ դալ վանքերում պարտապութիւնից՝ ախատանքը, թէ ձեռքի և թէ մտաւոր, պարտաւորեցաց դարձնելով կրօնաւորների համար։ Փոխանակ Ասորիքու և Եգիպտոսում ընդհոնրացած առամնանակոն նքնաւոր կոն կեանքի, նա վանական կեանքը նորմադասեց և կ նոնաւոր կազմակերպութիւն տուաւ նորան։

Նրա հաստատած վանական կանոնները առեակ նշանակութիւն ունեցան արևելեան եկեղեցաւ համա որտեղ գրեթէ մինչեւ այժմ բալոր վանքերը այդ կամսոնն ըով են առաջնորդուսում։ Բնական է որ այսպիսի աչ ընկնող մի անձնաւորութիւն իւր մտցրած բարեփոխու ներով մեծ ապաւ որութիւն գործէր Ս. Ներսէսի նմ փայլուն ընդունակութիւնների տէր մի անձի վերայ ազդեցութիւն ունենար հարեան Հայոց եկեղեցու վրայ։

Մեծն ներսէս իրաք ըստ ամենայնի հետեւող եղ Ս. Բարսեղի և Հայաստանում մացրեց գրեթէ նոյն բար կարգութիւնները, ինչ որ տեսել էր Կապաղովիայում։

Բ. Աօթիօաթի ժողովն ու Ս. Ներսէսի բարեկարգութիւ ներք Ս. Ներսէս Կեսարիայից իբրև կաթուղիկոս վերադա նալուց յետոյ մի ժողով է գումարում Աշտիշատում, պատմութիւնից մեզ յայտնի առաջին ազգային եկեղ ու ժողովն է (364 կամ 365 թուին) և հիմնական նշ

ռազմութիւն է ունեցել անշուշտ յետագայ ժամանակի ե-
ռպեցական կեանքի համար։ Այդ ժողովի մէջ ըստ Գաւա-
ռասի, նախ ընդունուում ու գործադրութեան մէջ են
ռազմական առաքելակարգ կանոնները, որով պէտք է հա-
սանալ գուցէ այն բոլոր ժողովական կարգերն ու որո-
ւածմները, որոնք մինչև այդ ժամանակ հաստատուել էին
Պատհանքական եկեղեցու մէջ, բայց հայերի կադմից հա-
ռանցի ուշադրութիւն միացն գտել։ Բ. որչշւամ է
անանիների և զանազան հաշմանդամների համար ազգա-
ռանօցներ և հիւանդանոցներ շինել, նոցա ապրուստի մի-
ացները հայթալիք և թոյլ չտալ այլ կո, որ տնկտուն
շրջեն, մուրացկանստթիւն անեն։ Գ. արգելում է մեռեալ-
ների կրայ կոճ անելը, որ ինչպէս երեսում է շատ տա-
ռածուած ու մշակուած էր հայոց մէջ և սերտ կապուած
էր հեթանոսական առքորութիւնների հետ։ Դ. կարգուու-
րում է ամուսնութեան օրէկքը ընդհանրական եկեղեցու
մէջ ակրազ կարգերի հիման վերայ։ Այս նկատմամբ ևս
ինչպէս պատմական այլ և այլ վկայութիւններից երեսում
է, շատ զեղծուամներ եղած պիտի լինէին հայոց մէջ։ Աը-
գէն ներսէսի նախորդները մաքառել էին այդ զեղծումնե-
րի դէմ և դոցա առաջն առնելու համար նորա ջանքերն
էլ քիչ յաջողութիւն են գտնում։ Ե. հաստատում է կա-
նոններ կերակրի և կենցաղավարութեան մէջ ցոյց տուած
անխտականութեան և զանազան անքարոյական սովորու-
թիւնների դէմ։ միջոցներ ձեռք առնում քրիստոնէական
սիրոյ, արդարութեան, ողորմածութեան և ճշմարտասի-
րութեան սկզբունքները ընդհանրացնելու համար։ Բայց
ժողովի խորհրդածութեան կենդրոնը կազմումէր անշուշտ
Վանական կեանքը, և նորա հետ զուգընթաց ազգատա-
նոցներ, հիւանդանոցներ, որբանոցներ, ապատանարաններ
հիմնելու կարիքը, ինչպէս և ժողովից յետոյ ս. Ներսէսի
գլխաւոր հոգացողութեան առարկան եղաւ վանքեր ու
բարեգործական հաստատութիւններ հիմնելը հայաստանի
զանազան մասերում։ Վանքերին կից հաստատում էին
նաև գպրոցներ, ուր հայ մանուկները յոյն ու ասորի
գպրութիւն պիտի սովորէին։ Այսպիսի բարեկազգութիւն-
ներով ահա քրիստոնէութիւնը հետզիւտէ մատչելի է դառ-

Նում հայ ժողովրդին, որ պէտք է ենթագրել, ըստ մի մասին դեռ միմիայն անունով քրիստոնեայ էր, և կա՞ հեռու ընկած գաւառներ, ինչպէս հարաւային լեռն կողմերը, որոնք շատ քիչ էին ենթարկուել քրիստոնէա կան աղդեցութեան։ Վանքերը մեծ ծառայութիւն և մատուցանում, թէ այդպիսի տեղերի համար քարոզին պատրաստելով և թէ իրենց շրջապատի վերայ աղդել քրիստոնէական աշխարհայեցողութեան ծանօթութիւնն և սկզբունքներ տարածելով բոլոր գոսսակտրգերի մէ Փաւստոս յանուանէ յիշում է երկու կրօնաւորների՝ նոյն փան ու Շաղիտա, որոնք ինչպէս երկում է արդէն ներ սէսից առաջ կրօնաւորական կեանք էին վարում և կող ունէին Դանիէլ Ասորու հետ, նորա աշակերտներն էին Ներսէսի մահից յետոյ սոցանից մէկը վանքեր է հասաւառում, մեծապէս նպաստում քրիստոնէութեան զօրանոլուն Կորդուաց մէջ, իսկ միւսու Ծոփաց ու Աղձնեաց ոչ խարհներում։ Այսպիսի ուրիշ հետեւզներ ևս անշուշնեան ունեցել է, որոնց գործունէութեան շնոր հիւ մասամբ Հայոց եկեղեցին նախապատրաստուեց պի լինել, ինչ որ Ներկայացնում է նորա որդի Ս. Սահակ օրով։

Դ. Ա. Ներսէսի մասնակցութիւնը բաղաբան գա ծերում Դժուար է պատմութեան հետ հաշտեցնել պի գէպքերը, որոնց նկարագրութեամբ Իիւղանդ և ուրի ազգային պատմիչներ ցոյց են տալիս Ներսէսի մասնակ ցութիւնը քաղաքական իննդիրների մէջ։ Ներսէս Արշաթագաւորի կողմից պատգամաւոր ուղարկուած է հա մարւում Վաղէս կայսեր մօտ, նորա ձեռքով աքսոր ու զարկուած, ապա նորա մահից յետոյ վերադարձած, մաս Նակից եղած Կ. Պոլսի տիեզերական ժողովին, յետոյ Հա յառտան գալով երկար ժամանակուայ գործունէութիւնը յետոյ վախճանած, մինչդեռ ինչպէս ասացինք նա վախ ճանած պիտի լինի Պապից առաջ, ամենաուշը 373 թուի իսկ Վաղէս կայսրը մէռել է 379-ին և Կ. Պոլսի ժողով եղել է 381-ին։ Գոնէ մի գէպքի համար, ուր Ս. Ներսէ յանձն չի առնում արիոսական Վաղէսի մանկանը օքնու

Իեամբ բժշկել և դորա մահուան պատճառով աքսորւաւմ , կարող ենք ասել, որ յայտնի չփոթութիւն է Ս. Բարեղին պատահած նոյնպիսի մի գէպքի հետ, և այդ տեղ եղակացնել, որ նման պատմութիւններ ևս առնուած չեն Ս. Բարսեղի և ուրիշների մասին եղած վկայաբանութիւններից: Յայտնի է, որ Վաղէս կայսրը 372-ին արևելք ճառապարհորդելիս եղել է Կեսարիայում և հաւանական է, ոյ միջոցին Ս. Ներսէսն ևս այնտեղ գտնուած լինէր, քովինետեւ 372-ին Կեսարիայում գումարուած մի ժողովի պիտոպոսների ցանկի մէջ յիշուում է նորա անունը: Շուրջ մի այդպիսի ժողովի յեշողութիւնն է, որ մեր զատմիջները շփոթել են Կ. Պօլսի մեծ ժողովի հետ, և այս ժամանակ Վաղէս կայսեր հետ ունեցած որևէ բանակութիւն հիմք է ծառայել - նորա պատգամաւորութեան Բասին պատմուած երկար զրոյցներին: Բայց որովհետեւ Արշակը 367-ին գերեք է տարուել, այդպիսի դէպք կարող էր տեղի ունեցած լինել միայն սորա որդի Պապի օրով:

Դայած որ Արշակի թագաւորութեան ժամանակ չնկնում են միայն Ս. Ներսէսի կաթուղիկոսութեան երեք առաջին տարիները, Փաւստոս տասնեակ տարիների պատմութիւն է տեղաւորել այդ շրջանում: Դուս պատճառն այն է երեխ, որ Արշակի արկածալից թագաւորութիւնը ժողովրդական վէպերի նիւթ դարձաւ յետոյ: Իսկ եկեղեցական հեղինակները այդ վէպերից զանազան միջնագէպեր վեցրել կապել են իրենց աւտանձնապէս սիրելի ժամանակից մեծ մարդու անուան հետ: Այդ միջնագէպերից աւելի մօտ է ճշմարտութեան և խիստ բնորոշ հայր մարդպետի Աշտիշտում Ս. Ներսէսին այցելելու պատմութիւնը, ուր նա չար նախանձ է ցոյց տալիս դէպի հայրապետի շրջապատող ճոխութիւնը և յետոյ արժանի պատիժը կրում: Հետաքըրքական է այստեղ այն արհամարհական հայացքը, որ ժամանակի իշխանները ունէին հոգեւորականութեան վրայ, և կաթուղիկոսական կալուածների յիշատակութիւնը, որից երեսում է, թէ ինչպիսի մեծ նիւթական միջոցներ ունէին եկեղեցական իշխանաւորները իրենց տրամադրութեան ներքոյ: ամբողջ գաւառներ՝ Այրարատ, Դարձանաղի, Եկեղեցաց, Տարծոն, Բղնունեք, Շոփ-

և այլն համարւում են միայն կաթուզիկստական կալուան ներ, հարկաւ այն մռցով, որ նորանից որոշ հասոյթն էին ստացուում և կամ կաթուզիկստարանը նոցա մէջ ժարձակ հողեր և գիւղեր ուներ իրեւ սեպհականութիւն նուն վեպական նիւթ է և հաւանականօրէն ոքհեստափ կերպով Ս. ներսէսի կետնքի հետ կապուած Պնկը սպա ման և նորա կին Փառանձեմին Արշակ կնութեան տան լու պատմութիւնը: Քանի որ Պապը Փառանձեմի որդի է, իսկ նա արդէն հասակն առած կտրիճ մարդ էր, եղ ներսէոր վախճանուեցաւ, նորա մայրը չէր կարող Արշակ հետ ամուսնացած լինել ներսիսի կաթուզիկոսութեան օրով, որով նա ամենաովազը 366 թուին ծնուած և Յիթու ին վախճանած պիտի լինէր: Հաւանականն այն է, ո Արշակ սկզբուում ապօքինի կենակցութեան մէջ էր Փառանձեմի հետ և Պապի ծնուելուց յետոյ էլ այդպէս մնայ մինչև որ այդ փառասէր կինը թաղուհի լինելու ցանկութեամբ զարհուրելի միջոցի զիմնց և թունաւորեց Արշակի հարազատ կնոջ՝ Աղոմալիս թագուհուն, որ գլուխ պատճառը եղաւ երեկ Արշակի և Ս. ներսէսի մէջ ժադա գժուութեան և դորանից յետոյ էր, որ վերջինս հեռացա արքունիքից, ըստ Փառատոսի մինչև Արշակի մահը քաշու կեանք վարեց: Նորա այս անգ ամուայ միջամտութիւն Արշակի ընտանեկան գործերու մ պատճառ է եղել երե նորա անունը խառնելու: Փառանձեմի ամբողջ վեպակ պատամութեան մէջ: Խոլորովին ձգելու համար Ս. ներս այն հայրապետութիւնից, Արշակը նորա փոխարէն կամ նու մ է ձեռնադրել առաջ Չոնակ անունով մէկին, բա և պիտիստանելով յանձն չեն ասնում, բացի Աղճնեաց Կորզու աց եպիսկոպոսներից, որոնցից և նու Եպիսկոպոս կան ձեռնադրութիւն է բնդունու մ, բայց նորա իշխանութիւնը Փառատոսի ասելով մնում է ուահմանափակ, որու հետեւ մէծամասնութիւնը հաւասարիմ էր Ս. ներսէսի Արքա կողմնակիցների գլու խն էր երեկ խագ՝ Բագրեան և Արշարունիաց Եպիսկոպոսը, որին Փառատոս աեղապ է անունում հայրապետի բացակայութիւնների ժամ նակ և մինչ գովասանքով է խօսում նորա որբութեան պէտի թագաւորը ցոյց տուած համարձակութեան մասն

ցէ երօք ներսէսի կողմնակիցները նորան ճանաչում է իբրև տեղապահ թէ այս ժամանակամիջոցում և թէ շահի մահից յետոյ, երբ Ս. ներսէս հաւանականաբար յար ժամանակ բացակայ մնաց աթոռից։ Չոնակը վերջը եղաւ յայտնի չէ։

Ս. ներսէսի և Արշակի գժտութեան առթիւ կարող է եղած լինել նաև այն հանդամանքը, որ Արշակ իւր ոգաւրութեան վերջին տարիներում Պարսից կողմն է կւում։ Յուլիանոս կայսը Պարսից դէմ վարած պատեղմում կոպտութեամբ և անարդանքով էր վերաբերուել պի Արշակ, ուստի սպասած օգնութիւնը նորանից չէր ացել և սպառնացել էր պատերազմից յետոյ պատեղել ան։ բայց սպառնուեց պատերազմում և նորա յաջորդը՝ իմանոս 363-ին պարսիկների հետ գաշն կապելով յօժանց ձեռք քաշել հայաստանից։ Այդ ժամանակուանից իր Արշակ աշխատում էր երեսի հաճոյանալ Պարսից սգաւորին, և դորա հետեանքն է Փաւստոսի երկու գամ յիշելը, թէ նա բարեկամութեան դաշն է կապել պուհի հետ, մինչեւ իսկ յունաց դէմ պատերազմի ելել։ մենայն դէպս Արշակի երկդիմի դիրքը և կայսեր օգնուանից զիկուելը շատ ծանր պիտի նստէր նորա թագաւորթեան։ Բարեկամուկան յարաբերութիւնները Պարսից ո երկարատե լինել չէին կարող, սոքա պիտի աշխատէին ։ ի գաշնագրութիւնից յետոյ անպատճաւ տիրել հաստանին։ և եթէ սկզբում յաջող էին Արշակի պատեղմուները Պարսից դէմ, որ աներեւակայելի չափազանցուաներով ճոխացրած պատմում է Փաւստոս, դժբախտ խճանը անխուսափելի էր այնուամենայնիւ։ Բայց այն, պատերազմի մէջ կռուազ ոյժերն անհաւասար էին՝ նաւհի համար դիւրին էր հայոց նախարարներին Արշակի մ գրգռել և նորա գօրութիւնը զանազան միջոցներով տեղ։ Յանուանի յիշուում են Վահան Մամիկոնեան, Տրուժան Արծրունի և գըեթէ բոլոր սահմանապահ իշները իբրև ապստամբ Արշակից և Պարսից թագաւորանորա դէմ դըդող։ Նախարարներին թագաւորից հեցնելու մի պատճառ համարում են մեր պտտմիչները, ակաւանի շինութիւնը, որն արագ կերպով ընակէ ցնե-

լու և մնծացնելու համար Արշակ ադաս էր կացու այնտեղ ժողովուոզներին իրենց նախկին յանցանքներ պարագի և գատերի պատասխանառուութիւննեց և ոյզդ սով մեծ անկարգութիւններ և դժգոհութիւններ ու բերել ժողովրդի մէջ։ Աւելի ճիշտն այն է թերթա, որ Կ շակ ճգտում էր իւր երերուն գան ամրացնել և Հայ թագաւորի թուլութեան և հարևան զօրեկ պետութիւնն ըն Ճեացին խաղալիք լինելու գլխաւոր պատճառը համբ լով էւր երկրի բազմաթիւ կիսանկախ նախարարութիւնների մէջ բաժանուած լինելը, աշխատում էր մի զա կենդրոնական իշխանութիւն ստեղծել. բայց հայ նախ քարները միայն իրենց անձնական շահերի ետեկց ընկա և կարճատեսութեամբ ինչպէս սովորական է այսոք գէպերում, պատրաստ էին ամենաշնչին հաշիւներով ։ Միմեանց դէմ ելնելու և թէ թագաւորին գաւաճաներ նւ երբ պատմիչը Արշակին դատապարտում է Կամսար կանների կոտորելուն և ուրիշ նախարարների ազան թեան համար, իսկ նորա պապ Խոսրովին անմեղագիր կացուցանում, որ Մանաւազեանց, Որդունեաց, Քջունեաց նախարարութիւնները ընածինջ էր անել առւել, և շուշա արդարութեան զգացումը չէ խօսում նորա մ երկու թագաւորներն էլ երկի նոյն քաղաքականութե էին հետեւել, բայց Արշակ թէպէտ աւելի մեծ ձիքը օժտուած, դժբախտ օրերի հանդիպեց և չկարողացաւ ։ Հայրերի քաղաքականութիւնը գլուխ հանել։ Գաղաքակ այն պայմանների մէջ, որ նա էր գտնւում, զարման չէ, եթէ ի վերջոյ իրեն բոլորովին առանձնացած և լ քուած աեսաւ և սահպուած եղաւ նապուհին անձն տուր ընել 867 թուին, որի կոզմից պատառավ ընդո նուելուց յետոյ, Անյուշ բերդն աքսորուեցաւ։ Ըստ Գ ևստուի Ներսէսի Մեծ աշխատում էր այս անդամ ։ համաձայնեցնել նախարարներին, որ իրանց թագաւոր պաշտպանեն և օտարի ձեռքը չտան երկերը, բայց չէ ։ Զողում։

Գ. Ա. Ներսէսի կարուղիկոնուրիւնը Արշակի մամ մահիր. Արշակի գերութիւնից յետոյ նախատ

առւմ մեծամեծ տղէսներ են տեղի ունենում։ Փառան-
նեմ թագուհին Պապ արքայարդուոյ հետ Արտագերս ամուր
ռեգուն է ապաւինում և երկար ժոմանակ արիաբար
զնաշտապանուում, յետոյ թագաժառանգին ռւղարդում է,
որ Յունաց կողմից օգնութիւն գտնէ և ապառում է։ Այդ
Բամանակ օտարը մի պատմիչի տուրդով Շապուհի կողմից
այսոց աշխարհի վերակացուներ էին կարգուած Արտաւան
և Գիւղակ, որոնք թագուհու կողմն են անցնում և երբ
Պապ օգնութիւն է գտնում Յունաց կողմից և Հայաստան
մտնում, գնում նիզակակից են լինում նրան։ բայց սա
ըիս ժամանակ յետոյ նոցա գիմ եղած ամբաստանու-
թեանց հաւատալով, դաւագրութեամբ սպանել է տալիս
ոցաց։ Այս Արտաւանն ու Գիւղակը մի քանի գծերով հե-
ւաւող նմանութիւն ունին Փաւստոսի յիշած Վարդան
Մամիկոնեանի ու Գղակ մարդպետի հետ, և եթէ դոքա
նոյն անձինք են եղել, երեւում է դոքանից, թէ որչափ
չփոթ են մեր տեղեկութիւնները ժամանակի անցքերի մա-
սին, չնայելով որ երկու արժանահաւատ պատմիչներ
նկարագրում են այս։ Մինչ այս Փաւանձեմ թագուհին
զուր տեղը իւր սրդուց մօտ տաօն և երեք ամիս օգնու-
թիւն սպասուելուց յետոյ ստիպուած է լինում անձնա-
տուր լինել Պարսից, գերի է տարիւում Պարսկաստան և
անպատուած մահով սպանում։ Հայաստանի գլխաւոր
քաղաքները և շատ բերդեր քարուքանդ են լինում, դան-
ձերը կողապտուում, և քաղմաթիւ ժողովուրդ, որի մէջ
նաև հրէաներ, գերի տարիւում։ Այդ գերեխներից մէկն էր
Սըտաշատի Զուկիթ երէցը, որ իւր հաւատը չուր անարուն
համար նահատակւում է Շապուհի հրամանով։

Սակայն Վաղէս կայսրը վեջապէս Ցերենաթիոս զօրա-
վարին Ադէ Կոմսի առաջնորդութեամբ զօրք է տալիս
Պապին օգնութեան, որ գնայ ամիրէ իւր Երկրին։ Ըստ Փաւ-
ատոսի Հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնեան՝ Արշակի
Աշանաւոր զօրավար Վասակի որդին, հայ առաջապահ
պեղով կանխում երկիրը մաքում է Պարսկներից, բեր-
գերը գրաւում, Պարսկից շնած կրտակատունները կործա-
նում, այնպէս որ Պապ անարդել գալիս է իւր գանձ վե-
րայ հաստատում։ Այսուհետև Հայոց հետ ունեցած եր-

Նշանաւոր ճակատամարտերի մէջ ևս Մուշեղ մեծահայտնի քաջութիւններ է անում՝ պարսիկներն սահմալուած ն լինում բալորովին ազատ թողնել Հայաստանը։ Պարսիկ պատմութիւններ էլ յայտնի է, որ 370 թուբին Պարսիկ թագաւորը իւր զօրքը յետ է կանչել Հայաստանից։ Պարսիկ լինում է անշուշտ Փաւոտոսի յիշած պատերազմներ և ճակատամարտից յետոյ։

Պատկան իւր Երկրում ոտ գրած օրեց հետամս էր եղել Ս. Ներսիսին գանելու և զիմելով նըան խնդի էր՝ հայր և հոգու ապեաւ լինել գարձեալ ջլատուած հօթ և նա ամին կերպ գործակից էր Երկրի մէջ կարգ ու իս դադութիւն վերականգնելու։ Իսկ Զերաւի փառաւաւոր և կատամարտի միջոցին նա Մալուէս մարդարէի նման նպա լիրան վերաց բազու կները տարածած ըստ պատմչի ար թու մ էր և այսպէս իւր քաջալերութիւններով գլխու որ սժանդակովը զարձաւ։ յաղթութեան։ Սակայն նոր համաձայնու թիւնը Պատիկ հետ երկար չի տեսում։ Փառ ստու ամենազգսուելի գոյներով է նկարագրուած Պատ վարած անբարոյական կեանքը, բայց այդ բոլորովին համաձայն չէ ծամանակակից Ամիանոս պատմէչի առւ առ ելի հաւ ասուի նկարագրին, ուր Պատիկ իւր հօր ա զու սպ ոզու կտըիչ ժառանգ է ներկայանուամ և տաղանդաւոր իշխան, որ կարճ ժամանակամիջոցուամ կ բողացաւ քայքայուած պետութիւնը ոտքի կանգնեցնել Վատահնելի չէ նաև Փաւոտոսի մեղադրանքը, թէ Ս. Ներսիկ մահու ան պատճառը Պատիկ է եղել, որը չէ կար զացիւ ատնելներ յանդիմանու թիւնները և նենդութեաւ րնթրիքի կանչելով թունաւորումէ նրան։ Ս. Ներսիկ յանկարծական մահը նորա կենդանութեամբ և մանաւան մահից յետոյ Պատիկ ըռնած խոտորնակ ընթացքը, յառ են բերել այդ կատկածը հոգեռորականութեան մէջ։ Ել նա մեծ հանդիսով թազւում է ժառանգական թիւն աւ նում՝ ինքը Պատիկ, ասած է, մասնակցում էր հանդիս և ամեն յարգ անը ցոյց տալիս։ Հարկ չկաց ընդունելու որ վերջնա իւր չարագործութիւնը ծածկելու համար և այսաւս վարուում։

Յ. Պապի ընթացքը Ս. Ներսիսի մաճից յետոյ, նորան ասջուդող կարսւդիկանները:—Հայրապետի մահից յետոյ ան-
գծապէս Պապ ձեռնարկեց յիքաւի յեղաշրջել նորահաւ-
աստած կարգերը: Նոր կաթուղիկոս ընտրւում է Աղ-
բանսափ տնից Յուսիկ Բ., որին կրկին Խորենացին և իւր
ժամանակ չեն յիշում, և որովհետեւ նու այլ ևս կեսա-
ժամ չէ ուղարկում ձեռնադրուելու, Փաւստոսի պատմե-
տվ իւրեւ թէ Կեսարիոյ մետրոպօլիքաը, որ այն ժամա-
ռակ Ս. Բարսեղն էր, զայրանում է, ժողով է գումարում
և անվաւեր ճանաչում Յուսիկի կաթուղի-
տութիւնը, արգելում Հայոց կաթուղիկոսներին եպիս-
տապոս ձեռնադրել, հարկադրում այսպիսով, որ Հայոց
գեղեցու համար պէտք եղած եպիսկոպոսները գան ու
Եւսարիայում ձեռնադրութիւն ընդունեն: Բայց զարմա-
ռալին այն է, ինչպէս ակնարկեցինք, որ ինքը Ս. Բարսեղ
այսպիսի մի կարևոր կարգադրութեան մասին ոչ մի յի-
շաստակութիւն չի թողել իւր գրուածների մէջ: Թող, որ
եթէ լինէր իսկ այդպիսի կարգադրութիւն, Պապի նման
մի թագաւոր և Հայոց եկեղեցու նման մի ինքնուբոյն
Քաստատութիւն ոչ մի դէպքում անկասկած չէին համա-
խրպէ նորան, և մենք ոչ Փաւստոսի և ոչ յետագայ շըր-
ջանի՝ Ս. Ներսիսի ժառանգ Մեծ Սահակի պատմութեան
մէջ ոչ մի պատմակտն հետք չենք գտնում, որ այսպիսի
մի կարգադրութիւն երբ և իցէ գործադրուած լինէր:
Բայց Ս. Բարսեղի նամակների մէջ յիշում է մի ուրիշ
գլէն, որ տեղի է ունեցել ինչ որ Փաւստոս եպիսկոպոսի
ձեռնադրութեան պատճառով: Սա Պապի յանձնարարա-
պանով Ս. Բարսեղի մօտ էր գնացել ձեռնադրուելու, բայց
Նա յանձն չէ աւնում ինչ ինչ մութ պատճառներով
Նըրան ձեռնադրել, ուստի Փաւստոս գնում ձեռնադրուեմ
և Տիանայի եպիսկոպոսից, և դորանով Ս. Բարսեղի ան-
պօր գժգոհութիւնը յառաջ բերում: Ամէնայն հաւանա-
գանութեամբ այստեղ խօսքը Յունաց ոահմաններում
գտնուած մի թեմի մասին է, որ ճնթարկուած է եղել
Կեսարիայի մետրոպօլտի իրաւասութեան, բայց այնքան
անորոշ կերպով, որ հարեան վիճակի մետրոպօլիտը կա-
զող էր իւր սահմանի մէջ համարել. իսկ Պապ նոցա ռե-

մել էր այն պատճառով, որ այդ թեմը Մեծ Հայքի սա մաններից գուրու էր: Գուցէ և այս գեղը հիմք է ծայ յել այդ աւարօրինակ առ անգութեան, թէ Ս. Ներսէ յետոյ ըոլոր հայ եղիսկոպոսները Կեսարիայում են ձեւ նազրութիւն ընդունել: Յամենայն զէպո այս և նմ պատմութիւնները որոնցով Փաւատոս աշխատում է ոկ կապ ցոյց տալ Հայոց հայրապետութեան և Կեսար աթոռի մէջ, ակնյայտնի արգի: Այս ինչ որ միտումն ձգտումների և նոցա բացատրութիւնը պիտի որոն աւելի այն առանձնայտուկ պայմանների մէջ, որոնք յուած եկան մեր եկեղեցում Ս. Ստանիկց յետոյ Ե. դա կէսերին, Փաւատոռի գլքի Խմբագրութեան ժամանակ:

Յուսիկից յետոյ նոյն կարգով յաջորդում են իր երեք կաթուղիկոսներ Զաւէն, Նահակ և Ասպուրակի հաւանականաբար երեքն ևս Աղքիանոսի տնից. Թէպ Նահակը Կորմեայ է անուանում գուցէ նորա համար, նախ քան կաթուղիկոսութիւնը Կորմէկից եպիսկոպոս եղել: Փաւատոս բացառաբար յիշում է սոցա կաթուղ կոսութեան աարիները: Զաւէնի համար Յ, իսկ Նահա համար երկու տարի, և որովհետեւ Ասպուրակէսի համ էլ ասում է թէ իշխանութիւն էր վարում Խոարովի օր ուստի կաթուղիկոս եղած պիտի լինի առնուազն մի 90 թիւը: Այդ շրջանը եկեղեցու համար Ներսէսի կաթուղիկոսութեան հետ համեմատելով Փաւատոս Նկարագրութիւնը է իրքեւ յետադիմութեան շրջան: Թէպէտ վերջին ժամ Նակներս մեր պատմութեամբ հետաքրքրուող Եւրոպա գիտունները Պատի տառաջն իսկ քայլ, Յուսիկ Երկրու կաթուղիկոս Նստելն առանց Կեսարիա գնալու, համ ըում են գարագլուխ մեր Եկեղեցւոյ պատմութեան հ մար և սկիզբ մեր Եկեղեցական լնանու սոյնութեան, բայց պէտ կինէր, եթէ իրօք ապացուցուէր, որ մինչեւ ս ժամանակ մեր Եկեղեցին Եսթարկուած էր Կեսարիաց աթուն: մինչդեռ պիտի կրկնենք, ոչ Փաւատոսն է այդ ասու և ոչ մեր ազգային կամ արագին պատմութեան որ և է արժեքաւոր փաստ կարելի է գտնել այդ Ենթ գրութեան վերաց պնդելու համար: Ստոյգն այն է միակ

Նոյն թղթակցութիւնը ներկայացնուամ է Գիւտ թուղիկոսին բոլորովին մի նման գերի մէջ, որպիսին ըան Փարագեցին է վերագրում հայ իշխանների նկատման խիստ մռայլ գոյներով է նկարագրում ժաման հայութեան, մանաւանդ նախարարական տների բար կան վիճակը: Վարդանանց պատերազմից յետոյ պար ները լաւ հառկացել էին, որ զէնքով ընկճելուց շատ այածար ու զիւրին էր հրապոյներով ու զանազան իգալս միջոցներով նախանձ, երկապառակութիւն, ոնառութիւն տարածել հայերի մէջ, նոցա կրօնական ու ըենասիրական եռանդը պազեցնել, մեղկացնել ու բայապէս ստրկացնել նոցա: և օրոշ չափով հասել էին նապակին: Հայ ցածահոգի իշխաններից շատերը բարձր գպատիւներ, կալուած ու հարստութիւն ձեռք բեր համար ուրանում էին իրենց հաւատը, մատնաւած և ահանում իրենց մըցակիցներին: Նոցա օրէնակը վա-

շռւմ էր աւելի ստոր դասակարգի մարդոց, և բանն այնա-
սեղ էր հասել, որ Պարսից թագաւորը մոռանալ կարող
եք անընկճելի հայ զինուորութեան դարերի ընթացքում
ուսոյց տուած ամբաւ սիրագործութիւններն ու ասել. իմ
շօքքի մէջ ամէնից անպիտան ու յետին տեղ բանողը ասա-
ռիներն են, բայց ասորուց էլ յեաննեալ ու անպիտան
հայն է: Հարկաւ պակաս չէին նաև իրենց նախնեաց պա-
տուին, եկեղեցւոյ և հայրենիքի բարույն՝ նախանձախնդիր
Նախարարներ, և ահա ոոցա միջոցաւ Գիւտ ջանք էր գործ
քնում օրէօր ծաւալող չարեքի առաջն առնելու և իւր
հօտի անմսիթար կացութեանը մի դարման տանելու. աշ-
խատում էր արթուն պահել նոցա մէջ բարոյական գի-
տակցութիւնը, համախմբել նոցա և միաբան գործել տալ:
Վաչէ թագաւորի հետ ունեցած վերսիշեալ թղթակցու-
թեան նպատակն էլ այն էր, որ քաջալերէր նորան նե-
զութեան օրերում և այդ կարևոր ոյժը պատրաստ պա-
հէր երկու հարեւոն ազգերի ընդհանուր քրիստոնէական
գործի համար: Մինչև իսկ հաւատարիմ նախարարների
հետ միացած՝ Գիւտ երկու անդամ գաղտնի պատգամա-
ւորութիւն էր ուղարկել Լեռն կայսեր մօտ և նորա օգ-
նութիւնը խնդրել՝ մի նոր ապստամբութեամբ Հայոց եր-
կիրը քրիստոնէայ իշխանութեան ներքոյ դնելու համար.
բայց արգիւնքի չէր հասել:

Միւս կողմից Գիւտ բնականաբար լաւ յարաբերու-
թեան մէջ չէր ուրացող և դաւաճան նախարարների հետ.
տեղն ընկած ժամանակ նա չէր քաշուում նոցա կշտամ-
քելու իրենց վատութեանց համար և ցոյց տալու իւր
ակներև արհամարհանքը. որից զայրացած Գարջոյլ մախազ
Խորխոռունին ամբաստանեց նորան Պարսից թագաւորի
առաջ, և նա արքունիք կանչուելով՝ թէպէտ կարողացաւ
արգարանալ իւր վերայ բարդուած գլխաւոր մեղադրան-
քեց, որ էր կայսեր հետ ունեցած գաղտնի բանակցու-
թիւնը, բայց և թագաւորի պահանջներին չհամակերպե-
յան: համար զրկուեցաւ կաթուղիկոսական աթոռից: Հատ
Պարպեցաւ նորան ստիպում: Էին մոգութիւն ընդունել
բայց գժուարէ հաւատալ, որ այդպիսէ անհեթեթ: Ար-
հանք գրուէրո երեք թագաւորը կամենում էր:

միայն գործիք գարձնել էւր ձեռքում, և չյաջողեց։ Յանայն գէպս մեծ չի կարող եղած լինել բարկութիւննորա դէմ, երբ նորան թոյլ է տրուում աղատ աղման մայրաքաղաքում, պատիւներ վայելել, նոյն իսկ ձեռնու զրութիւններ կատարել, ապա հայրենիք վերագաւանարձ գեռ երկար տարիներ խաղաղ կեանք վարել ու խոր ծնութեան մէջ հանգչել Վանանդ գաւաւաւի Ոգմսու դիւզում։ Դժբաղդաբար ուրիշ կողմնակի մանրամասն անզեկութիւններ չունինք այդ նշանաւոր հայրապետի մասնին, չենք կորող որսչել, թէ Երբ զրկուեցու աթոռի և Երբ վախճանեց։ Ինչ վիճակի ենթարկուեցաւ հայրապետ պիտութիւնը նորա հրաժարումից յետոյ։ Նորան վերադրուում է մի թուղթ Դաւիթ Անյաղթին ուղղուած, ու կեղծ լինելն անկատիած է։ Ի նկատի առնելով, որ նրան մեղադրում էին կայսեր հետ գեռ շարունակուող յարտերութեան համար, իսկ Լեռն Ա. կոյսրը վախճանել է 474 թ.-ին, կարելի է մտածել, որ նա այդ թուականից առաջ զրկուեցաւ հայրապետական իշխանութիւնից։

Բ. Վահան Մամիկոնեանի ապաստմբուրիւնը։ — Վեր յիշուեցաւ, որ Վարդանանց պատերազմից յետոյ Մամիկոննեան, Կամուաբական և այլ տոհմերի գերեալ մտառի իշխանազուններ Պարուից դուռն էին ուղարկուել։ Յադկերտ Բ. գեռ ևս կենդանի էր, որ Վարդան Աշուշայ բգեշիք մեծ ջանքավ կարսղացաւ նահատակ Հմայեակ Մամիկոննեանի երեք որդուց ազատել գերութիւնից (155 թ.-ին)։ Սոքերեցը՝ Վահան, Վասակ և Արտաշէս, մնուեցան այնուհեաւ Վրաստանում, Աշուշայի տանը՝ իրենց մայր Շուիկի խնամքի նելքայ, որ Արծրունի էր ծննդեամբ և որի քոյր Անուշվուամը Աշուշայի կինն էր։ իսկ կրտսեր եղբայրը՝ Վարդ, առաջդուց տարուել էր գայեակների ձեռքով Տայոց աշխարհը։ Դաղար Փարպեցին, որ թէպէտ տարիքով միոք ինչ մեծ՝ նոցա մննդակիցն է եղել պատանութեան օրերում և նոցա մօքեղբայր Աղան Արծրունու մօտ մնել, մեծ դովութեամբ է խօսում նոցա ‘Մօք’ իրեն բարձր բարյակիմն արժանիքների տէր մի անհնան մասին։ ինչպէս երևում է, նոցա կը թուաթեան գործում էդիքին է ունեցել նաև Աղան Արծրունին, որ ա. Սա

ԱՅ և ո. Մեսրոպի գալքոթից էր և շատ երիտասարդական սակում կրօնաւորական պետք էր հագել։ Եւ ահա, մինչ ան հայաստանում բացըյական անկօւմը աւելի ու աւելի ալի էր գառնաւմ և հետզհետէ մի ողբալի կացութիւն և գծուում՝ հարեւան երկրում աճում գորանում էին սմբկոնեան կորիւնները և արժանավայել կըթութեամբ ռազաստուում իրենց անհման նախնեաց տեղը բռնելու։ ւանձնապէս տչքի էր ընկնում իւր արտաքոյ կարգի գունակութիւններով մեծ եղբայրը՝ Վահան, որ թէպէտ ըրկ ժառանգական իշխանութիւնից ու ստացուածքից, բգանք էր ազգում ամէնքին և նստիւնձ շարժում պահագացունների մէջ։ որոնք ուրացութեամբ և պահթաք միջոցներով սաոր գերքեց բարձրացել էին ու նոց մուրացածոյ փառքը նսեմացած էին աեմնում տղաւ Մամիկոնեանի ընատուր ձերքերի առաջ։ Սոքա չդանուցքին բանսարիկութիւններով ու քառիթիւններով կաստելի գտրձնելու նորան արգունկում, և Վահան աենլով, որ ապահով մինելու և յառաջադիմելու համար ակ ճանապարհն էր ժամանակի բարքերին յարմարուել, նծն առաւ գիրազգացաք հակառակորդների գէմ նոցա սցով կուռել, ինպն ևս Պարսից գուռը գնաց և հաւառ մէջ ակարանալով։ Կտրողացաւ, ինչպէս երկում է, միայն վատահութեան ձեռք բերել, այլ և մի կարևոր սշտոն ստանալ։ պետական ոսկենանքի վերակացու կարւել։ Առեալյն շարպառութիւնները նորա գէմ չգաղացին, և թէպէտ երկրորդ անգամ արգունիք գնալով՝ նա ջողեց իւր վերայ բարքած մեղագրանցները փակուն շացացներով հերքել, բայց սեփական խիզճը նորան հանու ոտ չէր տալիս և նա յարմար աղբիթ էր որոնում՝ ուցաւթեան սրատն իւր վերափա մարելու և մի Մամիկոնի անվայել կեղծ դըութիւնից ելնելու։

Առիթը շուտով ներկայացաւ։ 482 թ., ին Վարոց Վախենդ իշխանը ապստամբելով Պարսիկներից՝ թագաւորեց աստանում, որով յատ արժարժուեցաւ հարեան քրինեայ ազգերի, մանաւանք Պարսից բանակում ամէն տուի անկարգ անքի, ու անտեղի ջրկանցների ենթացիուած զօրամասների մէջ։ որ ժամանակը եկել էր նաև եկեղ

համար՝ անտառնելի լուծը թօթափելու և պատռաւուր կեանքի պայմաններ սաւեղծելու:

Այս գօրական իշխաններից ոմանք՝ լաւ իմանալով Վահանի տրամադրութիւնը և գնահատելով այն հրապոյզը, որ Սամիկոնեան անունն ունէր հայ ժողովրդեան աշքութեածուկ նորան դիմեցին և յայտնեցին, որ պատրաստ էր ժամանակի ներկայացրած յարմարութիւններից օգտուելու և նորա առաջնորդութեամբ ապստամբութեան գրոշ բարձրացնելու։ Վահան ոկզրում մերժեց նոցա առաջար կը՝ առարկելով, որ չնայած երեսից անտառնելի դիմակ հանելու իւր մեծ յօֆարութեան՝ ո՛չ Յունաց, Վրաց և Հոների անվատահելի օգնութեան, և ո՛չ մանաւանգ հոգ նախարարների հաւատարմութեան յոյս կապել կարող էր բայց երբ վերջիններու ըոււմն սգեսորութեամբ հաստատեցին, որ պատրաստ են աւելի շուտ մոհ յանձն առնելու, քան շարունակելու մնալ այնպիսի արհամարհեալ գրութեան մէջ, Վահան ևո սգեսորուեց, քահանայ և աւետարան բներել տուաւ, և ամէնքը միաբերան երգուեցան՝ անձը դնելու իրենց հաւատի և պատռուի պաշապանութեան համար։ Այն հանգամանքը, որ այստեղ գարձեալ մի անպիտոն մասնիչ գտնուեցաւ Ամատոնեաց տոհմից և գնաց նախարարների խորհուրդը յայտնեց պարսիկ մարզպանին, շատ արագ ացըրեց ապոտամբութեան ծրագրի իրադործումը։ Հայաստանի մարզպանն էր այդ ժամանակ Ասրվշնասպ անունով մէկը, որ պարսիկ հազարապետի և ուրիշների հետ գտնւում էր Նիրակում և երբ տալստամբութեան լուրն առաւ՝ շատապեց իւրայիններով Արտաշատի ըերդն ապաւինել։ Հոյ նախարարները ետևիցն բնկան ու բերդը պաշարեցին, բայց նա կարողացաւ այգտեղից ևս խոյս տալ ու Ատրպատական անցնել։ Միայն ուրացող Գաղիշոյ Խորիսուունի մախազը բռնուեցաւ ճանապարհին և Դուին բերուեցաւ, ուր ապստամբներն սկսեցին եռանդուն պատրաստութիւն տեսնել։

Ատրվշնասպ հետևելով իւր շոջապատղների խորհուրդին; որ քանի դեռ հայերն անպատրաստ էին և վրաց հետ շեին միացել՝ դիւրին կիլնէր նոցա ընկնել և ապստամբութեւնը սաղմի մէջ խեղդել, հապնեալով մի խառն գուն

Այս Առապատականում և արշաւեց գէպի նրասխի : Հայերն ևս շտապեցին երկրի մէջ կառավարութիւն արգեր հաստատելու Սահակ Բագրատունի ասպետն տւեցաւ մարզպան, Վահան վերտականգնեց իւր տոհնոն իրաւունքները և ճանաչուեց իրեւ սպարապետ ու տանուտէր Մամիկոնեանց . ուրիշ առաջնակարգ արարների համապատասխան պատիւներ տրուեցան, պէս զի այս գեռահան կազմակերպութիւնն ոկդրֆց ։ վասնգի չենթարկուի ու քայքայուի, որոշուեցաւ արգաղոտնն ու սպարապետը Դուինում մնան, գործ կարգի գնեն . իոկ Վահակ Մամիկոնեան, Կամեարաւեղբայրներն ու ուրիշները Բարեկէն Սիւնու գլխաւունեամբ մի փոքրիկ գնդով Պարսից գէմ դնան և աշտեն չթողնել, որ Երաւին անցնեն ու երկիրը մտնեն : և թշնամի գնդերն իրար գէմ ելան Մասիս լեռան տուում, Ակոսի դիւզի մօտ : Հայերն ընդամէնը 400 էին և զոցա մի քառորդը Գարջոյլ մախազի հետո, որին գերադարձաբար անխոհնեմութիւն էին ունեցել՝ բազմագիմի դաւաճանութիւններին չնայած, հայրեա պաշտապաններին ընկերացնել, և որ մէ միայն կոռուի ում իւր մարգկանցով թշնամու կողմն անցաւ, այլ և ի պմնատաք ժամանակ մի խորամանկ շարժումով ի կողմից յարձակուեց հայերի վերայ ու քիչ մնաց Դութիւն ձգէր նոցա մէջ . սակայն և այնպէս մնացած հերոսներն աներեակայելի քաջութեամբ կռուեցան ենց վատ ազգակիցների նենկութիւնն ի գերեւ հարգ փառաւոր յազթութիւնն ատարան քաղմապատիկ ւել թուով թշնամու գէմ . Պարսիկ մարզպանը սպարապետեամբ, Նորա Խոտունինաղանձ զօրքը ցրուեց պերը Ժամանակ վաստակեցին կրկնապատկուած ոգեռնեամբ սկսած գործն առաջ տանելու : Այնուհետեւ հասաւ ձմեռաբ . և թէպէտ ոչ Վախթանգ թագակ կադմից սպասուած օգնութիւնը գտաւ . Վահան և նիկ հարաւային մեծ նորիարարութիւնների՝ Արծրուլ, Անձնացեաց, Մոկաց և Ռշտունեաց մօս նորա ու աւաճ պատգամաւորները զգալի ոյժ բերին, աջառ այնիւ շգնատեց, և նորա գոքը կունդը զի

սկզբին կազմ պատրաստ էր պարսիկներին գիմագրաւելու ։ Օրեքը տաքանալուն պէս սոքա արդէն կանոնաւոր բայց՝ մութեամբ գէպի հայաստան գիմեցին ։ բայց Վահան անդառ պարեց Նրասիլ միւս կողմում նոցա հանգիպելու, և զարու ձեալ մի անգամ պատմական Արտազ գաւառում, ներած սէհապատ զիւղի մօտ, օրհասական ճակատամարտ տեսակ ունեցաւ աւետարանի ու կրակի պաշտօնեաների մէջ ։ ուղարք մեծ բարդ էր հայերի համար, որ յաղթութիւնը նոցա կողմը մնաց, որ այսպիսով կրկին անոպատելի անհաւատալիք յաղթութիւններից յետոյ ակաբների թերահաւատներն իսկ զօրանալ ոկտան, և համոզուել ։ հայերնի սրբութիւններին հաւատարիմ քաջութիւնը հրաշտաներ կարող է գործել, յուսուալ, որ Պարսից ահագին դիմու նուրարական ոյժը աեղի պէտք է առաջ ի վերջոյ խաչի նկուն զօրութեան առաջ։

Յաղթութեան պատմէն եղաւ մի նոր անակնկալ ջողովութիւն, որ Վահանի և իւրաքնոց ուրախութիւնը կառաւ տարեալ դարձրեց։ Նորա կրտուեր եղբայրը՝ Վարդ, պատանդ էր Պարսից մօտ և որի վիճակը բնականաբեր մեծ հոգս էր պատմաւում նորան՝ զարմանալի քաջութեամբ ու ճարտարակութեամբ կարողացաւ խոյս տալ իւր պահապանների հսկողութիւնից և պատերազմից վերագրան ձողների ետևից հասնել։ Սակայն այս յաջողութիւնը վերջնն էր. շուտառվ ծանր փորձութիւններ վրայ եկամ։ Դեռ պատերազմից չէին հանգստացել հայերը, որ թուզ ստացուեց Վախթանգ թագաւորից, թէ պարուկական մենքանակ իւր երկիրն է մտել և ինքը չկարողունալով մենակ դէմ գնել՝ Հայաստանի լեռներն է ապաւինել և սգնութեան է սպասում։ Վահանն Մամբկոնեան, Սահակ մարդ պան և միւս բոլոր իշխանները՝ հուատարիմ վրաց հետ հաստատած ուխտին և երգման, ձեռքի տակ եղած պարող զօրքն առան ու աճապարեցին Վախթանգի մօտ։ Այստեղ նոքա կկամենային ամուր լեռնային գիրք գրաւել և թշնամուն Հայստատանի սահմանի վերայ ընդունել, բայց Վախթանգ սուտ խսնաւմներով և խարէսկան հնացներով նոցա համոզեց, թէ գաշնակից նոների մէ մեծ ըար մութիւն իրենց է սպասում դաշտում, նոցա տաճառ գնակ

ք գետի հարթավայրը, և դեռ ոչ մի հոնի երես չտես՝ նորա հանդիպեցին Պարսից Միհրան զօրավարին և Խպուած եղոն իրենց համար շատ աննպատճ պայմանաւում, անհամեմատ փոքր թուով, նակատել նորա անհար զօրքի գէմ: Վահան և իւրացինք սավորական քաթեամբ կռուեցան բայց չնորիւ այն հանգամանքի, գաշնակիցների զօրքի մէջ շատերը նախօրօք բանակթեան մէջ լինելով պարուիների հետ՝ պատերազմի շառամ գառանանեցին և նորա կողմն անցան, կամ վուսաբ հրաւերելով իրարանցում ձգեցին իրենց կողմի քերի մէջ՝ հետպհետէ լքումն յառաջ եկու և վաւառը ընդհանուր դարձու: Իսկ պարսիկները հետաերով փախչողներին՝ մեծ կռտորած արքին: Հայերի կռտուը շատ զգալի էր: Խռակ մարդարան ու Վահանի բազուկը՝ իւր քաջարի եղբայրը Վասակ, ընկան պարզմում, նրանուու Կամուարականը գերի բռնուեցաւ մնացած դորքը ցանուեցիր եղաւ: Հաւատարիմների միքրիկ գնդակ միայն կարդացաւ Վահան խոյս առաջ դէպի լոց առնւր կողմերը, և ապուամբների բաղդը վճռուած թէլլ էր համարել, եթէ նորա ստօրինակ արխութիւնն հաստատակումութիւնը չլինէին և մի քանի արտաքին ըեցածող հանգամանքներ ոյժ շտային նորա նորամորնութեն ձեռնարկութիւններին:

Դո Վահան Մամիկոնեանի սիրագարձութիւններն ու լրանակիք և նկարագրած մեծ մայաջտութեան ծանրան հետևանքներն ապացուցեցին, թէ ո՛րչափ իրաւունք մէր Վահանն ոկզբէց և եթ կառկած յայսներսւ ապրութիւնն առաջարկավ իրեն դիմուների գեղեցիկ խոսւմների ու ակնկալութիւնների: Համար նորա ըստոր և կաւասկիցները, որոնք առաջին յակթութիւնների փայտ ցլացուծ եկել յարել էին՝ թաղին, իրենց տները քառեցոն և ներելի ու աներելի միջոցներով իմենց գլուխ պահելու մսսին էին միայն մտածում: Նոր օժանդակթեան սպանուել վրացիներից, որմնկը այնպէս վհառաբար քառեցան իրենց իսկ երկիրը պաշապանելու եկած պաշտիցների հետ՝ անմտութիւնն կընէր: ու ըէշ ոչ մէ անգնութեան յոյս չկաց: Միհրան ահագին դուռը

անում էր քայլ առ քայլ խիզախ սպարտակետին և ամբաջանք գործ էր գնում, նորոն իւր ձեռքը ձգելով՝ փակելու ապստամբութեան խնդիրը. իսկ առանին մասանից ներն ու դաւաճանները պատրաստ էին իւրաքանչիւր քայլափոխում ի դերե հանելու. նորա ամենախորագէտ ձրագիրներն ու ամենահսկողի ձեռնարկները: Երկրի անողիտակառավարութիւնը մի քանի տասնեակ տարիներէ ընդութացքում ստեղծել էր այնպիոք վարակուած մթնոլորտոր որ ոչ միայն փոքրիկ մարդիկ չնշին նիւթական օգաւան ների համար մրցում էին միմեանց հետ՝ ամենաատոր ծառայութիւններ մատուցանելու օտարին, այլ և Ալիւնեան իշխանի նման առաջնակարգ նախարարներ պատիւ պարձանք էին համարում ամեն մի նենգաւոր միջաց, որու կարսղանային ապստամբ հայրենակցի ոյժը ջլատել և իրեն անձնութիրութիւնը ցոյց առաջ արքայից արքային: Արդիւ փառքի ու երախտագիտութեան է արժանի ուրեմն պատասխանակ հերոսը, որ այդ անտանելի պայմաններում պապէ չվհատեց ու իրեն չկորցրեց. որ իւր հանձարեղ ռազմագիտութեամբն ու աննկաւն քաջութեամբը ոչ միան բոլոր որոգ այթներից ելաւ, բոլոր խոչընդուները խորտակեց և իւր ազգի ինքնուրոյն գոյութիւնը գաբերով ազմանիցեց, այլ և իւր գերազանց ուռարինութիւններովն աս սխրագործութիւններով իրկեց նոյն ազգի պատիւը, նորու մոլորեալ զաւակների վատ արարքները մոռացնել առւա և շատ սերունդների համար զաղափարական հազի տիպու հանդիսացաւ:

Նշանակալից է Վահանի սւզարկուծ պատասխանը Պարսից զօրավարին, որ նորա ետեկից հասել, մի քանի հազար զօրքով հազիւ երկու փարսախ հեռաւորութեան վերայ քանակ էր դրել և թէպէտ նորա մարդոց թիւը հարիւրեկց չէր անցնում՝ փոխանակ զինու զօրութեամբ նորա վերայ յարձակուելու, գերադասում էր խազազ բանակցութեամբ հրաւիրել, որ գայ, հպատակի թագաւորին և յայս ունենայ իւր միջնսրդութեամբ չնորհաց արժանանալու: Վահան նկարագրում է, թէ ի՞նչպիսի ամօթալի և աւերիչ կարգեր էր մտցլել Պերոզ իւր տերութեան մէջ. գերակ անձամբ վերահասու լինելու իւր սահշարելու

Եշխանների բռնած ընթացքին, գնահատելու նոցա
առանձը և գատապարտելու թերութիւններն ու զեղ-
ակմները, քսուների և շողովորթների չարախօսութեանց-
գոյսում, վատերին առաջ քաշում, ազնիւներին արհա-
պեճանքի ենթարկում։ Անարդ վաճառքի առարկայ էր
առձել կրօնը. Թոյլ էր առաջիս, որ ամենացած մարդիկ
ունց հաւաան ուրանալով և մոդութիւն ընդունելով՝
հասանց կրակը պաշտելով և ծածուկ պղծելով ու ծաղ-
պավ, պատուի ու աստիճանի հատնեն. մինչդեռ մնձա-
մաժ նախարարները պէտք է քաշուէին ամէն առպարփ-
առք. եթէ պատուազգաց էին և հաւատարիմ հայրենի-
պատթեանց։ Այգպիսով բանն այնտեղ էր հասցրել, որ
ուսկ աչքում անպիտան ասորուց աւելի անպիտան-
ուն էր երեսում։ Ուստի ուրիշ ելք չէր մնացել հայ մար-
դու համար, բայց եթէ՝ կամ յարմարուել տիրող իշխա-
նութեան պահանջներին և կամովին իւր վերայ վերցնել.
Կողիքանութեան անունը, կամ մի հնար մտածել մաք-
արթու վրայից այդ պիսի մեծ արատ։ Ինքը Վահան սկզբում-
ուազին հանապարհն էր ընտրել և բանսարկուների ան-
որջ չարախօսութիւններից ձանձրացած կամեցնել էր հա-
ռարի գնով պալանզի իւր գիրքը. բայց ուրացութիւնից-
ուայ զգացել էր, թէ աւելի լաւ էր՝ պիշտ, հալածանք,
ոհ, քան հոգւոյ այս սպանութիւնը յանձն առնէր։ Եւ
Տո, եթէ համարձակուել էր զէնք վերցնել թագաւորի։
Է՞ ոչ թէ նորա համար էր, որ Պարսից ահաւոր զօրու-
թեւնն ու հայերի խեղճութիւնը չէր ճանաչում, այլ որ
ոչ գերագառում էր վատ անունից։ Թողնել հեռանալ,
ուրի աշխարհում ազատ ապրել, կնշանակէր վատու-
հան գրոշմը հետա տանել. մնում էր ուրեմն զէնքը ձե-
զն պացուցանել, որ պիդ գրոշմը արհեստական կեր-
պի է դրած, և հայութեան կրծքում գեռ բաւական
զութիւն կայ Պարսից զօրքի՝ ոչ թէ վատթարագոյն մա-
նեն, այլ տառնապատիկ աւելի թուով քաջերին իսկ գի-
տգրելու, ինչպէս արդէն երկու անգում տապացուցեց,
որ պատահ հայեր էին կառւում. պարսիկների հետ, և եթէ
բրորդ անգամ. իւր կողմնակիցների նենգութեան ու երկ-
ուակիքթեան երեսից անյաջողութեան է. հանդէպէւ

գորանով իրերի գրութիւնը չէ փոխուում, և իւր դու
հանջը նոյնն է մնում. կոմ պէտք է պարսիկներն իւր
կառավարութեան անպիտան եղանակը փոխեն, ամէն իւր
իւր իսկական արժէքով գնահատեն ու լողի աղասի
թիւն շնորհեն, կամ թէ չէ հայերը պատուաւոք ու
կընտրեն և մինչեւ յետին կէտ կադշտադանեն իրենց
գար գատը:

Այս սկզբունքին հաւատարիմ մնաց Վահան իւր պ
քոզջ կեանքում: Պարսից թագաւորը ստիպուած լինել
իւր բոլոր զօրութիւնը կինդրօնացնել պետութեան կա
սիս-արեելեան նահանգներում՝ Հեփթազների հետ ու
աերազմելու համար, չեր կարող բարեբազգաբար մշտ
կան մնձ զօրք պահել հայաստանում: շատ շանցած նիւ
քան իւր գնդով Պարսկաստան կանչուեցաւ և Վահան
իւրայիններն տղատ շունչ քաշեցին. Հրահատ կամուր
կանը ևս ճանապարհին խոյս տուաւ Պարսից զօրքի մնա
և նոցա հետ միացաւ. ապա Դուին մայրաբազարը միան
գարձան և նորքից մի տմբոզջ ձմեռ վաստակեցին՝ իւր
ուժերը ժողովելու և նոր արկածների համար պատրա
տուելու Սակայն ոլարովիներին յաջողեց, դեռ գարու
չըացուած, նենգաւոր և զաւաճան հայերի միջոցաւ
զորսութեան մէջ ձգել Վահանի շրջապատզներին, մի իս
քեոր զօրագունդ Մուշեղ Մամիկոնեանի առաջնորդ
Թիւսմբ բաժանել, հեռացնել նորանից, և ապա յաներ
ծակիք բերել նորան, որ առանց մի կառկածի սակաւ
թիւ մարգկանցով Դուինում նստած՝ մէկ էլ շրջապա
տուած գտաւ իրեն Զագարաւուխտ պարու
զօրավարի բերաւոր բանակով: Թէպէտ առիւծ Վահան
այս որոգայթի մէջ ևս չըռնուեցաւ, ոյլ իւրայիններ
հետ ոուրը ձեռին թշնամիների շղթան կտրեց ու ապա
տան գտաւ հայրենի ազատ լեռներում, բայց չեր կար
ի հարկէ մի նոր բանակ կտազմել և բաց գաշտում պար
աիկների ուշմ ելնել: Մի անհաւասար պայքար սկսուեցա
այնուհետեւ, որի մօսին դեռ գագափար չունէր կոյր ու
առաջ ամէն ինչ խռնարհեցնելու սովոր ասիական ըբան
կալութիւնը: Հազարաւուխտ մի առժամանակ անզուն
պայքար կամ անհանդաւ լինելուց, և ուս զայրով

յան տեղերի անպաշտպան աղդաբնակութեան վերաց միելուց և մի շարք աւերժմաններ գործելուց յետոյ սման ստացաւ իւր բանակավ Վրաստան անցնելու և փոթանգ Թագաւորին նուտնելու ։ իսկ իւր տեղը թու ։ Նապահ զօրավարին՝ մի քանի հազար զօրքով, որ լոժանեցը շարունակէ։ Բայց Վահան ամեննելին միտք չու ։ աեզի տակու։ Նա իւր փոքրիկ գնդով մերթ շանթի ո նետուում էր պարսիկների վերայ այն ժամին, եր Ենկց քիչ էին ապաստում իրեն, մահ ու սարսափ որփ ում աջ ու ձախ, մերթ թե առած ճախրում անցնում գիտար, գաւառու գաւառ, և դարձեալ շարաթներ էր բկաւոք լինում, որ թշնամին ետեկց հասնէր։ Այս խօր շաւանքի պսակն եղաւ նոեկի ճակատամարտը, որ, պէս երկում է, անջնջելի տպաւորութիւն է գործել անսատեաների վերայ։ Վահան մի անդամ գեշերով յար իւրել էր Պարսից բանակի վերայ և սաստիկ կսառըած եղուց յետոյ եկել հանդստանում էր իւրայիններով էր գիւղ կոչուած տեղում, որ պարսիկները եկան շրմ պատեցին գիւղը։ Յսդնած ու քնաթաթախի՝ հազարա պարսիկների պապէս յանկարծ իրենց շուրջը տեսակ, Վահանի մի քուռն հետևողները զարհուրեցին ու խռակ նորա արիական յոր գորներին փախուստի գիւղն ։ նորա մօտ մնացին միայն իւր հարազատ Մամի եաններն և ի մանկութենէ աննդակից ու բազգակից Բարձական եղբարք՝ Մեծն Վարդանի դուռեր և Արշա Կամուրականի որդիքը, իրենց մտերիմներավ՝ լինգա ը մօտ քառասուն մարդ։ Մինչև իսկ այս անվեհեր ըերն ամէն ինչ կարած էին համարում արգէն և զիւ ըրտթիւնն անօգուտու բայց երբ քաջերի քաջը խունքեց նրենն ու աշտանակեց ձիուն, անզուսադ ոգեսթեամբ հետևեցին նորան ու փոթարկի նման ընկան ատմու զրոյ։ Պարսիկներն իրենց աշքերին շէին հաւա և մակարձաւմ էին, թէ մի գերմարդկոյին զօրուան հետ գործ աւնին ։ ուշացող հայնախ պարհերի պարագան թիվին միւնքին՝ մի ցաղթանդամ զօրնական փոքր տնվական գնդապ Շարուանին օժանդակելու ։ Բայց մոշեամբ էր, դորթեց յանեղուազն ապահով

գէմն առնել, բայց մահացու վերք ստացաւ, և Վ. Նանք, չորս հոգի միայն զոհ տալով՝ վերջնական հանապարհ հարթեցին դէպի ազատութիւն:

Այս դէպքից յետոյ, մինչ Պարսից զօրավարը Հքած չգիտէր, թէ ի՞նչ ձեռնարկէր առասպելական, իոցելի հերոսի դէմ, մի գոյժ հաօտաւ նորան, որ գամայն յեղաշրջեց իրերի ընթացքը: Պերսդ թագ: Չարաչար պարտութիւն էր կրել Հեփթաղների դէմ քած պատերազմում և ինքը սպանուել, տագնաւ վիճակ էր ոտեղծուել Պարսից աէրութեան համար, գարման տանելու պիտի շտապէին՝ ինչպէս ուրիշ ըում, այնպէս և Հայաստանում եղած զօրականն զօրքը: Ընդհանուր հաճութեամբ Պերսդի եղբայրը Վ. Շը նորա գահի վերայ բարձրացաւ և առաջին պէտք է դորձնէր՝ իւր գոռոզ նախորդի յարուցած ընդհատ պատերազմների ու ապօտամբական շար ների հետևանոք քայքայեալ պետութիւնը խաղաղ լու և ներքութան բարեկարգելու: Նիխոր անուն բարձրաստիճան անձ և զէպի Հայաստան ուղար ցաւ, որ խաղաղ միջոցներով հնազանդեցնէ ապօտամերին: Առանց նրատին անդնելու՝ սա պատգամաւ ուղարկեց Վահանի մօտ և հրաւիրեց իւր բանակտ գնալ, Խաղաղ բանագնացութեան մէջ մտնել ու գաւորի հրամանները լսել: Վահան իւր կողմնակի ի մի ժողովելով պատգամաւորների ներկայութեամբ պայման առաջարկեց սոցա, որոց յանձնառութեան քում միայն կյօֆարէր Պարսից բանակը գնալ: ա) տոնէութեան պաշտօնն ազատ թողնել, ո՛չ ոքի բթեամբ կամ հրապոյրներով մոգութեան չդարձնել և կարաններ չշինել Հայաստանում: բ) Ամէն մէկին իւժանիքի համեմատ գնահատել և անիրաւ տեղը ստո շբարձրացնել ու քաջատօմներին չոտորացնել: գ. բախուսութեանց ու բանսարկութեանց ականջ չդնել անմիջապէս թագաւորի տեսեանի առաջ քննել իւր շիւրի գործը և ըստ այնմ գատել կամ վարձարել: առաջարկութիւնները տեղ հասցնելու համար ամառաքընների հետ իւր կողմից ևս մէ քանի

ուղարկեց, ոքանց նիխոր սիրով ընդունեց և Արեաց ոյք անունով խոստանալով բալսը պայմանները կաել՝ գեր ուղարկեց, որ տռանց կասկածի փութայ իւր մօտ։ Վահան այն ժամանակ իւր հաւատարիմու հեան առած և զգուշութեան բոլոր միջոցները գործ սկ՝ գիմեց գէպի Պարսից բանակատեղին, ուր և մասաւերազմի փողը հնչեցնելով՝ իրեւ մի յաղթական։ Այսնա ու նորա ուժուապահ ընկերներն այն մեծ հոգեբաւականութիւնն ունեցան, որ մինչ կը ենք պասւոր ընդունելութիւն էին գտնում և ամէն մեծավայելում, բանակի մէջ եղած ուրացող հայերն ընդուակն արհամարհնուում էին և դուրս քշուում հանւոր ակումբներից։ Նիխոր կը կին անդամ խոստավ՝ կատարել Վահանի առաջարկած պայմանները և խօսել թուգաւորի մօտ, որ հայերի ապստամբուն ի հարկէ ստիպեալ նկատուի և ապստամբող իշխները պատժի փսխարէն իրենց արժանի պատիւն նան, խնդրեց, որ Վահան ևս իրեւ նշան իւր հաւանութեան մի օժանդակ գունդ ուղարկէ Պերողի որդի հի ապստամբութիւնը ճնշելու համար։ Վահան ուեց այդ գունդը, հետն էլ իւր եղբօրորդի Գրիգորին, և այդպիսով զգալի ծառայութիւն մատուցած եղաւ, ևս ամենայն պատրաստութեամբ արջունիք գնաց, որշից սպառապետութեան պատիւն և Մամիկոնեանց ուտէրսութիւնն ընդունեց, իւր հետեղների համար պատասխան պատիւներ ձեռք բերեց, ինչպէս օրիադնիւ Կամսարականների համար իրենց տանուտէն իշխանութիւնը։ ապա փառքով պոակուած վերջաւ հայրենիք, որը ամենանեղ դրութիւնից հար։ Այս եզաւ հաւանականաբար 485 թ.-ին, քանի որ լ 484-էր սպանուել։

Դ. Յովինան Մանդակունի կարուելիկոս.—Ի՞նչ գեր էր սրում հայ եկեղեցականութիւնը Վահանանց շարժմէջ, այդ...մասին հարեւանցի աեղեկութիւններ միայն լ են : մեզ. բոյց ապստամբութեան առաջին կամ ասպարէզի, վերայ երևում է և նորա առաջուած եռանդուն գործակցութիւն։

Փեշադէս կազելի է մի քանի նշաններից եղբարկացնել, և տակադիրոն առւրբ կաթուղիկան Յոհան, ժամանակի Հեկեղեցւոյ հոգուապեաը: Անյայտ է մնում, թէ երբ հայրապետական աթոռ բարձրացաւ. Գիւտ կաթուղի ոկտ անմիջապէս յետոյ արգեօք, թէ միջանկեալ ժանակ անցաւ. Երկար տևեց այդ ժամանակը և թափուկ այդ միջոցն աթոռը, թէ մի ուրբջն էր հայրապետականութիւնը զարում: Թովմա Արծրունին պատմութէ Պերոզ թագաւորի օրով Բարձումա առողին աշխատ է նեստորականութիւն տարածել հայերի մէջ, նախակ ներին աժքառանել է Պերոզի առաջ և շատ ոճին գործել. իսկ ժամանակի Հայոց կաթուղիկուոը՝ Քրիստո թղթեր է գրել Ասորեստանի և Խուժառուսանի կող ուղղափառ քրիստոնեաներին և նեստորականութիւնու շացրել: Այստեղից շատերը հետեցրել են, թէ Կու Յովինան Մոնդակունու մէջ կաթուղիկոս պէտք է լինի յիշեալ Քրիստափորը: Բաւուկան է ռակայն ինձ առնել, որ Թովմա Արծրունին այդ պատմութիւնը բներում ապացուցանելու նպատակով, թէ Բարձունդիշէ պատմութիւնից հանել է Վարդան Մամիկոն գարժակից Վահան Արծրունու սիրագործութեանց վ բերեալ մի գլուխ, մինչ Եղիշէի պատմութիւնը Պերո Բարձումայի ժամանակներ գրաւած լինել չէր կազո ահա կաղաքաւի, որ Թովման իւր աեղեկութիւնները տահելի աղբիւրից չի առնում: Ինչպէս յետոյ կաեմ այն Քրիստափոր կաթուղիկուոը, որ նեստորականունից գրուշացներս համար թղթեր է գրել, ապրու Զ. դարսում, և եթէ Պերոզ անունը հանենք Թովմայի մուտքածքի միջից, մնացած գոլոր հանգամանցներն էլ դարուն են յարմար գարիս՝ թիւրիմացութեամբ Յ անուան հետ կապուած և Բարձումայի հետմազների խարէն Բարձուման ինքը գրուած: Դէպէ է մնաթ նաև, որ եթէ Մանգակաւնաւ և Գիւտի մէջ աւրեց թուղիկոս լինէր, Փարապեցին առանց յիշուտակութեան թուղիկ, ինչպէս որ Քիւտի ժամանին լուսնի ուրբած մասի յիշում է ունիջապէս նորա նախորդ երկու Ասանող յիշերին:

Յովհան Մանդակունուն սմանք նոյն են համարել վհան Նկեղեցացի թարգմանչի հետ, որ ս. Մեսրոպի առագոյն տշակերտներից էր, նորա մահից յետոյ ս. վսէփի հետ տեղապահ-վերակացու Հայոց եկեղեցւոյ, և ապա Կորիւնի պատմելով, շարչարանքի է Ենթարել Տիզբոնում հաւատի համար և «Խոստավանող» անուն ուռանգել: Բայց այդ մի բոլորովին ձրի Ենթադրութիւն որը հասկանալի գարձնելու համար պէտք կլինի Ե. որը առանց միջին շրջանի և մի քանի տասնեակ տարեթի երևակայել: Աւելի ընդհանրացած է այն կարծիքը, Է Մանդակունին Գիւտ կաթուղիկոսի եղքօրսրդին էր, ովհետև Փարպեցին իւր թղթի մէջ յիշում է մի ինչ որ քանելոյն Յովհաննու, Գիւտոյ կաթուղիկոսի եղքօրդոյ» մասին: Կարելի՞ է սակայն ընդունել, որ այդ անելի Յովհանը Մանդակունին եղած լինի և Վահան ամիկոնեանին ուղղուած թղթի մէջ հարկ նկատուի իւր ամանակակից և գործակից մեծանուն կաթուղիկոսին մնաչեցնել նորա հօրելքօր անունը տալով: Թող որ Փարեցու պատմածը նոյն Յովհանի մասին ամենեին չի էլ սմապատասխանում Մանդակունու հայրապետական իրքին և արժանեաց: Կմնայ ուրեմն խոստովանել, որ անդակունու նախ քան հայրապետութիւն վարած անքի և ունեցած ազգակցական կապերի մասին մենք մի տեղեկութիւն չունենք: Իմանում ենք միայն, որ շտամունեաց գաւառի Մախնատ գիւղից էր. իսկ Մանակունի անունը ցոյց է տուիս իշխանական ցեղից լիւլը: Փարպեցին նորա անունն առաջին անդամ տալիս է կուտոյ ճակատամարտի համար եղած պատրաստուեանց առթիւ, 482 թ.-ից, երբ նա օրհնում և քաջարիչ քարեմաղթութիւններով ճանապարհ է ձգում Պարոց գէմ աճապարող կարիճներին, որոնց և յետոյ՝ յաղանակով վերագարձած միջոցին, ընդունում է նոր օրհնութեամբ և գոհաբանական մաղթանքներով: Ապա Մանակունին ներկայ է լինում ներսէնապատի ճակատամարթին և իւր ազօթքով ու քաջալերական խօսքելով խրառում զօրականներին: Իսկ երբ Վահան շրջապատուում դուբինում Հաղարաւուխտի զօրքելով, նա ևս որոգայ!

մէջ է մնում և ուրիշների նմոն փախուսաի գիմած մի ջոցին՝ ձիուց վայր է ընկնում և կիսամահ գրութեան մուգուրս տարուելով՝ հազիւ ազատուսւմ։ Մէկ էլ այնա հետեւ հանդէս է գալիս նու Վահանի սպարապետուկան տանուտերական իշխանութեամբ Պարսկաստանից վերդարձած միջոցին, երբ եկեղեցական շուքով գիմաւորուէ նորան և դէպի Վազարշապատի սրբավայրերն առաջ նորդում։ Այստեղ յիշուում են առաջին անգամ, ո. Լուսաւորչի նշխարները, որ ուրիշ սրբութիւնների հետ դարձէին հանուել հայրենիք գարծող իշխանների հանդէպ, գործնով հաստատուում է մեր այն ենթագրութիւնը թէ նորա բերուել էին Թորդանից Դուենի ո. Գրիգոր եկեղեցու շինութեան ժամանակ և պահւում էին այս կաթողիկէում, որ Հայոց հայրապետութեան երկրորդ աթոռն էր։

Յովհան Մանդակունին, ինչպէս աեսնում ենք, գրիմանոյնափիսի յարաբերութեան մէջ է եղել Վահանանց հեռարարական ա. Յովհէփ և իւր ընկերներն ունեին Վարդանանց օրովլ։ Անշուշտ նորա կատարած գերը չէր առնանանակակուում հանդիսաւոր ժամերում քրիստոնէական հաւատոյ պաշտպաններին օրհնութիւն ու խրախոյս կարուգալով, այլ պէտք է ենթագրել, թէ նա մնացած ժամանակն էլ եռանդուն կերպով աշխատում էր արկութեան ու միաբանութեան ողին կենդանի պահել ապստամեթեր ների մէջ և եկեղեցւոյ հեղինակութիւնը գործ էր զնում ի նպաստ նոցա առաջ վարած դատին։ Նա և Խազարութեան տարիներում պէտք է որ նա պակաս բեզմնուազ գործունէութիւն ցոյց տուած չլինի։ Այն մէծ պատկառ ունըը, որ արտայայտում է Փարապեցին ամէն անգամ նորա անունը տալիս, և այն գովութիւնը, որ ընճայուում է նորան մեր բոլոր պատմիչների կողմից անխոտը՝ իբրև մի խիստ երախտաւոր ու մեծ արժանեալ տէր հայրապետի, արդիւնք են կարծես մի ընդհանուր դիտակցութեան, թէ նա շատ աւելի բան է արել, քուաւանդում է մեղ կցկտուր պատմութիւնը։ Յայտնի միայն, որ նա մի շարք բարեփոխութիւններ է մտցել մեր ամենօրեայ ժամերգութեան, մաշտոցի և պատարաւառատոյցի մէջ։ Նորա անունով կանոններ լիան պահուած

ւ կանոնագրքերում և նորան վերագրուում են մի նի թարգմանութիւններ, բաւական մեծ թուով ճառ ու խրատաքանութիւններ, որոնք պատուաւոր տեղ ըռնում մեր եկեղեցական գրականութեան մէջ, բայց տիկապէս այդ ճառերի վաւերականութիւնը, գրական պատմական արժէքը որոշելու համար դեռ մի լուրջ ևագատ է հարկաւոր, որ չի գտնուել: Պարզ է յամենին դէպս այն, որ Մանդակունին ո. Սահակի և ո. Մեռզի դպրոցից լինելով և նոցա գծած ուղղութեանը հեռացով՝ աշխատել է լրացնել նոցա ձեռնարկութիւնները եղեցական ներքին բարեկարգութեան նկատմամբ և ըրել այն խորթութիւններն ու զեղծումները, որոնք աք գործած պէտք է լինէին նախընթաց խառն ժամաներում և որոնց դէմ մասնակի յաջողութեամբ այն մաքառել էր նորա արժանաւոր նախորդը, Գիւտ: Թեսակէտից նա իրաւամբ համարուում է մեծ թարգամիչների գպրոցի վերջին հոյակապ ներկայացսւցիչը և նա ընդարձակ բարձնորոգչական գործունէութեան կիովովն ու մի քանի մասներում վերջնականապէս ձեռաւողողը, — կարելի է ասել այնպէս, ինչպէս Մեծն Վահ և Մամիկոնեան Մազդեզանց կրօնի դէմ մաքառման պարփում վերջնական յաղթանակ տանողն եղաւ և նստոնէութեան տիրապետութիւնը հայ երկրում առջտ ապահովողը:

Մանգակունին պէտք է որ նաև որոշ մասնակցուան ունեցած լինի Վահան Մամիկոնեանի շինարարուան մէջ, ինչպէս վկայում է յատուկ Յովհաննէս պատշիր: Փարպեցին Վաղարշապատի Մայր տաճարի մասն ասում է. «Ձոր հիմնարկեալ նորոգեաց մեծապայտուած շքեղութեամբ՝ զննացեալ գործ նախնեացն իւրոց, ոչ զօրավարն հայոց Մամիկոնեանն Վահան»: Իսկ նորա թիւն նայելով այդ հիմնարկութիւնը կատարուած կալի է համարել 487 թ.-ին, երբ նոյն լինքն Փարպեցին ոգաբարձու կարգուեցաւ Սրբավայրին և նորա հսկութեան ներքոյ հաւանականաբար տեղի ունեցաւ վենորոգութիւնը: Եթէ նա Վաղարշապատի կաթուղիկէն հանի նախնեաց դորժ է համարում, որ ինչպէս յա-

տուկ պարտք է գգում այն նորոգելու, այնպէս և բցառիկ իրաւունքներ է գործ դնում, յանձնելով սրբ վայրի վերակացութիւնը ում կամնար, պատճառը եւ այն ժառանգական իրաւունքներն էին, որ նոյն ահամար ունեցել էր Լուսաւորչի սերունդը, իսկ Վարդ Մամիկոնեանից յետոյ ստացել էր նորա օրինական ժառանգը Վահան։ ըստ այդմ և ս. Սահակ Պարթև նախնին մէկն էր, որ իրենից առաջ նորոգել էր նոյն տաճարը՝ որովհետեւ ասուած է թէ «Հիմնարկեալ նորոգեաց», իւ լուսնք ունենք ընդունելու, որ նախկին անշուք և իւ խուլ շենքը վերացուել, տեղն ամբողջութեամբ նոր կառուցուել, ուրիշ խօսքով Ս. Էջմիածնի այժմեան Մտաճարը, որի հիմնական նորոգութեան մասին յետադրերից այլ ևս ոչ մի յիշատակութիւն չունինք և իւր յատակագծով յիրաւի հայկական ճարտարապետ թեան հնագոյն տիպն է ներկայացնում, կառուցուել որչափ վերաբերում է շինութեան բուն զանգուա (առանց գմբէթի, զանգակատան և այլ յաւելեալ սերի), Մեծն Վահանի խնամբով, Յովիտն Մանդակու օրհնութեամբ և Ղազար Փարպեցու վերահսկողութեա Սակայն յետագայ ժամանակների պատմիչների առ Վահան ուրիշ շատ շինութիւններ և նորոգութիւններ արել է՝ ծածկելով այն աւելի մունքները, որ գործուել նախընթաց պատերազմների միջոցին, և թուում է այս շրջանի մի ուրիշ փառաւոր յիշատակարան ուն մինչեւ այսօր կանգուն մնացած, որ վկայում է Վահ Մամիկոնեանի և Յովիտն Մանդակունու ազդեցութեա շինարարութեան գործի ընդուրձակ ծաւալ ստանալու զանազան նախարարութեանց սահմաններում ծազկելո Տիկորի հոյակապ, գժբաղդաբար այժմ կործանուելու եկեղեցին է այդ, որից աւելի հին ամբողջական շինու գժուար թէ գտնուի մեր երկրում և որի կիսեղծ ար նագրութեան համաձայն հայոց Յովիտն հայրապետի ջոցաւ է կառուցուել այն՝ Սահակ Կամոարական իշխ նի օժանդակութեամբ։ Արձանագրութեան մէջ կան ն գժուար կարգացուող ուրիշ լշխանների անուններ, որ մին կարող է Վահանը լինել։ Ոչինչ չե արգե

յա ընդունելու, որ այս տաճարի կառուցանող Յովհան պրապետը Մանդակունին էր, իոկ Սահակ Կամսարական մն այն և բանելոյ Արշաւրայ որդին», որին Վահան ու քեշխանների հետ նիփորի մօտ ուղարկեց, նորտ հետ թաճ բանակցութեան սկզբում, և որ յիշուում է 506 բաժն Բարգէն կաթուզիկոսի թղթում իրու «Արշարունց տէր», պայազատած լինելով ուրեմն, իւր երկացան եզրայըների՝ ներսէնի և Հրահատի մահից յետոյ Կամսարական տան իշխանութիւնը:

Ե. Վահան Մամիկոնեանի մարզպանութիւնը. Հայոց թղեցու և երկրի վիճակը նորա օրով:—Եթէ և Վաղարշպատի կաթուզիկէի շինութիւնը Վահան իբրև Մամինեանց տանուտէր էր սկսել՝ Դուլինի և ուրիշ տեղերի ութիւնները նա արաւ հաւանականաբար արդէն իբրև մըողջ երկրի եշխան, մարզպան կարգուելուց յետոյ: Թուականին տեղի ունեցաւ այդ կարգումը՝ պարզ պանի չէ: Փարպեցին պատմում է, որ երբ Վահան պատվակ ու փառքով Պարսկաստանից վերադարձաւ՝ ետևից կան անունով մի նոր պարսիկ մարզպան եկաւ, որ որան շատ էր սիրում ու պատուում և նորա արժանիքը, արարքներն ու վայելած յարգանքը՝ տեսնելով՝ այն պահացութեան յանդեց, որ այս երկիրը նորանից յարքը կառավարիչ ունենալ չէր կարող: Ապա նա շտապեց իսուրդաճութիւններն այս նկատմամբ Վաղարշը թառութիւն ներկայացնելու, որ և խորհրդակցելով իւր աշխանու հետ՝ շատ բանաւոր գտաւ նորա առաջարկը, որվարտակ ուղարկեց և Վահանին Հայոց աշխարհի մարդան կարգեց: Սակայն Սեբէոս, Փարպեցու պատմութեան պատմակաղը և յետագայ շրջանի համար ամէնից արժագաւատ պատմիչը՝ Վահանին մարզպան եղած է ցոյց ալիս Կառատի միջոցաւ: Քանի որ Վաղարշի թագաւորութիւնը կարճատե եղաւ, 488 թ.-ին նորա գահից հուելով և Պերողի որդի Կառատի թագաւորելով, անհանական չէ, որ նոյն այդ թուականին Վահան մարզպան սրգուած, և այդ պատճառով Սեբէոս, որ Վաղարշին մնանքին չի յիշում, Կառատի թագաւորութեան հետ պաճ լինի Վահանի մարզպանութիւնը: Մարզպան

թեան հրովարտակն ընդունելու առթիւ հանդէս է ու
նորից Յովհանն Մանդակունին և մի ոգեսրուած քա
է ուղղում խուռաներամ բազմութեանը, որ բերկ
լուրին առնելուն պէս գունդագունդ Դուինի մայր տան
էր գեմել, գոհաբանութիւն մատուցանելու Նրկնաւո
Այդ քարոզը, որ Փարաբեցին, հարկաւ իւր խօսքն
յառաջ է բերել պատմութեան մէջ՝ զուր տեղը հա
րուել է շատերի կողմէց անհամապատառիան Ման
կունու հանձարին և ըուպէս պահանջին։ Ընդհակառակի
Դրից վերցրած շատ յարմար ընաբանով և դիպող
նակներով կենգանի արտայայտութիւն է գտնում։
տեղ այն ոգեսրութիւնը, որ պէտք է զգային քրիս
նէութեան հաւատարիմ պաշտպանները՝ եկեղեցւոյ ։
Թանակը տեսնելով և զգալով, թէ ինչպէս «զթագա
քաղցրացոյց եկեղեցի, զգազանս ընտելացոյց . . . զթի
միս ճշմարտութեան ամաչեցոյց»։ ուստի և ուսուցան
է՝ ոչ միայն կրկին սիրով սիրել այդ եկեղեցին, այլ և
եկեղեցւոյ քարոզած սիրոյ մեծ օրէնքը գործ գնել ։
ըեալ ազգակիցների նկատմամբ, որոնք թշնամանել
եկեղեցին, սրբութիւնը պղծել, մոխրատուններ ։
ճշմարտութիւնը մոռացել. մոռանալ նոցա վատ ար
քը, իրենց ցոյց տուած բարոյական զօրութեամբ ։
տկարտութիւնը բաւնալ, հրաւիրել նոցա եկեղեցւոյ
բախը և զղջման արտասուօք նոցա յանցանքը քաւ
միջոց ընծայելով՝ կազմել վերստին նոցա հետ մի
Քրիստոոկ՝ վերջին երանաւէտ կոչման և երկնային ժամ
գութեան արժանիք։

Յամենայն դէպս Յովհանն Մանդակունին կենդա
ուրեմն և գործակից Վահաննին նորա մարզպանուլ
ժամանակ-մինչև երբ, դժուար է ասել։ Եթէ վերե
շուած արձանագրութեան համաձայն ընդունենք, ո
թիշ շինութիւնների հետ Տիկորի եկեղեցին նորա ձև
տուութեամբ է կառուցաւել, կարելի է ենթադրե
բաւական ժամանակ պէտք է անցած լինի, մինչև
խոշոր շինուածները գլուխ։ գային։ Այլ և այն հա
մանքը, որ մեր պատմիչները հ-ն տարուայ հայրապէ¹
միայն վերագրում են Մանդակունու յաջորդ

աթուղիկոսին, իսկ ուա, ֆնապէս կտեսնենք, 506 թ.-ին որել է իւր նշանաւոր ժաղովը, իրաւունք է տալիս ակունաւ կաթուղիկոսութեան տարիները մինչև Ե. վերջերը ձեւոււ։ Ստոյգ կտրելի է համարել այն, որ Կահանան մարզպանից շատ առաջ պէտք է անած լինի, որովհետեւ Փարապեցին վերջինին ուղած էղթի մէջ այնպէս է խօսում ժամանակակից կանոսի մասին, որ այդ կաթուղիկոսը Մանդակունին չի կարող։ Ստակայն մենք ոչ Փարապեցու թզթի դրուժամանակը և ոչ Վահանի մահուան տարին գիծամանակակից մի առորի պատմագրի հազորգած կութիւններից երկում է, որ Վահան մի անդամ ևս աւմբութեան գրոշ է բարձրացրել Կաւատի օրով, նշու մնելը նորոգուեցան քրիստոնէութեան դէմ և նկները փորձեցին նորից կրտաւուններ շնել Հանում։ 496 թ.-ին Կաւատ գահից ձգուեցաւ և երեք տարի յետոյ, 499 թ.-ին, Հեփթաղների օգանակը կարողացաւ վերահաստատու ել իշխանութեան Այս առթիւ տեղի ունեցած ներքին պատերազմների նա հաւանականաբար Վահան նոյն կերպ անկախ իշխանուն էր վարում, ինչպէս երկու դար առաջ իւր հաւ Մանուել Մամիկոնեանը, և որովհեաւ 502 թ.-ին որպազմ ծագեց պարսիկների և յայների մէջ այն պատւ, որ Յունաց կայսրը հովանաւորում էր հայերին՝ ի է կարծել, թէ Կաւատի գահի վերայ հաստառուց յետոյ իսկ Վահան շարունակեց կայսեր օգնութեան կամութիւնը, մինչև որ 506 թ.-ին խաթիւն կնքուեցաւ երկու մեծ պետութիւնների մէջ ապահով իւր նախկին սահմանները պահելով՝ նկները կատարեալ տէր գարձան նորից Հայաստանին։ ի է, որ պատերազմի ժամանակ Յունաց բաժնում Միջադեւքի Ամիդ բերդաբազարը երեք ամիս պահցաւ և 503 թ.-ի սկզբին առնուեցաւ պարսիկներկ այս կուսի մէջ մասնակցում էր Հայոց գունդարք Մամիկոնեան զօրավարի առաջնորդութեամբ և Փարապեցու թուղթը, որ գրուած է Ամեղան նենց այս ժամանակում չէ գրուեւ։

մազասապ Մամիկոնեան իշխանը, որ պէտք է Վահանին
հասցնէր թուղթը՝ պատերազմի պատճառով Հայոց գնչի
հետ Ամիդ չէր եկել։ Այդ դէպքում Վահան կենդան
կլինէր դեռ ևս 503 թ.-ին և որովհետեւ 506 թ.-ին գրած
Քաբէն կաթուղիկոսի առաջին թղթում Վարդ Մամի
կոնեան յիշուում է տուաջին տեղը, բայց առանց «մարզ»
պանս տիտղոսի, մինչ Սեբէս և այլ պատմիչներ յիշուա
են, որ նա իւր եղբայր Վահանից յետոյ և տարի մարզ
պանութեան իշխանութիւն է վարել, կարելի է մտածել
որ Վահան վախճանել էր պատերազմի միջոցին, իսկ իազ
զաղութիւն հաստատուելուց յետոյ նորա տեղը նոյն
506 թ.-ին մարզպան կարգուեցաւ Վարդ, որ Յունաց
կողմից ևս պատրիկութեան տիտղոս էր ստացել։ Մեր
պատմիչներից ոմանք յիշում են նաև, թէ Վահան զղաց
լանս արգելականս արտօր—Երր և ինչպէս, յայտնի չէ։

Նատ ցաւալի է հարկաւ, որ այս նշանաւոր մարզ
գու, ինչպէս տեսնում ենք, բազմակողմանի դորժունէուն
թեամբ հարուստ մարզպանու թեան շրջանը պատմութեան
նիւթ չի գարձել։ Դորա փոխարքէն նոյն շրջանի Հայոց
եկեղեցական ներքին կեանքի մասին խիստ հետաքրքրա
կան տեղեկութիւններ է հազորդում Դազար Փարապետ
վերև յիշած թուղթը։ Այդ ինքնատիպ յիշատակարան
մի յառաջաբան ևս ունի, որ աւելի է պարզում նոր
գրութեան հանգամանքները։ Իմանում ենք այդպիսով
որ Վազարշապատի Կաթուղիկէի հոգալարձու կարգուե
լուց յետոյ Փարապեցին շատ նախանձորդներ և թշնամի
ներ է ունենում։ Սոքա աշխատում են նաև միջնորդնե
րով ու ընծաներով Վահան Մամիկոնեանին գրաւել ու
սրբավայրը նորա ձեռքից առնել, բայց երբ չի յաջողութ
հետամուտ են լինում բամբասանքով ու զրպարտութիւն
ներով վարկաբեկ անելու նորան, մինչև որ մի դժբաղ
դէպք՝ եկեղեցւոյ փայտակերտի այրուիլը հրդեհից, նացա
ձեռքին գէնք է գարձնում մեղադրանքն այնտեղ հասցնե
լու, որ Վահան ևս երես է թեքում նորանից և նա հա
լածուում է, մերկ ու անարդուած թողնում հայրենիքը,
քնում է Ամիդ քաղաքը և այնտեղից թուղթ գրում մարզ
անին արգարանալու համար։ Առանձին ուշադիմ ուշադիմ

թժանի է այստեղ այն պայքարը, որ մզուռում էր Ղա-
ռքի նման յունական կրթութիւն ստացած եկեղեցա-
վների և տգէտ աբեղաների մէջ։ Ղաղար յիշում է մի
ոք անուններ՝ Տովսէս փելիստիայ, Տէր Խոսրովիկ, Աք-
րիամ և պիտիոպոս, որոնք յայտնի էին իրենց գիտու-
թամբ, ուուրբ վարքով, արժէքաւոր գրուածներով, բայց
անը հարածանքի էին ենթարկուել այդ աբեղաների կող-
ից, մինչ այն աստիճան, որ նոցանից մէկի ոսկորները
իրեղմանից հանել, ջուրն էին թափել։ «Թարգման» ա-
ռնը, որ իրենց վերայ կրել էին Ե. դարի պարծանք կազ-
իկ բոլոր հայրերը՝ թշնամոնքի ու ատելութեան նշա-
ռքան էր նոյն աբեղաների բերնում։ Կոյր նախանձով
եցուած սոքա չէին կարող տանել այս կամ այն լուսա-
նք անհատի վերայ երևեցած ակներք առաւելութիւն-
երը և գժեազդաբար յաջողում էին բանսարկութեամբ
ոց դէմ շարժել տգէտ ամրոխը։ Եւ այդ աբեղաների
զգեցութիւնն այնքան զօրեղ էր, որ ժամանակակից կա-
ռւզիկոսը (Երեկի Բարգէն) չի վստահանում պաշտպա-
նչ Ղաղարին նոցա մեղադրանքների դէմ, թէպէտ, ինչ-
էս երեսում է սորա բացատրութիւններից՝ չնչին ու
ւելի քան անհիմն էին այդ մեղադրանքները։ Մեղա-
ռում էին ի միջի այլոց, թէ Ղաղար աղանդաւոր է, և
ոգ առիթ է ընծայում նորան մի քանի խիստ կարևոր
կնարկներ անելու «Հայոց աշխարհի աղանդի» մասին, որ
չել ենք արդէն առաջ՝ Մծզնէից աղանդի ծագումը բա-
ստրելիս, և որ ցայց է տալիս, թէ Ղաղարի ժամանակ
ոգ աղանդը շատ տարածուած է եղել հայերի մէջ։ Նա
ուրանում մինչև իսկ, որ իրեն յայտնի են եղել աղան-
դուուներից ոմանք. բայց առարկումէ թէ իրաւունք չի
սմարել իրեն դատ բանալ նոցա դէմ, այլ պւետարանի
ոմաձայն թողել է, որ որոմն ու ցորենը միասին աճեն
նչեւ հունձի ժամանակ, և միակ արդար Դատաւորը դա-
ստան տեսնէ։ Եւ Փարպեցու ամբողջ թուղթը մի կեն-
տնի վկայութիւն է։ որ չնայելով և այն արեանն ու քրանցը,
նոցա հաւատարիմ աշակերտները մի քանի տասնեակ
ոքիների քնթացքում թափեցին նոյն սերմերն ան

լու համար, որոմ խիստ շատ կար գեռ գարե վերջին պահը փոթորկոտ հայրենիքում և կեանքի բոլոր ասղարէզներս ուռնամնալով՝ սպաւնում էր այն հոկայական ջանքերը պտուզները խեղդել։ Բայց նոքա չխեղդուեցան. որոմը պահած չացաւ հետզհետաէ, և նոքա աճեցին. որտվինեան առջ սերմից էին և ամուր արմատ էին ձգել բարեբեց հողի մեջ։



Գ Լ Ո Ւ Խ Ժ.

Հայոց եկեղեցւոյ մասնակցութիւնը դաւանակա վէճերի մէջ եւ բռնած դիրէը. Դուինի ժողովները

Ա. Նիստորական եւ Քաղկեդոնական վեները:—Ե. Պէտք Զ. դար անցման հետ զգալի փոփոխութիւններ տեղի ունեցան Հայոց եկեղեցւոյ արտաքին ու ներքն յարաքերութիւնների մէջ։ Մինչև այդ մեր եկեղեցւոյ ներկայացուցչների բոլոր ջանքն էր եղել, ինչպէս առ սանք, մի կողմից քրիստոնէութիւնը պաշտպանել օտար կրօնի նուաճողական ձգտումների դէմ, միւս կողմից ներգին կազմակերպութիւնն առաջ տանել՝ ընդհանուր եկեղեցւոյ մէջ մշակուած քրիստոնէական գիտութիւնը իւրացնելով և ժողովրդի հոգեւոր ու բարոյական կրթութեան համար սորու ընձեռած միջոցները մեր կեանքին յարմարեցնելով։ Դառն իրականութեան ստիպովական պահանջների չնորմիւ նոքա աղաւա ժամանակ ու յարմարութիւն չէին ունեցել զբաղուելու այն բարդ գաւանական խնդիրներով, սրոնցով ալեկոծուած էր Ե. դարու ամբողջ քրիստոնեայ աշխարհը։ Նոքա առաջնորդուել էին այն համոզմունքով, որ հաւատույ էական կէտերը մի անգամ ընդ միշտ ընդգծուած ու որոշուած են նիկիութիւններական ժողովի մէջ, և հայերն ընդունելով այդ պարզ հաւատուքը Մեծ Լուսաւորչի որդու ս. Արքստակէսի ՚Շացաւ՝ մի հոգի և մի շունչ եկեղեցւոյ ընդհանրութեան

աղաքար, անաղարտ էին պահում այն և պէտք է պահէին յառաջանան: Կ. Պոլսում և Եփեսոսում ժողովուած հայրերն այդ հաւատքի վերայ նոր բան չէին աւելացրել, այլ թայն աւելի պարզաբանել էին և ապահովել զանագան քաջանգանքաւոր մոլորութեանց դէմ, որոնցից և գգուշանալ պահագ էր, ինչպէս որ տեսանք՝ իւր ժամանակին զգուշել էր և յետորդներին ճանապարհ ցոյց տուել լուսաւորչի վերջին ժառանգը, Ս. Սահակ: Թէ սորա և իւր արծակիցների ձեռք առած խիստ միջոցները և թէ մասաւանգ քաղաքական հանգամանքները թոյլ չէին առւել, որ այն մոլորութիւնները մուտք գործեն հայերի մէջ, և քակ աղանդը, որ այստեղ զեր էր կատարել և շարուահում էր կատարել, ոչ մի որոշ առջնութիւն չունէր ամանակահից միւս եկեղեցական աղանդների հետ և շուրջ էր վարդապետական հիմունքներից: Սակայն վազ թէ ուշ հայոց եկեղեցին մի հաշիւ պիտի տեսնէր նոցածեա և որոշ գելք բռնէր գուրմն արծարծուող գաւանական խնդիրների նկատմամբ, և ահա ամէնից առաջ նորա գէմն է ելնում անմիջական շրջապատում սպառնական ցոյց ստացած նեստորականութիւնը:

Կ. Պօլսոյ պատրիարք Նեստորի անունով այդպէս կը ցուող աղանդը, որ գատապարաւ եցաւ Եփեսոսի տիեզերական ժողովում, ծագումն է տուել իսկապէս Անտիոքի գպրոցից, որի գլխաւոր ներկայացուցիչներն էին մեր առաջ յիշած Դիոդոր Տարսոսնացին և Թէոդորոս Մամեսացին: Վէճը սկզբում ժամանակի քրիստոնէական գիտութեան երկու գլխաւոր կեն գրոնների՝ Անտիոքի և Աղէքսանդրիայի մէջ էր, որոնք տարբեր ուղղութեամբ և առբեր կերպով էին բացատրում Քրիստոսի մարդկարութեան կործութզը: Այն հարցին, թէ Քրիստոսի անձի մէջ կատարեալ աստուածայինն ու կատարեալ մտրգկայինը ինչպէս էին միացել, Անտիոքացիք, ո. Գրքի մեկնութեան և կիելիսովիայական դատողութեան վերայ հիմնուելով՝ պատասխանում էին, թէ աստուածայինն այնքան բարձր է և հեռու մարդկայնից, որ նոցա մէջ իրական միութիւն լինել չի կարող, այլ մարդ Յիսուսի մէջ աստուածայինը ընակութիւն հաստատելով՝ աստուածանման է դաշնաւութեան

Նորա շարժումներն ու գործերը. իսկ Աղեքսանդրացի հիմք ընդունելով հաւատը դէպի Քրիստոսի միջոցաւ աեզ ունեցած փրկագործութիւնը, աւանց որի քրիստոնէութիւնը կորցնում էր իւր իսկական արժէքը, առարկուէ էին, թէ այլ ևս ի՞նչ փրկագործութիւն, եթէ առառաւ ծային ու մարդայինը կատարեալ կերպով չեն միացեալ այդ միութեան շնորհիւ կատարելապէս սրբուած ու առ տուածացած Ցիսուսի մարմինը տանջանք ու մահ կե խաչի վերայ: Աղեքսանդրիոյ պատրիարք Կիւրեղը նախագահելով Նվիեսոսի Ժողովին՝ ընդունել տուաւ վերջին հայեցակէսն իբրև անհրաժեշտ հետեւութիւն նիկեական գալ ւանութեան, և նեստոր ու իւր հետեւողները բանագրուեցան: Բայց Անախիպացիները հեշտութեամբ տեղի չտուին թէպէս 433 թ.-ին նոքա որոց համաձայնութեան եկան Կիւրեղ Աղեքսանդրացու հետ, որով Նվիեսոսի Ժողովը ճանաչեցին և ի թիւս այլ որոշումների նեստորի դէմ արձակած դատավճիռն ընդունեցին, սակայն քանի որ բանագրանքից տղատ էին մնացել Անտիոքի գպոցի բաւ ներկայացուցիչները՝ Դիսղոր ու Թէոդորոս, շարունակուել էին աւելի եռանգուն կերպով տարածել սոցա գրուածներն ու սոցա ուսումը: Խոկ ծայրայեղների մի խումբ ամենեին համակերպել չկամեցաւ և պետութեան կողմէ հալածուելով՝ տպաստան որոնեց հետաւոր արևելքում ուր և հետամուտ եղաւ պահպանելու գուաւ նեստորականութիւնը և նորանոր հետեւողներ գտնելու:

Միւս կողմից հանգիստ չէին նոտած Կիւրեղ Աղեքսանդրացու կուսակիցները: Անտիոքացիների քօզարկեալ գործունէութեան հակառակ՝ նոքա բացարձակ կերպով դատապարտում և հերետիկոսական էին անուանում այն ամէնը, ինչ որ կատ ունէր Անտիոքի ուսուման հետ, ու է բաժանում կամ երկուութիւն էր գնում Քրիստոսի մէջ: Ծայրայեղութիւնն այնտեղ հասաւ, որ Եւափքս անունով Կ. Պոլսում և պալատում մեծ յարգ վայելող մի վանական սկսեց քարոզել, թէ մարդկային բնութիւնը ըոլորտ գին ծուլում անհետանում է Քրիստոսի աստուածային առնութեան մէջ և մնում է միայն մի աստուածային ընու-

“ ո՞րին իսկ մարմինն իւր ըոլոր շարժումներով աս-

սուածային գարձած։ Եւտիքէսի գլմ ելաւ Կ. Պոլսոյ լուցիանոս պատրիարքը։ Իսկ նոցա երկուսի վերայ իբրև առաւտոր հանգէս եկաւ Կիւրեղի յաջորդ Աղեքսանդրիս փոսկարոս պատրիարքը, որ մի նոր ժողով գումարել ուաւ Եփեսոսում 449թ.-ին, Դ. աիեկերական ժողովի սուտատած գաւանութիւնն իբրև Հիմք ընդունելով և մէն նորութիւն դատապարտելով՝ հարկադրեց Եւտիքէն յետ առնել իւր քարոզածները և այդպիսով ներումն անել։ Իսկ Փլաքիանոսին բանագրել ու աքսորել տուաւ զնե երկու ընութիւն ուսուցանողի։ Սակայն Լեռն Ա. շապչ, որի Փլաքիանոսին ուղղած՝ նորան արդարացնող Եւտիքէսին գատապարտող թուղթը, այդ ժողովում հարգացին և ոչ մի պահանջին ուշադրութիւն գարձնել կամնցան, «Աւազակաց ժողով» անուանեց այն և յաջուեց նորա որոշումներն ի չեք դարձնել։ Ապա լուրոր վէսքին վերջ գնելու նպատակով 451-թ.-ին մի մեծ ժողով դումարթուեցաւ Քաղկեդոնում, որ համարուեցաւ Դ. աիեկերական ժողով և հակառակ ժողովականների մեծամասնութեան համոզումներին, տեղի աւալով միայն Հռոմի պահանջների առաջ՝ գաւանութեան Հիմք ընդունեց Լեռն Ա. ի յեշեալ թուղթը (մեզանում այդպէս կոչուած Լեռնի պատմաբը) և որոշեց ճանաչել «մի Քրիստոս յերկուս ընութիւնս»։ Թէպէտ այդ որոշումը երբէք հաշտեցնել չեք կարելի Կիւրեղ Աղեքսանդրացու վարդապետութեան հետ, ոքի նշանաբանն էր «Մի Քրիստոս, կամ մի ընութիւն յերկուց ընութեանց», այնուամենայնիւ ժողովը Դ. աիեկերական ժողովի որոշումներ հաստատում ու Կիւրեղ Աղեքսանդրացու վարդապետութիւնն ուղղափառ էր ճանաչում, Դիսուկորոսին էլ ոչ իւր մոլար ուսման, այլ իւր թէ ինչ ինչ վարչական զանցառութեանց համար աթոռուից զրկում։ ապա նորա կողմնակիցներից շատերին Եփեսոսի Բ. ժողովին տրամադօրէն հակառակ որոշումների տակ առորագրել տալով, Նեսոտորին ու Եւտիքէսին նոր ի նորոց ըանադրելով՝ Ենթադրում էր թէ Կյաջողի ամէն երկպառակութիւն ծածկել և ընդհանուր Եկեղեցւոյ մէջ խաղաղութիւն վերականգնել։

Էնդհագառակն նոյն այս ներքին հակասութիւննեւ

քով լի Քաղկեդոնի ժողովը պատճառ գարձաւ քըիս
Նէական եկեղեցին ընդ միշտ բաժան բաժան անել
Նորա սրոշումները զօրեղ ընդդիմութեան հանդիպե
Նախ Երուսաղէմում, ապա Եգիպտոսում. և կայսեր
կան կառավարութիւնը ստիպուած էր նոցա գործադ
տալու համար զէնքի դիմել և մեծ արիւնահեղութիւնն
անել: Ընդդիմութիւնը սակայն քանի գնաց սաստկաց
արեւելքի բոլոր նշանաւոր աթոռները, նոյն իսկ Անտիո
մի բնութիւն դաւանողների ձեռքն անցան, և սոցա կող
այնչափ զօրացաւ, որ Զենոն կայսրը խոհեմութիւնն
մարեց 482 թ.-ին Կ. Պոլսոյ Ակակիոս պատրիարքի թել
գըութեամբ «Հենստիկոն» կոչուած մի հրովարտակ հր
տարակել, որով բնութիւնների մասին վիճելն արգելուա
էր, առաջին երեք տիեզերական ժողովների ուսուց
դաւանութիւնը միայն ուղղափառ ճանաչուում և նոր
նից գուրս ամէն նորութիւնն դատապարառուում: Այդու
սով լուելեայն դատապարառուած էր լինում Քաղկեդ
դաւանութիւնը. և թէպէտ հռովմի պապի մերժեց և
նոտիկոնը և առժամանակեայ բաժանումն յառաջաց
արեւմտեան և արեւելեան եկեղեցիների մէջ, բայց Զեն
յաջորդ Անաստաս կայսրն ևս շարունակեց պահել և
դրութիւնը և մի բնութեան ուսումը գարձաւ տի
դաւանութիւն Բիւզանդական կայսերութեան բոլոր սւ
մաններուում: Միենոյն ժամանակ Զենոն կայսրը աւե
էր ծայրայեղ Անտիոքացիների վերջին կայանը կայսեր
թեան մէջ՝ փակել տալով 484 թ.-ին Եղեսիայի դպր
և հալածելով այնտեղ բոյն դրած նեստորականներ
Սոքա անցան Պարսից Կողմը և կենդրոն դարձնելով Ա
թինը, ուր եպիսկոպոս եղաւ մեր վերև յիշած Բարձու
ասորին, սկսեցին եռանդով տարածել իրենց ուսու
Պարուկաստանի զանազան կողմերում բնակող քրիստոնէ
ների մէջ: Նեստորականութեան պաշտպան հանդիսաւ
նաև Սելեկիայ Ակակիոս Եպիսկոպոսը, որ համարուուում
Պարսկաստանի քրիստոնեաների կաթուղիկոս և որի
ժողովը Քաբէոս 499 թ.-ին մի ժողով գումարեց Սելեկի
ամ և նեստորական ուսումն իբրև պարսկական ե

“շտօնական դաւանութիւն ընդունել տու

Խուման և Ակակիոսն էլ, որ մի ժամանակ մըմնանց սուակորդներ էին եղել և երկար վէճ վարել, եկեղեց համարան վարդապետներ հաշակուեցան, ի թիւս ոնք Անտիռքացիների՝ Դիոկոսի, Թէոդորոսի ու նեսէ: — Անա այսպէս էր գրութիւնը Զ. դարի սկզբին,

Հայոց եկեղեցին հարկադրուեցաւ ուշադրութեան նել, որ այլ ևս գաւանութեան միութիւն չկար Ընդդրական եկեղեցւոյ մէջ. Բիւզանդական կայսերութեան արձակ սահմաններում տիրում էր մի բնութեան ու մը՝ ըստ Հենոսիկոնի տրամադրութեան. Հոռվմում և ա եկեղեցական իրաւասութեան ենթաքուած քրիսնեայ արևմուտքում պաշտպանուած էր Քաղկեդոնի լովի հաստատած երկու ընութեան ուսումը. իսկ ըսկաստանում ապրող խառն ասորի և պարսիկ քրիսնեաները նեստորականութիւն էին ընդունել: Պէտք էր ոչել, թէ որք կողմը ըսնել:

